



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՅՈՎԱԷՓ ԷՍԿԻՃԵԱՆ

**ԱՆՎԵՐՋԱԿԷՏ
ԱՌՃԱԿԱՏՈՒՄ
ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԻՆ ՀԵՏ**



**ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ «Վ. ՍԵԹԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՐՆ
ՊԵՂՈՒԹ
2016**

**ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՐՁԱԿ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ա. ՄԱՍ

- «ՅԱԻԵՐԺԻ ՃԱՄԲՈՐԴ ՀԱՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝
ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԵՐԹԻՆ»
- «ԽՈՒԼԵՐՈՒ ԱՆՀԵՏԵԱՆՔ ԵՐԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝
ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԵՒ ՉՈՀԻՆ ՄԻՋԵՒ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍԻ Ա. ԲԱԺԻՆ

	Էջ
1.- Երախայրիք	11
2.- Ձօն մեկեւաս Մելքոն Յակոբեանին	13
3.- Երկու խօսք՝ Հրատարակութեանս նպատակին մասին	15
4.- Կենսագրական գիծեր	17
5.- Փոխան արժեւորումի (Տոքթ. Թ. Թորանեան)	19
16.- Հայրենահանման դարադարձի մարտահրաւերները	25
7.- Գիր օրհնութեան եւ գնահատանքի Արամ Ա. կաթողիկոսէն	34
8.- Մաղթանք Վերամբարձ՝ Արամ Ա. կաթողիկոսի օծման առթիւ	37
9.- Նամակ Էօզալին՝ երախտագետ աշակերտէն	43
10.- Անմեկնելի Ոգի Հայկեան	49
11.- Բաց նամակ՝ Սիլվէյման Տեմիրելին	53
12.- Ճանչնանք հանճարեղ տիեզերագետ գիտնականը՝ Գրիգոր Գուրգադեանը	61
13.- Վարչապետ Էրտողան՝ պատմութիւն նենգափոխող քաղաքագետը	67
14.- Ճատրակային Թռիչքով գերպետութիւն կերտող հերոսներուն	77
15.- Ծառայական յաղթերթի ռահվիրայ Արամ Ա. կաթողիկոսի ընտրութեան 10-ամեակին	83

16.- Խոհեր՝ Հրանդ Տիկի անաւարտ երագին հետքերով	89
17.- Յաւերժական խորհուրդ Հայաստանի	92
18.- Յո՞ Երթաս մենատեր դեմոկրատ	99
19.- Պոռթկում ու Լզովք՝ Աղթամարի Սբ. Խաչ տաճարը վերստին խաչողներուն	111
20.- Մայիսեան խոհեր ազգակերտումի	114
21.- Արցախեան հերոսամարտին նուիրուած ժապաւենը դիտելէ եւ Երեւանի դէպքերուն հետեւելէ ետք	123
22.- ՀՅԴ պատանիներու խոստում-երդումը՝ Նախադուռը Դաշնակցութեան մաքրագտող տաճարին	129
23.- Ոգեկոչում Եղեռնի 96-ամեակին առթիւ	137
24.- Խորհրդածութիւններ՝ «Հրազդան» մարզադաշտի Սեմին	141
25.- Թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս նշանակուեցայ Լիբանանի մէջ պետական երդուեալ թարգմանիչ	147

Ա. ՄԱՍԻ Բ. ԲԱԺԻՆ

**«ԽԱՆԱՍՈՐԵՆ ՍԱՐՏԱՐԱՊԱՏ՝ ՀԱՅ ՈԳԻԻ ՎԵՐԱՀԱՐԹՆՈՒՄ
ԵՒ ԴԱՐԱՒՈՐ ՍՏՐԿԱՑՈՒՄԷ ԱՀԱՏԱԳՐՈՒՄ»** 155

26.- Վերյուշերու անկասելի գարթնում՝ կիսափուլ շէնքի մը առջեւ	157
27.- Ուխտագնացութիւն՝ Նիկոլ Դումանի ծննդավայր Ղշլաղ (Ծաղկաշատ) գիւղի տուն-թանգարանը	161
28.- Հրաչ Փափագեան Նեմեսիսին ճակատագրական փրկարար միջամտութիւնը	171
29.- Երեւանի Մաշտոց պողոտային վրայ՝ «Սուլթան Խորոված» ըստորանը	174
30.- Հայութիւնը որո՞ւ պէտք է ապաւինի	177
31.- Նոր սերունդին փոխանցուած պատգամ	182
32.- Հայ ճեմարանէն վերյուշեր	186



Յակոբ Աւետիս Էսկիճեան
(1897 - 1973)
Ծնած է՝ 1897-ին, Մարաշ
Մահացած՝ Պէյրուք 1973-ին

ԵՐԱՆԱՅՐԻՔՍ ԿԸ ՆՈՒԻՐԵՄ

Հօրս՝ Յակոբ Եսկիճեանի, լոյս յիշատակին, որուն կեանքի միակ երազն էր ու միաժամանակ փառասիրութիւնը, Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի հիմնած Հայ Ճեմարանէն՝ իր որդին ընթացաւարտ տեսնել, եւ Յանձնառու Հայը ողջունել:

Յ. Է.

28 Օգոստոս 2016

ՉՕՆ՝

Դամասկոսի «Միացեալ Վարժարան»-ի մտերիմ դասընկերոջս՝ Մելքոն Յակոբեանին, որուն անանձնական քաջալերանքին, անսակարկ կամեցողութեան եւ սիրական մեկենասութեան կը պարտիմ՝ ներկայ գրական ստեղծագործութեանս լոյս ընծայումը:

Խորագգած շնորհակալութիւն Մելքոնին եւ յարատեւութիւն՝ իր հաստատած «Սօսի Յիշատակի Ֆոնտ»-ին:

Յ. Է.

28 Օգոստոս 2016

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ՝ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՍ ՆՊԱՏԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Սին փառասիրութենէ հեռու, գրական անդաստանէն ներս մուտք գործելու փորձէ մ'անդին, բարոյական պարտաւորութիւն մը իրագործելու կը միտի՝ արձակ թէ բանաստեղծական գրութիւններուս հրատարակութիւնը:

Նպատակս՝ պատանեկան ու երիտասարդական տարիքի անկեղծ ներշնչումներս, ջինջ ապրումներս, մարդկային սպասումներս, յուսախաբութիւններս, մտորումներս կամ յուշերս թողթին յանձնել չէ միայն, այլ հայ նորահաս սերունդներուն՝ տղոց եւ աղջիկներուն փոխանցել յստակ պատգամը, որ ըլլան ո՛չ միայն Բարիին, Գեղեցիկին եւ Ճշմարիտ գիրին ու մշակոյթին սիրահար անհատներ, այլ հաստատօրէն տէր կանգնին հայ բազմադարեան մշակոյթին եւ դառնան անոր քաղաքակրթական արժէքներովը հպարտացող անձնավորութիւններ, պատիւ բերելով Յաւերժի ճամբորդ հայ ազգի երթին:

Այս առումով, ամբողջովին չեմ բաժներ հայերէն լեզուի եւ գրականութեան սիրելի ուսուցիչիս՝ Մ. Իշխանի, ի՛ր իսկ ստեղծագործութեանց եւ բանաստեղծութիւններուն մասին այլապէս «հիւմըրով» համեմուած հաստատումները, ուր ան անկեղծօրէն կը յայտնաբերէր.- «Գրած եմ գրելու հաճոյքին համար եւ եթէ բան մը փնտռած եմ գրելով, այն է սի-

րել եւ սիրել տալ հայ քերթողութիւնը, հայ բանաստեղծները, եւ տարածել անոնց հմայքը նոր սերունդներուն հոգիներուն մէջ»:

Հետեւաբար՝ ուշ քան երբեքի մարդկային հասկնալի բնական մտահոգութիւնէս մեկնելով, հայ մշակոյթի անդաստանէն ներս մուտք գործելու ճիգ մը կատարելով, տարիներ շարունակ փայփայած երագս իրականացած տեսնել կ'ուզեմ, միաժամանակ պատանեկան ու երիտասարդական ապրումներու, եւ հաճելի վերյուշերու արթնացման առիթ մը ընծայել հայ պատանի-պատանուիներուն, երիտասարդներուն եւ երկրորդ երջանիկ մանկութիւն ապրող հասակակից շրջանակիս եւ սերնդակիցներուս մօտ:

Բախտատրութիւն կը նկատեմ եւ Հայոց Տեղասպանութեան 100-ամեակին զուգադիպող այս հրատարակութիւնը կը նուիրեմ հոգիիս խորերէն ապրելով բերկրանքը եւ ոգեկոչելով անմեռ յիշատակը հայ քերթողութեան տիտաններուն՝ Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբէն Սեւակին, Մեծարենցին, Պ. Գուրեանին, Չարիֆեանին, եւ Գրիգոր Զօհրապին, ուխտելով հետեւելու գրական վերոյիշեալ հսկաներուն կտակ ձգած Բարիին, Գեղեցիկին եւ Ճշմարիտին նուաճման դժուարին, այլ քաղցր գործընթացին:

Յ. Է.

Պէյրութ
28 Օգոստոս 2016



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Ծնած եմ Գամասկոս, Սուրիա, 01 Նոյեմբեր 1935 թուականին, ազնուական նկարագրով հօրս՝ Յակոբի, եւ համեստ նկարագրի փեր՝ Արրինէ մօրս, ընտանեկան յարկին փակ:

Նախակրթութիւնս ստացած եմ ծննդավայրիս՝ Ազգային Թարգմանչաց վարժարանին, եւ «Գամասկոսի Դեմարան»-ը համարուող՝ Միացեալ Վարժարանին մէջ:

Միացեալի ընթացքը աւարտած եմ՝ 25 Յունիս 1950 թուականին:

Պէյրութի Հայ Դեմարանէն ընթացաւարտ եղած եմ Յունիս 1956 թուականին:

Համալսարանական ուսումնառութիւնս ամբողջացուցած եմ Պէյրութի Հայկազեան Գոլէճի Յրէշմէն, Հալէպի «Ալեփփօ Գոլէճ»ի Սոֆոմոր, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի՝ Դունիոր եւ Սինիոր լսարաններուն մէջ, մասնագիտականով՝ Վարչագիտութեան եւ Տնտեսագիտութեան ճիւղին մէջ՝ 1957-1960 թուականներուն:

1960-1970 ժամանակաշրջանին պաշտօնավարած եմ Պէյրութի «Մոմճեան Եղբ. » նորոյթներու վաճառարան մէջ՝ հաշուապահի եւ վարչական փնօրէնի պաշտօնով:

1969 թուականի Մարտին, նշանակուած են Պերական Երդուեայ Թարգմանիչ (5 լեզուներու), Լիբանանի Արդարադատութեան Գերագոյն Արեանին կողմէ:

Այնուհետեւ, բարգմանիչի պատասխանատու պաշտօնաւորներու շարունակական ընթացքով շարունակուած են Պէյրութի մէջ 1969 թուականէն մինչեւ օրս, սեփական գրասենեակիս մէջ:

Ասպարէզիս բազմազբաղուածութիւնը սակայն՝ արգելք չէ եղած, որ գրեմ սիրողական բանաստեղծութիւններ եւ սզգային զանազան նիւթեր, որոնք մեծաւ մասամբ հրատարակուած են «Ազդակ» օրաթերթին եւ «Բազին» ամսագիրին մէջ:

Ամուսնացած եմ 1970 թուականին:

Հայր եւ երկու մանչ զաւակներու՝ ԲաՖֆի եւ Արա, որոնց հայեցի դաստիարակութիւնը վստահած եմ Հայ Դեմարանին:

Որոշած եմ շարունակել գրական արեղծագործութիւն ծաւալելու սիրողական կիրքս:

Մոյի ընթերցող մըն եմ հայերէն եւ օտար լեզուով գրքերու եւ հրատարակութիւններու, բարոյական յանձնարարութիւն զգալով միաժամանակ հայ նորահաս սերունդներուն փոխանցելու փարիներու փորձառութեամբ անբարած գիտելիքներս ու հայեցի անմեռ ոգին:

Միաժամանակ յարակ պարզամ ունիմ հայ նոր սերունդի պարման-պարմանուիներուն եւ յանձնառու պատասխաններուն եւ երիտասարդներուն փոխանցելու, որպէս կրակի համագոր անկորնչելի ժառանգ, որպէսզի անոնք հաստատ մնան ու «Ղալիմ» պահեն իրենց հայու պարկանելիութիւնը եւ պաշտումի բարձրութեան հասցնեն Բարիին, Գեղեցիկին եւ Դշմարիտին յաւիտենական փնտրութիւնը եւ դրական նպատակ բերեն հայ գրական անդամարանին զարգացման եւ ծաղկումին:

ՅՈՎՍԷՓ ԷՍԿԻՃԵԱՆ

Պէյրութ

28 Օգոստոս 2016

ՓՈԽԱՆ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԻ

Յովսէփ Էսկիճեանի Միրոյ, Տառապանքի, Մաքառումի, Ընթաստացման, եւ Ազատութեան ձեռքբերման համար մղուած պայքարին նուիրուած գիրքը:

Այս գրքին հեղինակը՝ ծնած է Դամասկոս, Սուրիա, 1935 թուականին:

Ան թէեւ ականատես վկան չէ եղած Հայոց Յեղասպանութեան ահաւոր տրամին, բայց իր տառապած, այլ՝ վերապրած ծնողներէն լսած է անոնց Մեծ Եղեռնը ապրած ըլլալու շնչուցիչ պատմութիւնները:

Ժամանակի ընթացքին եւ հետեւողական ընթերցումներու ձանրով այնքան եղեռնապատումի դէպքերու մասին կարդացած է, որ իրեն կը թուի իրապէ՛ս ապրած ըլլալ մեր հայրենահանման եւ հողի կորուստին անփոխարինելի կսկիծն ու խո՛ր արիւնքը:

Այո, հարիւրատր գիրքեր՝ օտար լեզուներով եւ հեղինակատր լուրջ ուսումնասիրութիւններ կարդալով, առաւել եւս՝ լսելով շարք մը վերապրող հայերու ականատեսի վկայութիւնները, ան խորապէս ապրած է այդ անիծեալ վերջուշերուն առթած տառապանքը:

Էսկիճեան՝ իր նախնական ուսումնառութիւնը ստացած է ծննդավայր քաղաքին Ազգային Թարգմանչաց, ապա՝ Միացեալ վարժարաններուն մէջ:

Տարիներ անց, ընտանեօք կը փոխադրուի Պէյրութ, մայրի-

ներու երկիր՝ Լիբանան, ուր յաճախած է Հայ ձեմարան, ապա Հայկազեան գոլէձի եւ Ամերիկեան Համալսարանի դասընթացքները ամբողջացնելով՝ մասնագիտացած է Վարչագիտական Տնտեսագիտութեան ճիւղին մէջ:

Սակայն, հեղինակի համար այսքանն ալ քիչ էր: Ան յարատեւ պրպտումներով ընթերցեր է ծաւալուն լեզուագիտական բառարաններ, տիրապետելով արաբատառ օսմաներէն լեզւին եւ շարք մը օտար լեզուներու:

Ինքզինք կը նուիրէ նաեւ կանոնաւոր ընթերցանութեանց, որոնց շնորհիւ կ'ապրի գրական բազմաբովանդակ մթնոլորտի մը մէջ:

Ճիշդ է, թէ այս բոլորը կը տառապեցնեն զինք, բայց կ'արդիւնատրուին իր մէջ աճող համամարդկային սիրով եւ ազգապահպանումի շարունակական յանձնառութեամբ, եւ որոնց ակնադբիրը՝ ազգապաշտումի շեշտաւորմամբ կու գայ իր երկրորդականի բացառիկ ուսումնավայր Հայ ձեմարանէն, ուր Յովսէփ Էսկիձեան հաւատաւոր ուսանողը ջանադիր հետետորդն է Լեւոն Ծանթին, Նիկոլ Աղբալեանին, Միմոն Վրացեանին, Կարօ Սասունիին, Գառնիկ Գիւզելեանին, եւ շարք մը մտաւորականներու՝ Մուշեղ Իշխանին, Գառնիկ Բանեանին եւ Հրաչ Տասնապետեանին:

Համալսարանական ուսումնառութեան կողքին, Յովսէփը՝ յարուած ձիգերով կ'ամբարէ ծով գիտելիքներ, եւ 1969 թուականին կը նշանակուի՝ Լիբանանի Պետական Երդուեայ Թարգմանիչ՝ 5 լեզուներու: Յաջողեր է վերծանել արաբատառ օսմաներէն կարեւոր գրութիւններ եւ փաստաթուղթեր. միաժամանակ հնայուելով՝ Մովսէս Խորենացիի պատմակերտ գործերէն հայ մշակոյթը խորագրող գիրքերէն, հայ ժողովուրդի բոլոր դասականներու գործերէն, որպէս արձակ եւ բանաստեղծական ծաղկաստան:

Ու այսօր, հեղինակը իր կեանքի ներկայ հասուն հանգրուանին, կը ներկայանայ մեզի՝ որպէս այդ բոլորին յանձնառու անձնատրութիւնը, մտածող, գործող եւ ոգետորող Յովսէփ Էսկիձեանը, իր բուռն նկարագրով եւ անարդարութեանց դէմ ըմբոստի ոգիով հարստացած հայ անհատը, ապրելով այնպէս, կարծես թէ նոր հասած ըլլար իր կեանքի կիսադարին:

Այսպէս ձանչցայ Էսկիձեանը՝ բոլորովին վերջերս: Ան միաժամանակ ըմբերանել կ'ուզէ ամէն դժուարութիւն եւ կը մատչի նաեւ գրականութեան դարպասէն ներս, որուն ոգեշնչող կրակը ստացած էր Հայ ձեմարանէն ու այդ կրակը վերածեց անմեռ բոցի:

Քերթուածներու կողքին, Յովսէփ Էսկիձեան հրապարակագրական յօդուածներ ալ ստորագրած է, երբ յատկապէս պոռթկալ ուզած է իր գայրոյթը՝ մեր դարաւոր այլ միշտ անուղղայ թուրքին դէմ:

Հայ մամուլի ներկայացուցիչներէն «Ազդակ» օրաթերթը եւ «Բազին» ամսագիրը կը հիւրընկալեն իր գրութիւնները՝ բարոյապէս քաջալերելով գրողը:

Ներկայիս, երբ որոշ տատանումով, գիրքով մը հրապարակ գալ կը փափաքի, Էսկիձեան կ'որոշէ իր երախայրիքը նուիրել Հայոց Յեղասպանութեան դարադարձին:

Այո՛, 100 տարիներու ողջակիզում, դարատեւ տառապանք. պատճառը, համաթուրանական հին, բայց միշտ նոր անշեղ գործընթացը թուրքին, իր հայաջինջ ծրագրով՝ տեղահանելու հայութիւնը ընդմիշտ իր դարաւոր բնաշխարհէն, գրաւեալ Արեւմտահայաստանը միատարր եւ միացեալ երկրի վերածելու հայուն դարաւոր սխրանքն ու պայքարը առ ոչինչ համարելու եւ մոխրացնել ջանալով հայութիւնը ընդհանրապէս:

Ուրեմն, օսման թուրքը որոշած էր ու է՝ իր լրումին հասցնել երկու գլխաւոր նպատակ.

Ա) Բնաջնջել հայութիւնը իր բնօրրանէն

Բ) Ստեղծել միատարր Թուրքիա:

Եւ սակայն, շարունակական իշխող քաղաքական թուրք վերնախաւերը, Օսմանէն մինչեւ Թալէաթ ու մինչեւ Էրտողան, ձախողեցան իրենց վերոնշեալ գոյգ ծրագիրներուն մէջ:

Եւ ահա, այդ նոյն թուրքին ամբարտաւան գործընթացի իրողութենէն կը ծնի Էսկիձեանի ափսոսանքին հետ նաեւ լուստեսութիւնը, երբ հայը կրցաւ ոչ միայն վերապրիլ եւ յարութիւն առնել ցեղասպանութեան տրամին անդարմանելիութենէն, այլ տիրացաւ գոյգ Անկախութիւններու, հզօրացաւ, երկիր կառուցեց, իբրեւ պետութիւն՝ կայացաւ, մինչեւ անգամ Արցախացաւ, հասնելու տակաւին՝ ո՛չ հեռաւոր ապագային, իր դարա-

տր երազին՝ Միացեալ եւ Ամբողջական Հայաստանի շիկացրնող տեսլականին իրականացման:

Այս բոլորին առընթեր, ահա, Յովսէփ Էսկիձեանի ոչ ծաւալուն գիրքը. այս մասին նախ ինք թող խօսի.

- «Մոլի ընթերցող մըն եմ՝ հայերէն եւ օտար լեզուներով գրուած գիրքերու եւ հրատարակութիւններու, բարոյական յանձնառութիւն զգալով միաժամանակ՝ հայ նորահաս ու գալիք սերունդներուն փոխանցելու, տարիներու փորձառութեամբ ամբարած գիտելիքներս ու հայեցի Անմեռ Ոգին...»:

Համեստօրէն այս է պահանջքն ու պատգամը Յովսէփ Էսկիձեանին:

Ուստի, կարդալով այս գիրքը, ընթերցողէն կը խնդրենք, որ հոն չփնտռէ գրական Մեծարենցեան նրբութիւններ, բայց պիտի գտնէ անպայման Մեծարենցեան Անանձնական նուիրում, Բաշ Ապարանի Մրրկածին Դրօն, Սարերու Արծիւ Անդրանիկը ու անոնց անզսպելի պոռթկումները, «Միամանթոյի, Չարենցի եւ Ծառուկեանի անդաստանէն քաղուած մտորումներ, Երեւանեան բազմամիլիոնաւոր հայութեան պոռթկումը 1965 թուականին, ու տակաւին Կոմիտաս ու խաղաղութեան անմեռ նուիրում. ու այդ բոլորէն բարձրացած՝ Ծիծեռնակաբերդ, Մետրոպոլ ու Վարդանով, գրչի եւ զէնքի շաղկապով ու մեր դարատեւ անկախութեան ձգտումով, հասնելու Աւարայրէն Սարդաբապատ ու Ազատ Արցախ:

Ամբողջական ոգի է այս գիրքը, Հայկական Անմեռ Ոգի, որուն պէտք է միանար նաեւ գեղագիտական բեռեզ:

Էսկիձեանի Ոգին համահունչ է՝ Բարիին, ճշմարտութեան, Արդարութեան, Խաղաղութեան եւ Միասնութեան Անմեռ Տեսլականին:

Ամբողջն այս է. զայն սիրով Ձեզի կ'ընծայենք:

ՏՈՔԹ. ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Պէլրութ
28 Օգոստոս 2016

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԱ-ՆԻԹԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԸ՝
ԳՐԱՒԱԿԱՆ ՀՈՂԱՀԱՒԱՔԻ
ԵՒ ԵՐԹ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉ ԿԱՐԱՒԱՆԻ

ՀԱՅՐԵՆԱՀԱՆՄԱՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ՝ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԳՐԱԿԱԾ ՄԱՐՏԱՀՐԱԲԵՐՆԵՐԸ

- «Ժողովուրդ հայոց, դուն պիրի վերադառնաս քո
նահանգների, արի-արանց քաջերի երկիրը»:

ԱԲԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

- «Առանց Արեւմտեան Հայաստանի անկախութեան,
աւելի շուր դուր կը բացուի Փանթուրքիզի եւ Փանիսլա-
միզի դիմաց»:

ՊԷՅՆՊՐԻՃ ՔՈԼՊԻ

Միացեալ Նահանգներ

արտաքին գործոց նախարար (1920 թ.)

Յայոց Ցեղասպանութեան 100-ամեակի համազգային տարողութեամբ արժեւորման նախաշեմին կանգնած ենք ազգովին:

Մարդկային պատմութեան մէջ Թուրքիոյ կողմէ պետականօրէն ծրագրուած, կանխամտածուած եւ անպատիժ մնացած ցեղասպանութեան եւ հայրենահանման 100-ամեակի ոգեկոչման տարին է 2015 թուականը:

Խորհրդանշական այս տարեթիւը, սպասելի է, որ մեկնակետ դառնայ հայութեան յառաջիկայ 10-ամեակներուն, պահանջատիրութեան, հողային եւ նիւթական հատուցման իրաւագիտական հիմունքով գործունեութեանց ծաւալման եւ նոր ընկալման:

Նոր ձեւաչափով յանձնառութեան եւ ուխտի վերանորոգման

մեկնակետ թուական պետք է ըլլայ 2015-ը, աշխարհի ողջ տարածքին ապրող իրաքանչիւր հայ անհատի համար, Հայաստան, Արցախ, Ջաւախք, Արեւմտահայաստան ու մինչեւ հայկական սփիւռքի ամենահեռաւոր անկիւնները:

Արդարեւ, ազգային մեր իտեալներուն իրականացման կապած ակնկալութիւնները, ազգակերտումի հոլովոյթը, Արեւմտահայաստանի տարածքին գոյատեւող եւ հայու արմատ կրող միլիոնաւոր «*հողի լուռ պահակներուն*»-ն վերապահուած գործօնին պատմակշիռ նշանակութիւնը, հայկական արդար պահանջներուն, հողային եւ նիւթական հատուցումներուն սահմանումը եւ հայկական հարցի թղթածրարին իրաւագիտական սպառնիչ պատրաստութիւնը՝ տասնեակ տարիներու նպատակասլաց գործընթացի, մասնագիտացած բազմամակարդակ եւ բազմաճիւղ մարդուժի, անհաշիւ նիւթական դրամագլուխի ապահովման եւ դրամական մեծագումար ներդրումներու կը կարօտին:

Այս անդուլ եւ աննահանջ պայքարին դիմաց, հայ քաղաքական միտքը եւ հայութիւնը իր բոլոր ընկերային եւ կրօնական կառոյցներով ահագանգային ուժականութեամբ, կոչուած է դիմակալելու՝ թրքական պետութեան 2014 Մարտին ստեղծած «Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին հայոց կողմէ իրագործելի ձեռնարկներուն եւ գործողութիւններուն դէմ՝ Թուրքիոյ ծրագիրները համակարգող կոմիտէ»-ին:

Ակնկալելի է, որ հայոց դէմ ցցուի թրքական պետութեան ուժային, ռազմական, ֆինանսական, քաղաքական եւ դիւանագիտական բոլոր կառոյցները, անոր արեւմտեան դաշնակիցները, թրքութիւնը իր այլամերժ, ծայրայեղօրէն ազգայնամուլ զանգուածներով, ամբարտաւան, հայատեաց, անհանդուրժողութեամբ, ցեղասպանութեան պատմական իրողութիւնը ուրացող, պատմութեան փաստերը միշտ նենգափոխող թուրքը եւ հայրենահանութիւնը անպատիժ իրականացուցած թրքութիւնը:

Եւ սակայն, Արեւմտահայաստանի ողջ տարածքին, հայու արմատ ունեցող միլիոնաւոր «*հողի լուռ պահակները*» «կարծես թէ մոռցուած են» արդարութենէն խուսափող ոճրածին թրքութենէն:

Այս իմաստով, 2015 թուականը պատմակշիռ կարելորու-

թիւն ներկայացնող մեկնակետ պետք է դառնայ իրաքանչիւր հայ անհատի համար, ըլլայ ան հայրենի վերանկախ երկրի դեկավար դիրքերը գրաւած այր, թէ սփիւռքահայ, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի ժառանգորդ եւ իրաւատէր յետ եղեռնեան սփիւռքը՝ իր համազգային կրօնական թէ քաղաքական ներկայացուցչական կառոյցներով, հայութեան նիւթական կարողութիւններով, ինչպէս նաեւ Արեւմտահայաստանի հողատարածքին վրայ գոյատեւող միլիոնաւոր՝ կրօնափոխ եւ հայու արմատներով իրենց ինքնութիւնը ապրող անկրկնելի զանգուածներով:

Ազգովին նոր մարտահրաւերներ կը դիմագրաւենք եւ կոչուած ենք համապատասխան զգօնութեամբ եւ պատմական պատասխանատուութեամբ ընկալելու զանոնք:

Յառաջիկայ տասնամեակներուն, լարուած եւ մասնագիտական ուղղուածութեամբ իրագործելի համահայկական գործունեութեանց *տասնաբանեայ ծրագրի* մը ուրուագծումը կ'առաջարկեմ:

Դժուար յաղթահարելի, անդուլ պայքարի, քաղաքական եւ նիւթական անհաշիւ գումարներու գոյացում կ'ենթադրէ՝ երկար տարիներու վրայ՝ մաս առ մաս գործադրելի վերոնշեալ ծրագիրը:

Սկսելու համար, «Հայկական դատ» բառակապակցութիւնը՝ իրականութեան անհամապատասխան եզրաբանում մըն է:

Դատի մը իրողական բնոյթը կ'ենթադրէ՝ դատահայց իրաւական անձնաւորութեան մը գոյութիւնը եւ սպառնիչ փաստաթուղթերով ամբողջացած թղթածրարի մը ներկայացումը:

«Հայկական հարց» եզրաբանումը՝ իրականութիւնը աւելի իմաստաւորող բառակցութիւն է:

Հայկական արդար եւ տակաւին անլոյծ հարցը կը սպասէ իր իրաւատէր եւ միջազգային ընդունուած օրէնքներով ճանաչում ստացած իրաւագիտական անձնաւորութեան:

Հայաստանի վերանկախ հանրապետութիւնը՝ իր ներկայ սահմաններով եւ պարտաւորութիւններով, միջազգային իրաւական անձնաւորութիւնն է, որուն նմանապէս վերապահուած է նախախնամական դեր՝ մեր ազգային անիրաւուած իրաւունքներու ճամբուն վրայ, գործակցաբար Արեւմտահայաստանի իրաւատէր եւ ժառանգորդ յետեղեռնեան սփիւռքի հա-

յութան իրագործելի ներկայացուցչական կառույցին, ինչպես նաեւ Արեւմտահայաստանի հողատարածքին վրայ գոյատեւող միլիոնաւոր համշէն կամ կրօնափոխ հայ արմատներ ունեցող զանգուածին, որուն պատմակշիռ կարեւորութիւն ներկայացընող ճակատագիրով եւս զբաղելու պարտաւորութիւնը վիճակած է հայ քաղաքական մտքին՝ յառաջիկայ տասնամեակներուն:

Յետեղեռնեան հայ սփիւռքը կոչուած է կեանքի կոչելու՝ իր միջազգային իրաւագիտական ճանաչումի անձնաւորութիւնը եւ անկէ բխող համապատասխան ներկայացուցչական կառույցը եւ Հայաստանի հանրապետութեան հետ դերերու ռազմավարական բաշխումով՝ հայկական պահանջատիրութեան, հողային եւ նիւթական հատուցումի ձեռքբերման գործունեութիւն ծաւալելու:

ՊԱՀԱՆՉԱՏԵՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ՝

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆՑ ԵՐԿԱՐԱՇՈՒՆՉ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

1) Շրջանցում՝ ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներէն դէպի հողային եւ նիւթական հատուցման մակարդակ.

2) Հայութեան նիւթական կարողականութեան գնահատում, եւ համաշխարհային դրամական հայ-ֆոնտային կառույցով օժտում.

3) Հայկական հարցի հողային եւ նիւթական պահանջատիրութեան եւ հատուցման առնչուող իրաւագիտական սպառնիչ թղթածրարի պատրաստութիւն.

4) Արեւմտահայութեան յետ եղեռնեան իրաւատեր եւ ժառանգորդ սփիւռքը օժտել՝ իրաւական անձնաւորութեան կարգավիճակով, եւ ստեղծել համապատասխան ներկայացուցչական կառույց.

5) Միջազգային իրաւագիտական անձնաւորութեան տեր Հայաստանի Հանրապետութենէն սպասելի է գիտակից պատմակշիռ ռազմավարական գործակցութիւն՝ Հայկական հարցի հանգուցալուծման գործունեութեանց ծաւալման ընթացքին.

6) Օրէնսգիտութեան, իրաւաբանութեան եւ քաղաքական գիտութեանց մէջ մասնագիտացած սերունդներու շարունակական պատրաստութիւն եւ այդ «քատր»-երուն նպատակադրուած դրական օգտագործում.

7) Արեւմտահայաստանի հողատարածքին վրայ գոյատեւող միլիոնաւոր կրօնափոխ եւ հայ արմատներ կրող «Լուռ պահակներուն» գործօնին վերապահուած պատմակշիռ նշանակութիւնը՝ Ուիլսընեան սահմաններով Հայաստանի գոյառման գործընթացին.

8) Զիրտ ժողովուրդին եւ դեկավարութեան մօտ զգուշաւոր, փոխադարձօրէն շահաւետ քաղաքական գործակցութեան ծաւալում՝ Սելրի դաշնագիրի սահմանագծումներու շրջագծին մէջ.

9) Միջոցներու որոնում՝ միջազգային որոշումի կեդրոններէն ներս՝ հայկական քաղաքական ներկայութեան ապահովում, ի նպաստ Հայկական հարցի հանգուցալուծման.

10) Թուրք այլախոհ մտաւորականութեան ներդրումը Հայկական հարցի հանգուցալուծման գործընթացին մէջ, ինչպես նաեւ թրքահայութեան եւ կրօնափոխ հայերուն կարողութեանց օգտագործում՝ ի սպաս թրքական ընկերութեան հայանպաստ բարեփոխումին:

Սփիւռքի տարածքին հայ իրաւագետներու միութիւնը, հայրենի օրէնսգետներու յանձնառու զօրակցութեամբ, անհրաժեշտ է, որ անյետաձգելիօրէն կեանքի կոչէ Հայկական հարցի մասնագիտացած կառույցը, եւ ամբողջացնէ՝ իրաւական տըլետալներով եւ սպառնիչ փաստերով հայկական հողային, նիւթական եւ բարոյական հատուցումի թղթածրարը, որուն հիմ կրնայ ծառայել՝ 1919-ի Նոյեմբերին, Ազգային զոյգ պատուիրակութեանց Նախագահներ՝ Աւետիս Ահարոնեանի եւ Պօղոս Նուպար փաշայի ստորագրութեամբ, Ազգերու Վեհաժողովին ներկայացուցած հայութեան 1914-1919 կրած մարդկային նիւթական, հողային, ճարտարապետական կառույցներու վնասներուն հատուցման սպառնիչ տեղեկագիրը, որ 1919-ի դրամական արժեքային տուեալներով՝ 19 միլիառ զուիցերիական ֆրանքի կը հասներ:

Հայ քաղաքական ներկայացուցչական բոլոր կառույցներուն, ինչպես նաեւ հայ եւ օտար իրաւագետներու մարմին կողմէ ամբողջացուելիք փլանաւորուած եւ մանրամասնեալ տեղեկագիրով՝ հարկ է, որ Հայկական հարցին, Եղեռնի հողային եւ նիւթական վնասներու հանգուցալուծման եւ հատուցման ձեւաչափի սահմանումը կատարէ:

Պահանջատեր հայութիւնը, անհրաժեշտօրէն պետք է ամբողջական պատկերացումը ունենայ իր քաղաքական, հողային եւ սիւթական վնասներու հատուցման ձեւաչափի սահմանումին, որպէսզի հայասպան եւ հայրենահանող թուրք պետութեան եւ թրքութեան առջեւ միանգամընդմիջտ փակէ հայկական պահանջատիրութեան եւ համապարփակ հատուցման անհերքելի եւ սպառնիչ ձեւաչափին դեմ կատարուելիք նենգափոխումները եւ ուրացումները:

Անպատեհ չեմ նկատեր ստորեւ մէջբերել հետաքրքրական մանրամասնութիւններ՝ հայկական հողատարածքին առնչուած մեր պատմական պահանջներուն մասին:

- Ուիլսընեան Հայաստանը՝ Վանի, Պիթիսի, Էրզրումի եւ Տրապիզոնի նահանգներուն ընդգրկումով, 22 Նոյեմբեր 1920-ին, Միացեալ Նահանգներու նախագահ Վուորո Ուիլսընի իրաւարար վճռագիրով եւ միջազգային օրէնքով վերջնականօրէն եւ անվերաքննելի կերպով հաստատուած է:

Հայութիւնը իր հայրենի եւ աշխարհասփիւռ կառոյցներով, վերոյիշեալ սահմանագծումներով Ուիլսընեան Հայաստանի անկախացումը պետք է անդադրում կերպով հետապնդէ:

- Ըստ Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան կայքէջին՝ «Համաշխարհային Առաջին պատերազմէն առաջ Թուրքիոյ մէջ հայութեան թիւը 1,200,000 մարդ էր, որոնցմէ՝ 400,000-ը պատերազմին պատճառով, պատերազմական ճակատներէն աւելի ապահով շրջաններ փոխադրեցինք, եւ 40,000 հայեր ալ սպաննուեցան կամ մեռան, եւ մնացածները ողջ հասան իրենց կայանը...»:

Կայքէջը սակայն, լուռ կը մնայ մնացեալ 800,000 հայերու ճակատագիրին մասին...:

- Միացեալ Նահանգներու գոնկրեսի գրադարանին արխիւներուն մէջ պահուած արձանագրութիւններուն տուեալներով, Թուրքիոյ մէջ հայոց թուաքանակը՝ 29 Հոկտեմբեր 1914-ին 3,000,000 կը գնահատուի:

- Թուրքիոյ վարձկան գրիչ եւ պատմական գիրքերու հեղինակ՝ Ճօ Մըքարթին, իր գիրքերուն մէջ 1,500,000 հայերու ջարդուած ըլլալը կը յիշէ եւ անոնցմէ՝ 700,000-ին փրկուած ըլլալը կը հաստատէ:

- 800,000 հայերու թուաքանակը բացակայ է նաեւ Միացեալ

Նահանգներու քոնկրեսի գրադարանին եւ թրքական մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան կայքէջի արխիւներէն:

Սակայն վստահօրէն, 1915-ին եւ յաջորդող տարիներուն չբացայայտուած 800,000 հայ մարդոց զանգուածը՝ հայ արմատ կրող, կրօնափոխ դարձած եւ հայ հողի վրայ գոյատեւող «Լուռ պահակներ»-ն են:

- 2012 թուականին, Թուրքիոյ մէջ կայացած Պետական պաշտօնական մարդահամարին թուային տուեալներով, 1927-2012 ժամանակաշրջանին, Թուրքիոյ բնակչութեան թուանը՝ մեծ քաղաքներուն մէջ վեցուկէս անգամ, իսկ փոքր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ 7 անգամ աճ արձանագրած է:

Նոյն տրամաբանութեամբ եւ թրքական 2012-ի մարդահամարի թրքավարի հետքերով... վերոնշեալ 800,000 հայ արմատ կրող եւ Արեւմտահայաստանի հողատարածքին վրայ գոյատեւող հայերուն ներկայի թուաքանակը՝ բնական է, որ ենթադրուի որպէս $800,000 \times 7 = 5,600,000$ հայ արմատներով մարդիկ:

Յառաջիկայ տասնամեակներուն, հայ քաղաքական միտքը եւ հայութեան ներկայացուցչական բոլոր կառոյցները լրջօրէն պետք է հետապնդեն՝ Արեւմտահայաստանի հողատարածքին գոյատեւող հայ արմատներով միլիոնաւոր «Լուռ պահակներուն» քաղաքական ճակատագիրին նպաստաւոր հանգուցալուծումը:

Պէյրութ
6 Ապրիլ 2014

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐՈՒ ԱՂԲԻՐՆԵՐ

1) Թուրքիոյ մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան կայքէջ՝ «Առաջին Համաշխարհային պատերազմէն առաջ Թուրքիոյ մէջ հայ բնակչութեան քանակը»:

2) Թուրքիոյ 2012-ի պետական պաշտօնական մարդահամարի թուային տուեալները՝ «1927-2012 երկրին բնակչութեան մէջ արձանագրուած աճի տոկոսը»:

3) Միացեալ Նահանգներու քոնկրեսի գրադարանի արխիւները՝ Հոկտեմբեր 1915-էն առաջ՝ «Թուրքիոյ մէջ հայութեան թուաքանակի մասին»:

4) Զրտական www.ekurd.net Զիրտիստանի կողքին՝ Արեւմտահայաստան

տանին յատկացուած հողատարածքին քարտէսին արձանագրուած է՝ Western Armenia:

5) Զաղաքական գիրքերու հեղինակ, Թուրքիոյ վարձկան պատմաբան Ճօ Մըքարթին, հայոց ողբերգութեան մասին կը հաստատէ՝ «Հայկական ջարդերէն փրկուեցան 700,000 հայեր»:

6) Միացեալ Նահանգներու Նախագահ Վուտրօ Ուիլսընի 22 Նոյեմբեր 1920-ի հռչակած իրաւարար վճռագիրը՝ «Ուիլսընեան Հայաստանի սահմաններուն մասին»:

7) Թրքական «Հիւրիյէթ օրաթերթ» - Մարտ 2014 «Թուրքիոյ կառավարութեան կից ստեղծուած գործողութիւններ ծրագրող կոմիտէն»:

8) 1919-ի Նոյեմբերին, հայկական զոյգ պատուիրակութեանց Նախագահներ՝ Ա. Ահարոնեանի եւ Պօղոս Նուպար փաշայի կողմէ՝ Ազգերու վեհաժողովին՝ ներկայացուցած հայութեան կրած վնասներուն հատուցման գծով սպառիչ տեղեկագիր:

**ՄԱՂԹԱՆՔ ՎԵՐԱՄԲԱՐՉ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՅԻ ՆՈՐ ՄՈՎՍԷՍԸ**



ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՆ ԱՆՆԱՍՆԵՐ ԿԱՏՐՆ ԱՍՏՈՒՅԻ ԵՒ ԸՆՏՐՈՒՅԻՆԱՐ ԱՋՐԻՍ ԵՐԿՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՍ ՄԱՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՍ, ԿԱԹՈՍ, ՈՒՐ ԵՒ ԿԱՏՐԱԿՈՒԹՅԱՆ Ի ՏԵՄԵՆ ԵՒ ԻՐԱՆԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆԱԿԱՆ Ի ՄԱՅԿ ԵՒ ՕՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՍ ՄԵՐԱՆ ՏՈՐԷ ՄԵՐԱՆ ԿԵՐՈՒՄԻ ԼՈՐԱՐԱՆՉՅԵՐ:

**ՅՈՐ ՕՐՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱԿԱՍՆԱՅԻ
ԱՍ
ՏՄԱՐ ՈՒՎԱՏՔ ԷՍԿՈՑՆԱԼՆԸ
ՈՐ Ի ՏՈՐՈՒՄ ԼՈՐԱՆՆ:**

Հայրապետական արհմարտը եւ Երեսնական շեմ սիրով կ'աջուցնէր Ձեզ՝ 2004 տարուան արշալոյսին եւ կը մաղթէր որ այս տարին եւ զայի՛ն յոյր տարիները Ձեզի եւ Ձեր ընտանիքին համար ըլլան երջանկային տարիներով հարուստ տարիներ:

Արդարեւ, Ինձի Ձեզ մասին հանչանքի մեր Առաջնորդական արհմե: Տանտանակ մեր շարունակ զու՛մ հաւատքով ընդհանրապէս Լիբանանի ու յայտնապէս Պարսկաստանի հայութեան, ոչ միայն Ձեզ զարթնն թելուածով, որպէս Արդարեւ Քարգիւտան, այլ նաեւ մեր մտանակութիւնը թելով Լիբանանի հայութեան հաստակով կեանքին: Մասնաւորապէս մեր կեղծելով ըլ՛. Ազգ. Առաջնորդարանին եւ ըլ՛. Առաջնորդարանին համար եւ Ձեր հաստակութիւններով պատկառելի կանխապէս մեր կեղծելով որդեգրելով:

Այս Հայրապետական արհմարտին Ֆրիով կը գնահատենք Ձեր կատարած պատուաւ աշխատանքը: Կտակ ենք որ նախ այժմ պիտի շարունակէր Ձեր նպատար թելել մեր կեղծելով եւ յիշատակուի մեր մարտիտարի գրականներով:

Ողբ յիշով ՚ Տէր, գարգացող շնորհով Ս. Հոգւոյն եւ յու՛ստ արհմարտի Ս.Մ.Ե. ԱՐՍ.:

Արաս Ա.
**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՐԱ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՍ**

Տպագրուած է Հայրապետական Գրական կեանքի միջոցով
Ի Տեմրուան Երկրի մէջ Տպագրուած է
Ի Տեմրուան Երկրի մէջ Տպագրուած է
Ի Տեմրուան Երկրի մէջ Տպագրուած է



Ա. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՐԱ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՍ

**ՄԱՂԹԱՆՔ ՎԵՐԱՄԲԱՐՁ՝
ԱՆՍԱՍԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԱՐԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ**

«Խնդա՛ յո՛յժ Դուստր Սիոնի,
Քանզի երկիրս երկինք եղես այսօր»
ՇԱՐԱԿԱՆ

Ուրախ լեր, Սուրբ Աթոռ Կիլիկեան,
Վերընձիդեալ յոյսի կեդրոն լուսատու՝
Մայրիներու երկրին մէջ այս Փինիկեան:
Թող դողանջեն զուարթագին
Ջանգերն համայն հայութեան,
Յաղթերգութիւն մեծագոյ՝
Շնորհաբեր ընտրութեամբը Զերդ Սրբութեան՝
Ո՛վ հայրապետ Արամեան:

Թող շեփորուի յաղթական,
Նոր անտիս աշխարհի,
Զի այսօր,
Դարերու խորէ՛ն, դարեր կտրելով՝
Նորէն կեանք առաւ, ու մեզի հասաւ՝
Անմեռ Ոգին Հայկազնի, Նահապետին Արամի:

Այսօր հրձուեցան,
Լուսապսակ Մեծ Դէմքերը տիրական,
Ու շինարար գահակալները Կիլիկիոյ տան,
Օղակներ լուսէ, որոնք հերթի կոչուեցան՝
Սահակ Վշտակիր, Վեհափառ արի պայծառ տեսիլքի,
Բարզէն ու Պետրոս՝ լուսավէմերն աթոռին,

Գարեգին Առաջին՝ Նոր Ղեռնոյ Երէց «Հոգետր Կիլիկիոյ»,
Զարեհ Խաչակիր՝ խոցեալ ու հովի բարի,
Խորէն Առաջին՝ քաջ ու վարչագէտ,
Գարեգին Երկրորդ՝ յառաջադէմն.
Այսօր Մականը Հայրապետական՝
Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին պատմական՝
Անուր ձեռքերուն մէջ է վերստին,
Շնորհազարդ նոր Գահակալին՝
ԱՐԱՄ Վեհափառ Հայրապետին:

Ուրախ լեր, Եկեղեցի Հայկական,
Քառաթեւ կառոյցով նուիրապետական.
Յնձա՛ Աթոռ Կիլիկեան,
Յնձա՛ Վաղարշապետ հայրենի,
Յնձա՛ Աթոռ Սաղէմի,
Յնձա՛ Աթոռ Բիզանդիոնի,
Քանգի երկիրս երկինք եղեն այսօր...
Ու եկան առ քեզ՝ սիրով անսպա՛ռ,
Միութեան շունչով,
Եղբայրական լծակցութեան օրինակով վա՛ռ,
Պետերն հոգետր համօրէն Ազգիս,
Ու ծաղկազարդեալ Վեհափառը Ամենայն Հայոց,
Պատմակերտ Օծումով անխնայալի՛
Ամրագրուած եղաւ անգամ մը ես՝
Սուրբ Աթոռը Կիլիկեան:
Անթիլիասի Աթոռը սրբազան,
Զէ եղած երբեք լոկ վանք ու մենաստան,
Այլ՝ հաւաքական ապրումի Ուխտավայր,
Յուշ ցանկալի՝ «Հոգետր Կիլիկիոյ»,
Շէն հայրենի՝ Սփիւռքացեալ հայուն տարագիր,
Աղբիր լոյսի, Տաճար յոյսի,
Հայաստան երկրորդ,
Բերդ անառիկ՝ Մայր Հայաստանի հզօրացման,
Յանձնառութեան կեդրոն՝
Հայ Դատին անժամանց:

Այսպէ՛ս կանխազգաց,
Ու այս իտէալով վեհ,
Աշխարհասփիտ ժողովուրդս տարագիր,
Հայ սփիւռքի բոլոր կողմերէն,

Նոր Ծաղկազարդի ոստերով դալար,
Հայրենաբարձ նուիրումի գիտակցուած պոռթկումով
Գոյութիւնն իրենց իբրեւ ջահ վերամբարձ,
Միաբերան Ովսաննա՛ կ'աղաղակեն,
Ու վեհափառութեանդ օրհնաբեր ընտրութեամբ՝
Յաւերժագրուած կը տեսնեն, դէրը կենսական,
Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռին Պատմական:

Ընտրեալդ Աստուծոյ, որ նման Մովսէսի՝
Տասնաբանեալ մունի,
Ի փառս Աստուծոյ, եւ վասն Ազգիս.
Ով Շնորհազարդ Վեհափառ Արի,
Արամ Առաջին Հայրապետ Հայոց.
Թող Սրբութեանդ գահակալութիւնը ըլլայ՝
Յաւերժութեան երթ՝ Անկախացեալ Հայաստանի,
Խունկ ու աղօթք՝ Եղեռնի Հայոց,
Խորհրդանիշ՝ Հայ Ոգիի միութեան,
Ամրագրում Կիլիկիոյ Տան պատմական անհրաժեշտութիւն,
Անմնացորդ լծակցութիւն՝ Էջմիածնի պայծառացման,
Վերանորոգ Ուխտ՝ Անհատոյց հայ ազգի Դատին,
Նայաստ բարի՝ Ազգակերտումին Հայոց,
Հզօրացում Արցախի Ազատամարտին,
Առաքելութիւն՝ վասն հողահաւաք գործընթացի,
Երգ աննահանջ՝
Հայրենադարձ կարաւանի,
Վախձանական յաղթանակ՝
Մէկ հայութիւն Տեսականի,
Խաղաղութեան ծիածան՝
Փոթորկեալ հոգիներուն վերեւ բովանդակ հայոց՝
Բնակիչներ հայրենի, եւ
Հայրենակարօտ ականայ Սփիւռքի,
Առհաւատչեալ գրաւական՝
Հայութեան Փառահեղ Գալիքին:

Պէյրութ
02/07/1995

* Գրութիւնը առաջին անգամ տպուած է 1995 թուականին «Հասկ»-ի
բացատրիկին մէջ, նուիրուած Արամ Առաջին Կաթողիկոսի օծման:

**ԱՆՎԵՐՋԱԿԷՏ ԵՐԿԱՆՕՍՈՒԹԻՒՆ՝
«ԱՇԽԱՐՀԻԿ» «ՔԱՂԱՔԱԿԻՐԹ»
ՄՈՆԿՈԼԱՏԻՊ ԷՕՉԱԼ ԹՈՒՐՔԻՆ ՀԵՏ**

**ԵՐԿԱՆՍՈՍՈՒԹԻՒՆ՝
ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՆՈՐ ԹՈՒՐՔԻՆ ՀԵՏ
ՆԱՄԱԿ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ,
ԵՐԱՆՏԱԳԷՏ ԱՇԱԿԵՐՏԷՆ**

«Չայերը դեռ բան չեն սորված,
Անատոլուի մէջ իրենց տրուած դասերէն»

ԹՈՒՐԿՈՒԹ ԷՕՉԱԼ

Մեր դասերը լաւ սորվելու եւ մարտելու կերպը ի՞նչ է դասախօս Էօզալ,
Կը հարցնեմ ականայ...

Երբ ամէն հայ, ամէն տարի, Ապրիլ ամսուն,
Ծաղկելու ամսին՝

Եղեռնի մեծ Ոձիրի յաճախանքի կսկիծը սրտին,

Չսպիացած խոր վէրքերու կոտտանքը կողին,

Հոգի՛ն ասիերուն մէջ սեղմած ցաւատանց,

Հէք իր հայրերուն, իր մայրերուն,

Իր քոյրերուն, եղբայրներուն,

Այրող մորմոքին ահագնութենէն՝ անմխիթար կու լայ...

Հայրենի երկրին, բո՛ւտ մը մնացած հողին վրայ,

Եւ բնօրրանէն տարատնկեալ, հայրենակորոյս,

Սփիւռքի անհիւրընկալ անհունութեանց մէջ՝

Կու լայ դեռ հայր...

Ու անգերեզման իր նահատակներուն հետ՝

Կը վերանորոգէ Ուխտն իր անկատար,

Վարդահեղեղ վառ գալիքը յար հիւսելով:

Մեր դասը լաւ սորվեցանք՝ ուսուցիչ «բարի».

Վկայ կ'ուզէ՞ք,

Վկայաբերեմ՝ հայու քաղաքակրթական վսեմ առաքելութեան

Խո՛ր հաւատացող քերթողուհին՝ Կապուտիկն Միլվան,
Թէ՛ հայր, իր սեւ ձակատագրին կսկիծը շալկած,
Իր մէջ բաւարար ուժ գտաւ նորէն՝
Մարդկային արդար դատերուն զինուորագրուելու,
Համամարդկային գաղափարներն ընկալելու,
Անանձնաբար, լաւագոյնն իր, մարդ եղբօր հետ կիսելու,
Եւ այս մոլորակին՝ Տարր էական դառնալու...
Մահէն յարուցեալ հայր՝ Բիրականէն վե՛ր,

Յանրժի ուղին պեղելու սկսաւ,
Հպարտացաւ՝ Խաչատուրեանով, Համբարձումեանով,
Սէգ Սարեանով, Չարենցով, ու Պարոյր Սեւակով,
Արիա - Սեւան ջրատարը հանգուցելով,
Իր կալի - արտի բերքէն՝
Քիրտին ու թուրքին բաժին հանելով...
Միլիոն նահատակ անթաղ ձգելով,
Հազարատր խլեակներն ազգիս,
Աքտրի խոյ ձամբաներուն հալածական,
Միլիոն մ'ալ հայեր յաւէտ որբացած,
Թշուառ ու անյոյս, անդուլ քալելով՝
Անտարբեր աշխարհի, թաց ու մութ մայրերով օտար,
Վերապրումի փխրուն յոյսը լոկ գրկած՝
Որպէս Հաւատքի Միւն, եւ Գաւազան Յաղթութեան,
Անյագ ծարաւ Լոյսի, Գիտութեան,
Աստուածային Մատի հպումը միշտ զգալով իր ձակտին,
Քալէց հայր, երկնեց նորէն,
Երգել գիտցաւ, երկիր կերտեց աննկուն,
Մինչեւ որ հասաւ, շունչ առաւ կրկին Արարատի շուրջ,
Բոտ մը հողի վրայ, Ազատ ինքնիշխան ստեղծագործելու,
Իր ՄԱՐԴ կոչումի վկայութիւնը տալու աշխարհին...
Եւ ահա օր մ'ալ, Թուրկութիւն Էօզալ,
Շքախումբովն իր, Աղբը Տաղի գերի կուշտին,
Հայապատկան Արարատին դէմ յանդիման,
Սարքեց ռազմափորձ բանակով ահեղ,
Անհաղորդ մնալով խոժոռադէմ ծեր Արարատի
շանթահարող վերջնագրին...

Ու հազարամեայ քաղաքամայր Երեւանին՝
Հայեացքն իր՝ ուղղած թունալից,
Բութ մատն իր թափ տալով կտրուկ,
Կարծես վերյիշեց, արիւնածոր եաթաղանի
սպառնալից ձօձումը հի՛ն,

Ու թուրքը նո՛ր,
Ազերի Գորշ գայլին պարգեւած «(Honoris Causa) Հոնորիս քօզայի»
պատմութեանը հազին,

Թուրկութիւն Էօզալը՝ արեան ծարաւի,
Խաղաղութեան հաշտարար ձիթենիի ոստին փոխարէն,
Ժահր ու մաղձ սփռող ուսուցիչ որպէս՝
Սեղուք Օսմանի թուրք նոր սերունդին՝
Պատգամ տուաւ՝
Դաս Առաջին.-

Թէ՛ հարկ է հայերուն վախցնել նորէն,
Թէ՛ Գորշ գայլի սուր ատամներ պէտք է միշտ ցոյց տալ,
Թէ՛ նորէն ջարդի պար պէտք է սարքել,
Պէտք է որ՝ հայոց սուրբ հողը անապատ մնայ,
Հայրենի իր տունը քանդել իր հիմքէն,
Սրբատաշ խաչքարերը՝ փոշիի վերածել,
Լուսատենչ հայր՝ արեան մէջ խեղդել,
Օրէնք ու կանոն ջնջել անպատիժ,
Ստեղծագործ չարքաշ հայ մարդուն սլացքը սանձել,
Հայն անդիմազիծ եւ հայրենագուրկ,
Աշխարհի կրկէսներուն հարթակին վրայ՝
Գնչուներ իբրեւ... ծաղրի ենթարկել:

Դասախօս Էօզալի պատգամ դաս Երկրորդ.-
Միամիտ հայու դարատր հողին տէր դառնալ ընդմիշտ,
Նենգափոխելով պատմութիւնը հին,
Շրջել դերերը, փաստել տակաւին՝
Որ հայը եկուոր էր Հայկի երկրին մէջ,
Թէ՛ թուրքն էր եղած, ու կը մնայ դեռ՝
Ադամի օրէն, հարազատ տէրը՝ Աշխարհին Հայոց,
Թէ՛ հայը, պատմութեան արշալոյսէն իսկ, էր ու կը մնայ
Անդիմազիծ թափառական, զնչու, քոչուոր՝
աշխարհի չորս ծագերուն.

Ապա դաւանիլ աշխարհին առջեւ,
Որպէս «(Dogma) Տոկմա» թրքական,
Եաթաղանի օրէնքով նուիրագործուած,
Եւ անապատի վերածուած Հայոց Աշխարհը՝
Թո՛ւրքի հայրենիք, ու տակաւին՝ իր «Եուրտ»-ը վերջին...

Ըսէ՛ք, բարի մարդիկ աշխարհի,
Ըսէ՛ք դո՛ւք, մարդակերպ թուրքեր,

Մօտալուտ «Թուրք դարի» քոչուոր ձամբորդներ,
Գորշ գայլերու սովալլուկ վոհմակներ,
Համաթրքութեան առաքեալներ մոլեգին,
Հայկի երկրին մէջ հին, մեր հետքը ջնջող,

Մութ դաւեր նիւթող՝ Թուրկութ Էօզալներ...
Ըսէք, մեր դասը արդեօք լաւ սորված կ'ըլլա՞նք
Եթէ մահուան դէմ, մենք ալ մահուան կսկիծ տանք...
Լաւ սորված կ'ըլլա՞նք արդեօք դասը մեր,
Եաթադանին տակ, անգամ մը ես,
Հլու հնազանդ դնենք պարանոցը մեր,
Եւ եղեռնագործ ձեր ձեռքերուն «բարի գործերուն» համար՝
Աղաղակենք՝ միշտ դալա՛ր մնաք... «Փա՛ռք Ալլահին...»

Երագդ ա՛յդ է թուրք «քաղաքակիրթ»,
Որ հայը մնայ գետնամած դիրքով թշուառին,
Ինք՝ որ Տիգրան Մեծերու փառքը ապրեցաւ,
Լեռն ու Հեթում արքաներ ծնաւ,
Գաւազանաւ երկաթա՛ւ տիրող Բագրատունի ունեցաւ,
Յարութեան կրօնը՝ Հայաստան բերաւ,
Նոր հաւատքը դաւանած՝ Աւարայր մտաւ,
Նոյն Յեղի Զայնով՝ Սարդարապատ հասաւ...
Ու հիմա կ'ուզէք որ հայն ինքնիշխան,
Ծնկաչոք ու ստորնաքարշ...
Փա՛ռք տայ Ալլահին,
Որ թուրքի թուրը մեզ շնորհ ըրաւ,
Ու դատապարտեց մեզ՝ արդի կորստեան,
Անարգ ստորին մահուան,
Սեփական ազգի յաւէտ վերացման:

Էօզալներ բոլոր թրքական եւրօտի,
Աթաներ Քեմալ, Թալէաթ-Էնվերի ժառանգորդ թուրքեր,
Գիտենք, որ կ'ուզէք ու կը ծրագրէք մութին մէջ խաւար,
Վերջակէտ դնել՝ Յաւերժի ձամբորդ հայ ազգի երթին,
Կուզէք ջնջել անհետ, Պատմութեան Գիրքէն՝
Հայ Յեղի անուն,
Ու յաւէտ փակել լուսատուր էջը Հայկեան սերունդին:

Միթէ պատմութեան մեր դասը ցատտ՝
Լաւ սորված կ'ըլլա՞նք ոճրածին թուրքեր,
Եթէ ազգովին գովերգենք անդու,

Որ շնորհապարտ ենք թուրքի շնորհիդ՝
Որ եղեռնագրեց, անձիտեց ազգս համօրէն,
Ջարդեց կէսն ազգին,
Ու միս կէսին թողուց՝ յուղարկատրի դերը տխրալի...
Ու ամէն Ապրիլի, ապրելու ամսին,
Բարի դրացնութեան թրքամէտ «Կուրսի» այս նոր շրջանին,
Անցեալի ոճրային եղեռնը ընդունելու փոխարէն՝
գղջում կարդալով ի խորոց սրտի,
Եւ տարեդարձային մաղթանքներ բաշխելու փոխան,
Կը լսուի նորէն մահուան լուր,
Նորէն կարմիր լուր՝ «թուրք բարեկամէն»,
Պղտոր Արաքսի դիմացի ափէն,
Շեփորելու համայն աշխարհին՝
Թող նորէն մահ գրուի հայու ձակատին,
Դժոխային ջարդի պար սարքուի կրկին:
Ու կը լսուի հանդիսատար,
Թուրք ուսուցչին պատգամն «հոգածու»,
Թէ հարկ է հայուն շարժիլ միշտ խոհեմ,
Ըլլալ հլու եւ բարի, անջիղ, անարի,
Կը լսուի նորէն՝ ստրուկ մնալու քարոզը սին՝
Թուրկութ Էօզալին:
Մենք շատ լաւ գիտենք,
Դուք կ'ուզէք ջնջել առյաւէտ՝ երկրէն հետքը մեր,
Ու անբակեալ հայրենի սուրբ հողիս վրայ,
Անթաղ անհատակներուս անդաստանին մէջ՝
Կանգնիլ անպատիժ,
Ոռնալ մոլեգին,
Սպառնալ թլոյրին՝
Յոյնին ու Սերային, կրօնակից Արաբին,
Նոյնիսկ ապստամբ Քիւրտին,
Ու մանաւանդ Հայ Ազգի յանձնառու բոլոր զաւակներուն...
Ու շեփորել գնձագին, որ հայն ա՛յս անգամ՝
Դամբանեալ մտաւ թանգարան...
Ու հռչակագրել դուք ձեզ՝ Տէրը ձեր «եւրօտին»
մեր հայապատկան,
Տէր առաջին, սակայն՝ պահակ վերջին,
Ու կոչուիլ ապա՝ նոր օրերու թուրք քաղաքակիրթ,
Մօտալուտ «Թուրք դարի» լուսամիտ առաքեալ.
Երա՛նի աշխարհի մարդոց,
Եւ աչքը լո՛յս թուրքին...

Բայց կանգ ա՛ն, մեծամիտ ու գոռոզ, ամբոխ խելագար,
 Եւ դո՛ւն ով Էօզայ նորոզ հանգուցեալ,
 Լսէ՛, թէ հայր ի՞նչպէս սորված է, ի՞նչ կերպ ընկալած է,
 Դարերու խորէն, դարերու փորձով,
 Ի՞նչպէս սերտած է իր դասը անգիր,
 Ի՞նչպէս սահմանած է իր դերը վսեմ,
 Ու խեցէք դուք, Մոնկոլեան տիպի Էօզայի թոռնե՛ր՝
 Ճակատագիրը Հայուն՝ անշէջ կրակի հուրով է տաղուած,
 Անոր գալիքը՝ Կենաց Գրքին մէջ գրուած.
 Հայր պիտի ապրի առ յաւիտ,
 Պիտի բազմանայ դեռ՝ հազարապատիկ,
 Յաւերժ պիտի քալէ աշխարհի առաջիններուն հետ՝
 Ստեղծագործելով, Տաղանդի ուժով,
 Պողպատեայ կամքով,
 Աշխատանքով արդար,
 Նորէն բոլորուած՝ հայացած Արարատին շուրջ,
 Պիտի դառնայ անպարտելի ուժ՝ իր Արի-Արանց
 զաւակներուն Դաշինքովը Սուրբ
 Մարդկութեան յաղթ երթին՝ անխարդախ ուղեկից,
 Անդաւաճան դրացնութեան մոլեգնօրէն հաւատալով՝
 Արդարութեան երկրպագու...

Պէլյուս
 20/04/1993

ԱՆՄԵԿՆԵԼԻ ՈՒՒ ՀԱՅԿԵԱՆ

Հրաշածին խորհուրդ Նայիրեան՝
 Անսկիզբ ու անվախձան.
 Անթափանց շղա՛րշ, թէ
 Աստուածակերտ լեռնաշխարհ,
 Դրախտավայր բոտ մը հող.
 Իմ քարաշատ Հայաստան,
 Գանձ անկողոպտելի՝ Թորգոմեան տոհմի.
 Նիզակուած ժայռերուդ մէն մի խորձ՝
 Զերդ քարացած սահմանապահ զինուոր,
 Պողպատեայ վահանով զրահուած:
 Հայրենի Ոգի,
 Աղբիւր կենարար,
 Նոյնիսկ անբակուած Անիիդ մէջ՝
 Քաղաքակրթական աւելի ներուժ է խտացուած,
 Քան՝ արիւնարբու սելձուք բարբարոսի
 քանդող հզօրութեան մէջ:
 Կողերուդ մէջ ցաւատանջ, պահած ես առյաւէ՛տ,
 Հիւլէ մը՝ Նահապետէն մեր Հայկի,
 Հզօրութիւնէն՝ Մեծն Տիգրանի
 Նշխարի մը հայատառ՝ Մեսրոպ Մաշտոցէն,
 Տնքացող սրտի խոց՝ Նարեկացի Գրիգորէն,
 Երգի լուսափայլ խազ՝ Կոմիտասի թռիչքէն,
 Անկոտորում վճռակամութիւն՝ Արամ Մանուկեանէն,
 Յեղափոխիչ խիզախութիւն՝ Նիկոլ Դումանէն,
 Աշխարհիկ սրբութիւն՝ «Նազովրեցի» Զաւարեանէն,
 Յեղակոն հերոսութիւն՝ Գարեգին Նժդեհէն,
 Վրիժառու բազուկ՝
 «Յարատեւ կռուի» Քրիստափորէն,
 Բաշ Ապարանեան անզուսպ սխրանք՝
 «Ահարկու գիւղացի» Դրոյէն,

Անխնայ վրէժի շեփոր՝
Սարերու Արծիւ Անդրանիկէն,
Արդարահատոյց անվրէպ գնդակ՝
Սողոմոն Թեփլիրեանէն,
Կիզող անէծք եղեռնամոռի՝
Ահարոնեան թուխ Արամազդէն,
Երկաթէ շերեփ՝ Խրիմեան Հայրիկէն,
Հողակցուած տարածք հայրենի՝ Ռուբէն Փաշայէն,
Հայրենեաց յուշի ծուէն՝ Վենետիկի Ալիշան Սուրբէն,
Խամսայի Մելիքութիւնը՝ Սպարապետ Մխիթարէն:

Իմ քարատաշ Հայաստան,
Բազմադարեան վիշտդ խո՛ր,
Շաղախուած՝ դարահոս արին-արցունքիդ՝
Կոփեցին անդու Հայկեան անմեռ Ոգիդ.
Դո՛ւն, անառիկ բերդ ժայռանիստ,
Իմ քարքարոտ Հայաստան,
Անկորնչելի աղամանդեայ գանձ,
Զինասպիտակ Արարատ,
Վեհանիստ աննինջ հսկող՝
Նայիրեան աշխարհիդ:

Պէլրուֆ
08/02/2015

**ՊԱՏԳԱՄ ԱՐԴԱՐԱՀԱՏՈՅՑ ՍՈՂՈՄՈՆԵՆ՝
«ՊԱՊԱ» ԹՈՒՐՔ «ԵՐԿԱԹԱՁԵՈՒ» ՏԷՄԻՐԷԼԻՆ**

ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ՍԻՒԼԷՅԱՆ ՏԷՍԻՐԷԼԻՆ

«Կարող են մարդիկ խախտել լեռներին,
Ու քաղկի ուժով սանձել գեպերին... քայց՝
ո՞վ է կարող՝ երկնքում շողացող Աստուծոյն
վարագոյր քաշել...»

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Կարդացի նորէն ձմրումով սրտի,
Սահմանազրոյխ Կարսէն արձակուած,
Հազարազանգ Անիի մօտէն՝
Մաղձալից խօսքդ «բարի դրացիական»,
Անասնական կիրքով անյագորդ,
Ծարաւ արինին՝ Հայկեան հին ազգիս:
Կարդացի նորէն՝ յուսախար ափսոսանքով
լատտես հայու,

Մոնկոլեան բնազդի ատելութեամբ լի,
Սպառնալիքներդ ահարկու՝ ուղղուած
Հայաստանի բուռ մը սուրբ հողին,
Ինքնիշխան տէր դարձած ազգիս,
Ժխտելով գոյութեան հրաշքը անոր,
Հայրենի հողը՝ ահաբեկչութեան բոյն հռչակելով,
Հայութեան լինելութեան գործընթացը՝
Խախտելու նենգ միտումով...
Զուր փնտռտուքի մէջ է անդադար,
Անհանգիստ միտքդ՝ ով մոնկոլ-թաթար.
Հայաստան լոյս աշխարհին է արմատ ահաբեկչութեան,

Թէ ժայռափոր խարխիս Նոյեան Տապանի,
Նոր ծաղկեալ օրրան՝ մարդկային ցեղին,
Միածնաէջ Տաճար սրբութեան՝ դարատր հաւատքի,
Բարեկանութեան Այգի հիւրընկալ,
Բերրի մրգաստան՝ դաշտ Արարատեան,
Մեկնակէտ օրհնաբեր՝ Խաղաղութեան Աղանիին,
Օթեան վերջին՝ Հաշտութեան դաշինքի...

Հայրենի երկրիս մէջ խաղա՞ղ,
Մոնկոլ թուրք գլուխներ հարուածողներ չկան,
Բայց բիրտ ակնով երկինքը պեղող՝
Գիտնականներ դեռ շատ կան,
Հրազդան գետի երկայնքին՝
Եօթը լոյսի կայան կառուցողներ կան,
Խոհուն գլուխներ կան ու կը մնան,
Սակայն նոր թուրքի գլխին բախուելիք ձեռքեր չկան հոն՝
սահմանէն անդին,

Այլ բարեկանութեան եւ գործակցութեան պարզուած ձեռքեր,
Բարիքներ լոկ սփռող՝ ստեղծագործ միտք,
Գիտութեան լոյսը աշխարհին տանող,
Երգ ու նուագի ցնծութեամբ՝ չարը խափանող,
Իր բերքն ու միրգը, նոյնիսկ իր ատր հացը՝
Կարօտ անօթի թշնամոյն հետ կիսող...

Ո՛չ, Տէմիրէլդ «իմաստուն»,
Ջախջախուելիք գլուխներ չկան Հայաստանի մէջ,
Ո՛չ ալ բիրտ կռուի պատրաստ՝ ահաբեկիչ բանակներ,
Այլ՝ բիրտ գիտնական խոհուն մարդիկ,
Գլուխներ լոյսի, գլուխներ յոյսի,
Գիտութեան լոյսը՝ կոյր խաւարեալին
Անանձնական սիրով բաշխող առաքեալք:

Արածանիի աւազանը՝ օրրանն է հայոց,
Ծնուցիչ հարկատուն՝ Աստուածատուր Եփրատին,
Երկնապարգեւ ջուր կենարար,
Անիշ սնուցիչ՝ ծարաւ Թուրք ու Քիւրտ մարդուն,
Հայուն, Արաբին...
Կարող են մարդիկ ամբարտակ կառուցել,
Բայց հունը փոխել գետերուն օրհնեալ,
Ու գրկել ջուրէն կենսատու՝ ողջ ժողովուրդներ,

Ոճիր է անա՛րգ,
Ու ահատր դաւ՝ Մարդու կոչումին:

Դաւիթի որդին՝ Սողոմոնն իմաստուն,
Աստուածաշունչ Մատեանին մէջ՝
Կրակէ գիրերով պատգամեց մարդուն,
Թէ՛ «Իմաստութեան սկիզբը՝ Աստուծոյ վախն է»
Թէ՛ «Յիմարները՝ իմաստութեան լոյսը կ'անարգեն»:
Անէն ազգ ու ցեղ, իր գոյութեան
ձակատագրական մէկ պահուն՝

Կը ծնի Սողոմոն մ'Ահեղ,
Կամ Սողոմոն մ'արդար.
Օսման թուրքը ծնաւ Միլէյմանն իր Սքանչելի,
Ազգս ալ հինատուրց, բայց կոտորակեալ՝
Ծնաւ Սողոմոնն իր Արդարահատոյց:
Դեռ երէկ էր,
«Քաղաքակիրթ», «աշխարհիկ» Թուրքիան,
Պատմութեան բեմ հանեց՝ ջարդերու լեզուով,
Ժողովուրդներու «դասեր» շռայլող՝
Թուրկուք Էօզալներ՝

Այսօր կը տեսնենք բեմահարթակին՝
Ցեղասպանութեան ոճիրը կրկնելու պատրաստ,
Հայաստան Լոյս Աշխարհին մէջ՝
Սահմանային ահաբեկիչներու արմատներ փնտռող,
Բարի դրացնութեան «Կուրսը» այսպէ՛ս ըմբռնող՝
Նոր օրերու իմաստուն Միլէյմանը թուրք,
Որ արդարութեան խորհրդանիշ ըլլալէ առաջ՝
Մականուանեալ է «Տէմիրէլ Ահեղ»,
Ու երկաթ ձեռքով այս «Պապա» թուրքը՝
Ջախջախուելիք գլուխներ կ'որոնէ՝
Արաքսի ափին, Կարսի սահմանին մօտ...

Ծատ դարեր առաջ,
Երբ տակաւին Հայկական Լեռնաշխարհի տարածքը՝
Մոնկոլ ու Թաթար, Սելձուք եւ Օսման՝
Հայրենի հողս բռնագրաւած չէին,
Հայաշխարհը ծնած էր արդէն՝
«Տիեզերակալ» «Շահնշահ» Բագրատունի հզօր արքան,
Սմբատ Երկրորդը հայոց՝ իր հօտը կը հովուէր՝
Գորշ գայլերուն դէմ «գաւազանաւ երկաթաւ»...

Դարերը սակայն փոխուած են անդարձ,
Մարդը իր մարդ եղբօր գիշատիչ գազանը չէ այլեւս,
Անասնական բնագոյով՝ մահուան դէմ մահ սփռող էակ.
Խաւար դարերու քարայրներու վայրի բնագոյով մարդը՝
Բանտուած է առյաւէտ:
Մարդ էակի կոչումը այս աշխարհին մէջ՝
Իր նմանը՝ մարդու գազանութիւնէն պաշտպանելու
վեհանձնութեան մէջ է.
Պատմութեան դասը կարծես թէ իրացուցած
կը թուին ըլլալ՝
Երրորդ հազարամեակի 21-րդ դարը՝
«Թրքական դար» հռչակագրող՝
Նոր օրերու թուրք ձամբորդները...

Շրջափակուած Հայաստանը՝
Իր Աստուծոյն հետ մինակ մնացած,
Գոյատեւումի, մահու եւ կենաց պայքար մղող՝
Լոյսի ծարաւի,
Արդար դատի անտեղիտալի պահանջատէր,
Բարեկամութեան հաշտարար Զիթենիի ոստը երկարած՝
Շինարար հայը մէկ կոչ ունի միայն,
Անանձնական իղձ մը խո՛ր,
Համազգային անխախտ հրատէր՝
Դարատր զրկանքի, ու ջարդերու պատուհասով
ջրդեղուած կամք,
Ժայռացեալ փորձառութեան արդիւնք,
Նոյնիսկ երէկի ջարդարարին ներելու գնով,
Եւ բարի դրացնութեամբ հաշտ ապրելու՝
թուրք ժողովուրդին հետ,
Ստեղծագործ մտքի իր գիտերուն փորձն ու հնարքը՝
Իր դրացիներուն ու մարդկութեան ընծայաբերող Հայը,
Միայն թէ, ա՛խ միայն թէ դադրէին առյաւէտ՝
Նոր ջարդեր սարքելու,
«Անատոյական» պատմական դասերը վերսկսելու,
«Ահաբեկչութեան արմատներ» Արարատի շուքին՝
Հայաստան աշխարհին մէջ փնտռելու մտայնութիւնը,
Եւ գլուխներ ջարդելու եւ ջախջախելու՝
Հին օսմանեան, մոնկոլատիպ,
Էօզայեան ու Տէմիրլեան
Սին սպառնալիքները...

Աշխարհիկ, քաղաքակրթեալ, պետական լուրջ դէմքի
հռչակ վայելող՝
«Աթա Քեմալէն» ետք՝ «Պապա Միլէյման»-ը՝
Պարտի ըլլալ նաեւ «Հաքիմ» իմաստուն,
Ու մոռնայ առյաւէտ՝ մահացու ատելութիւնը,
Կրծող նախանձը, եւ «Տէմիրլէլ» երկաթ իր ձեռքը,
Եւ բարեկամութեան ձեռք երկարէ՝
իրեն եւ իր ժողովուրդին պարզուած՝
Անյիշաչար, Ստեղծագործ ու
Շինարար Հայ Զեռքերուն:

Պէլրուք
14/11/1994

**ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՄԱՏԻ ՀՊՈՒՄԸ ՃԱԿՏԻՆ՝
ՅԱԻԵՐԺԻ ՃԱՄԲՈՐԴ ԳՈՒՐԶԱԴԵԱՆ
ՏԻԶԵՐԱԳԷՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ**

ՃԱՆՉՆԱՆՔ ՀԱՆՃԱՐԵՂ ՏԻԵՉԵՐԱԳԷՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

ԱՆ ԼԵՈՆԱԾԵԱՐԿ ԲՈ՛ՒՌ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ՝
ՎԻՇԱՊԱՔԱՂ ԹՈՒՉՔՈՎ, ՏԻԵՉԵՐՔԵՆ ԵՒ ԱՍՏԴԵՐԵՆ ԱԼ
ԱՆԴԻՆ՝ ՅԱԵՐԺԻ ՃԱՄԲԱՆ ԶԱՐՏԵՍԱԳՐԵՑ

*«Բախարատր է այն ժողովուրդը, եթէ
նա ընդունակ է երբեմն-երբեմն ծնել
առաջնորդներ հանճարեղ՝ դարերի
խորքը քափանցող հայեացքով:*

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԶԱՂԵԱՆ

*«Հայր չի ճնշել մէկ ուրիշ ազգի,
Ոչ ո՛ք չի փոժել զարկից մեր բազկի,
Եթէ փիրել ենք՝ չիրքերով միայն,
Եթէ գրել ենք՝ գրքերով միայն:*

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Գերիզօ՛ր երկիրներ ձեռքի մը մատներուն համրանքով կան:

Հիլեական կարողականութեանց տիրացած երեսունէ աւելի երկիրներ կան, ու անոնց թիւը աճ ալ կրնայ արձանագրել:

Կատարեա՛լ սպառազինումով եւ մահասփիռ զէնքերով՝ բազմահազար բանակներ շարժման մէջ դնող պետութիւններ կան:

Եւ սակայն տիեզերական աստղագիտութեան հետազօտութեամբ զբաղող, գիտաշխատանոցներ կանգուն պահող, տիե-

գերքի եւ երկնային մարմիններու քարտեսագրումը ճշգրտօրէն իրականացնող, տիեզերական աստղադիտական յատուկ հեռադիտակներ սարքող եւ անջրպետանաւերուն մէջ տեղադրող ազգեր, պետութիւններ, գիտական հիմնարկներ եւ անհատ գիտնականներ, շա՛տ, շա՛տ քիչ թիւով կան:

Այդ քիչ թիւով գիտնականներէն է հայազգի եւ միջազգային ճանաչում վայելող, տիեզերական գիտնական, ֆիզիքս-մաթեմատիկական գիտութիւններու Տոքթօր Փրոֆեսօր՝ Գրիգոր Արամի Գուրգադեանը:

Հանճարներու եւ գիտական ուղեղներու գերազանց առատութեամբ յատկանշուող հայ արգանդը՝ 1922 թուականին Իրաքի Պաղտատ քաղաքին մէջ ծնունդ տուաւ իր մէկ զաւկին՝ Գրիգոր Գուրգադեանին, որ հետագային տիեզերական անծայրածիր տարածութիւնները պիտի պեղեր, «Օրիոն-1» եւ «Օրիոն-2» աստղադիտական յատուկ հեռադիտակները իր հսկողութեամբ պիտի սարքուէին, եւ զանոնք անջրպետանաւերուն մէջ տեղադրելով, երկնային նորանոր մարմիններու մասին արժէքաւոր տեղեկութիւններ հաւաքելով, տիեզերագիտութիւնը ուշագրաւ նիւթերով հարստացուց եւ տիեզերքի քարտեսագրումը հաստատագրեց:

Ան տիեզերական գիտութիւնը հարստացուց՝ պատիւ բերելով իր պատկանած հայ ազգին եւ մեծ նպաստ՝ ամբողջ մարդկութեան եւ գիտութեան յառաջընթացին:

«Սակայն մարդկային մտքի եւ գիտական աշխատանքի նուաճումները կարելի չէ արդիւնաւորուած համարել, այնքան ատեն, որ անոնք արդարօրէն չեն ծառայեր մարդ անհատին եւ մարդկային ընկերութեան ֆիզիքական, հոգեկան, տնտեսական եւ քաղաքական պահանջներու ձեռքբերման եւ բարուքման»:

Հայ գիտական մտքի աննիւթական անգնահատելի ներդրումով եւ նախկին Խորհրդային Միութեան բազմամիլիոն տոլարներու յատկացումներով, տիեզերական գիտութեանց եւ երկնային մարմիններու ուսումնասիրութեանց մարզին մէջ Հայաստան նուաճած է նախանձելի առաջատար դիրք՝ աշխարհի առաջիններու շարքին:

Աշխարհի նոր դասաւորումով եւ հակառակ Միացեալ Նահանգներու տիեզերագիտական ակադեմիկոսներու զգուշա-

ւոր խանդավառութիւններուն եւ վերապահ տարակուսանքներուն, Ամերիկայի Անջրպետային Գիտութեանց (ՆԱՉԱ-ի) ղեկավարներ եւ Միացեալ Նահանգներու պետութիւնը, բացառաբար եւ առաջին անգամ ըլլալով, գրաւոր համաձայնագիր կնքած են փոքրիկ Հայաստանի Վիշապաքաղ Վահագնի թոռներուն հետ...:

Մօտիկ ապագային տիեզերական աստղագիտութեան հետազօտութեանց Գառնիի գիտաշխատանոցը կը դառնայ Երկիր մոլորակին վրայ հաստատուած աշտարակ - դիտարան՝ տիեզերքը պեղելու, երկնային նորանոր մարմիններու դիրքային տեղադրումը ճշդելու եւ տիեզերքի քարտեսագրումը ամբողջացնելու համար:

Այս բոլորը արդիւնք են Գուրգադեանի եւ իր գիտաշխատող գործակիցներուն հսկողութեամբ սարքուած եւ անջրպետին մէջ գործի դրուած «Օրիոն-1» եւ «Օրիոն-2» տիեզերական յատուկ աստղադիտական հեռադիտակներուն, որոնք «Սոյուզ-13» անջրպետանաւուն մէջ տեղադրուելով՝ տիեզերական թռիչքներուն ընթացքին տիեզերքին եւ երկնային այլ մարմիններու մասին արժէքաւոր տեղեկութիւններ փոխանցած են Երկիր:

Հակիրճ այս տեղեկութիւններով ջանացի լոյսին բերել Գուրգադեան գիտնական հանճարեղ հայուն դէմքը:

Ստորեւ՝ անձնապէս վերապատմուած դէպքը արդարօրէն կը բացայայտէ տիեզերագետ գիտնականին դերն ու տեղը տիեզերագիտութեան մէջ:

Զինախառն ցուրտ գիշեր մը, 1973 թուականի Դեկտեմբեր ամսուն, առաւօտեան կանուխ ժամերուն հեռաձայնը կը հնչէ Երեւան քաղաքի տուններէն մէկուն մէջ:

Հեռաձայնողը Մոսկուայէն, Տիեզերական Գիտութեանց ամենահեղինակաւոր կեդրոնէն, տազնապահար պատասխանատու ակադեմիկոս մը, խնդրելու պէս կը հրահանգեր Գուրգադեան Գրիգոր հայ տիեզերագետին, որպէսզի անյապաղ, ժամը 4:30-ին, Երեւան ղրկուած յատուկ օդանաւով Մոսկուա մեկնի՝ «Օրիոն-2» աստղադիտական հեռադիտակին տեղադրման գծով բացայայտուած գիտական **թեքնիք** հարցի մը լուծումը ապահովելու, ապա նոյն հեռադիտակը տեղադրելու «Սոյուզ-13» անջրպետանաւուն մէջ, որ ճամբայ պիտի դրուէր դէպի անջըր-

պետ՝ տեղեկահալարման յատուկ առաքելութեամբ:

Ահա թէ ինչո՛ւ տիեզերական առաջատար աշխարհը, եւ ի մասնաւորի Միացեալ Նահանգներու ՆԱՉԱ-ն մեծապէս հետաքրքրուած են Գուրգադեան Գրիգոր հայ գիտնականին յայտնաբերումներով եւ տիեզերքի քարտեսագրումին իր բերած սպառնիչ նպաստին համար:

Յո՛ւս է արդէն Գուրգադեաններու, Յամբարձումեաններու, Ալիխանեաններու, Մերկելեաններու եւ այլ հանճարեղ գիտնականներու ծնունդ տուող հայ ազգին անպարտելի ուժին գաղտնիքը:

Մինչ անդին, Յայաստան Լոյս Աշխարհը շրջափակումի ենթարկող «Գորշ Գայլերու» արեան ծարաւի վոհմակները իրենց ատելավա՛ռ թրջատիպ խարխափումներուն մէջ մոլեգնօրէն կը տուայտին... Արեւելքէն Արեւմուտք, Աստուածային Յանճարածին Մատի հպումէն յաւերժօրէն զրկուած:

Պէյրուք
23/11/2006

**ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒՆ
ՅԱՒԱԿՆՈՐԴԻ ՄՂՉԱՒԱՆՋՈՎ ՏԱԳՆԱՊԱՀԱՐ՝
ՄԵԾԱՄԻՏ ԷՐՏՈՂԱՆ ԹՈՒՐՔԸ...**

ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐՏՈՂԱՆ՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԵՆԳԱՓՈԽՈՂ ՔԱՂԱՔԱԳԷՏԸ

(ՖԱԹԻՅ ՄԵՅՄԵՏ Բ. ՍՈՒԼԹԱՆԻՆ ԿՈՂՄԷ
ՊՈԼՍՈՅ ԳՐԱԽԱՆ ՄԱՍԻՆ ԻՐ ՇԻԼ ԱՐԺԵՒՐՈՒՄԸ)

Յամաշխարհային պատմության անկիւնադարձային դրուագներէն՝ բիւզանդական կայսրութեան «Աստուածարեալ քաղաքին» անկման մասին վարչապետ Էրտողանի արժեւորումը ուշագրաւ է՝ իբրեւ պատմութեան նենգափոխումի գլուխ գործոց: Առ այդ, արժանի է՝ լայն մեկնաբանութեան:

Էրտողան 5 Ապրիլ 1453 թուականին ակնարկելով, Պոլսոյ մայրաքաղաքին անկումը՝ Ֆաթիհ Մեհմետ Բ. սուլթանին ամիսներ տեւող շրջափակումէն ետք, համաշխարհային պատմութեան «Սեւ էջին փակումը» կը նկատէ... ու թրջավարի ինքնախաբէութեամբ, Բիւզանդիոնի «Աստուածարեալ քաղաքին գրաւումը՝ Սելճուք սուլթանին կողմէ «Համաշխարհային լուսաւոր նոր դարաշրջանի մը սկիզբը» կը հռչակագրէ... Երբ պատմական մերկ ճշմարտութիւնը՝ աննախընթաց, սարսափելի եւ սահմուկեցուցիչ դէպքերու բեմադրում մըն է, նոյնինքն Ֆաթիհ սուլթանին կողմէ կատաղօրէն իրագործուած:

Պոլսոյ գրաւման յաջորդող երեք օրերուն համար միայն, Ֆաթիհ Մեհմետ սուլթան արեան ծարաւի իր բազմաժառանգ զինուորներուն կ'արտօներ քաղաքին մէջ անկաշկանդ ու անսահման թալան, ջարդ, կողոպուտ, բռնաբարում, սպանութիւն եւ քանդումներ կատարել՝ առանց խղճահարութեան:

Ֆաթիհ սուլթան, միաժամանակ, մոնկոլածին իր վայրագ զինուորներուն սեռային կիրքերն ալ խենեշօրէն արթնցնելով, «հայրաբար» կը թելադրէր.

«Պոլսոյ մէջ դուք պիտի տիրանաք նաեւ չքնաղ, հոլանի եւ ձիւնասպիտակ մարմիններով կիներուն եւ մարդկային լաիրշ նայուածքներուն եւ անբարոյ արարքներուն տակաւին զոհ չդարձած՝ Բիւզանդիոսի կայսերական տիկնանց եւ իշխանագուն օրիորդներուն»:

Սուլթանին զինուորները, Պոլսոյ փողոցներուն մէջ պատահաբար ձեռք անցուցին շրջապատի սարսափազդու տեսարաններէն ահաբեկեալ՝ Բիւզանդիոսի վերջին կայսր Կոստանդին 11-րդը, ու անոր ոսկեզօծ մուճակներէն ազնուական անձ մը ըլլալը հետեւեցնելով, սուլթանին հրահանգով, եթաղան թուրի մէկ հարուածով կայսեր զլուխը անջատեցին մարմնէն, եւ ցիցի մը վրայ ամրացուցած, երեք օր շարունակ պտտուցուցին Պոլսոյ ակերակ փողոցներուն եւ Օսմանի բանակատեղիներուն մէջ, արիւնարբու սուլթանին ինքնագոհ ու սնափառ ներկայութեան:

5 Ապրիլ 1453-ի առաւօտուն, Կ. Պոլիս «Աստուածարեալ քաղաքը» կը պարզեր հետեւեալ խառնաշփոթ տեսարանը.

500,000-նոց պաշարող հսկայական բանակ, ժամանակին համար մրցանշային, 493 միաւոր ծովէն շրջափակող նաւերու շարասիւն:

10,000-նոց բարձրաձայն գոռացող յատուկ զօրամաս, որոնց հազագնէրէն տուեալ պահուն ազդանշանով արձակուած գոռում-գոչումը՝ սարսափ կը տարածեր ամենուրեք:

Սելճուք բազմահազար բանակը կ'առաջնորդուեր փողերու, ծնծղաներու, թմբուկներու եւ հսկայ տաւուկներու խլացնող խժալուր աղմուկով, եւ յառաջացող բանակին դրօշակիր գունդերուն պարզած անհաշուելի արիւնագոյն ծածանող դրօշակներով:

Պարոն Էրտողան, արդէօք Օսմանի արեան բաղնիքով սկիզբ առած, Պոլսոյ գրաման յաջորդող ու ապա շարունակուող այդ քստմնելի եւ սահմուկեցուցիչ դէպքերը բնական եւ լրացուցիչ հետեւանքները կը նկատէք ակերակներուն վրայ հիմնուած Օսմանեան «փայլուն» դարաշրջանին:

Պարոն վարչապետ, Պոլսոյ 1453 թուականի անկումէն ասդին, արեան ծովերէն անցնելով, եկաք հասաք 21-րդ դար, ու զայն անգամ մը եւս «Էօզալեան» լուսաւոր դար հռչակեցիք, դո՛ւք պատմութեան նենգափոխող տեսաբան, ձեր «պայծառ մտքի» փայլատակող բացայայտումով:

Արդարեւ, Բիւզանդիոսի անկման թուականէն ասդին, բովանդակ հայութիւնը, Օսմանեան հպատակ դարձած բոլոր ազգերն ու ժողովուրդները, օտար մեծ ու փոքր երկիրներու քաղաքագետները, դիւանագետները, եւ համաշխարհային պատմութեան էջերը արձանագրեցին, որ թուրք-մոսկոլ մարդատեսակը դարեր շարունակ եթաղանով, ահ ու սարսափ տարածելով, արեան հեղումով, ջարդեր կազմակերպելով, գերեվարութիւններով, բռնի իսլամացումի ծրագիրներով, ենիչերիներու խառնածին բանակներ կազմելով, ոչ-թուրքերու հողին, կալուածներուն, կեանքին ու ինչքերուն մակաբուծօրէն տեր կանգնելով, ընկճուած ազգերուն հազարամեայ քաղաքակրթութիւնները, մշակութային դարաւոր եւ անգնահատելի կոթողները քանդելով ու փոշիացնելով... Գորշ գայլերու վոհմակներուն ժառանգորդը մնաց:

Սեփական մշակոյթ զուրկ, տափաստաններու «Ալան-թալանի քաղաքակրթութեան» հաւատարիմ հետեւողներ, մարդեակի գազանային վայրագ տիպար, դուք ձեր ձիերու սմբակներուն տակ, դարեր շարունակ տրորեցիք, քանդեցիք ու փոշիացուցիք, ձեզի բռնութեամբ ենթարկած ժողովուրդներուն մշակութային հազարամեայ գոհարները:

Չուր տեղը չէր, որ ֆրանսացի մեծահռչակ ազատասեր բաւաստեղծ փիլիսոփան՝ Վիքթոր Հիւկոն, լաւատեղեակ օսմանեան կայսրութեան տարածքին բռնակալական ու ջարդարարական աւանդութեանց, մարդկային արդարութեանց զօրակցողի իր դիրքէն մեկնելով, յաւերժին համար վկայագրեց.

«Թուրքը անցած է այստեղէն. այսուհետեւ նոյնիսկ խոտ չի բուսնիր այս հողերուն վրայ...»: «Les tures ont passé par là toute est ruine, tout est deuil même l'herbe ne repoussera plus»:

Պարոն Էրտողան, դուք մարդկային աստուածատուր իրաւունքները եւ ժողովուրդներու ազատագրումը գիտութեան կապանքներէն՝ ոչինչ կը համարէք եւ Աթաթիւրքի նոր Թուրքիան, յաւիտենական ձեր հայրենիք «եւրոտը» կը հռչակէք: Դուք, որ Արեւմտահայաստանի եւ Արեւելեան Անատոլիոյ բնիկ ժողովուրդներն ու ազգերը դարեր շարունակ կանխամտածուած, սիստեմաթիկ պետական ծրագրումներով հայրենագուրկ զանգուածներու վերածեցիք, Պոստոսի յոյները, հայկական լեռնաշխարհի հազարամեակներու բնիկ հայութիւնը, ասորիները եւ ձե-

զի կրօնակից միլիոնաւոր քիւրտերն ու ալեւիները պատուհասեցիք, ջարդեցիք եւ ձեր ստեղծած արուեստական «միատարր թրքական եւրօտի» տարածքին բռնի կերպով աշխարհագրական նոր մարդաբաշխումի ենթարկեցիք եւ յամառօրէն անոնց ցեղային ինքնուրոյն էթնիկ պատկանելիութիւնը մերժեցիք:

Մարաշի, Տերսիմի, Տիարպէքիի եւ Հաքարիի ալեւիներուն եւ քիւրտերուն զանգուածային ցեղասպանութիւնը եւ ջարդը իրագործեցիք:

Պարոն վարչապետ, այս օրերուն, ձեր քաղաքական արեւելումին յարմարող, զարգացած, համալսարանաւարտ, աղուեսային խորամանկութեամբ օժանդակ մըն ալ ճարած էք՝ յանձինս նոր օսմանականութեան տեսաբան Ահմէթ Տաւութթօղլուի:

Եւ այսօր, օտար մեծ ուժերու կողմէ պաշտպանուած, անոնց անսահմանափակ զինուորական եւ ֆինանսական նեցուկը վայելելով, «Պատմական» ենթադրեալ առաքելութեան մը եւ «արդար դատերու» ինքնակոչ դատաւորի հնամաշ պատմուճաններ հագած, համարձակօրէն Միջին Արեւելքի արաբական աշխարհին կը ներկայանաք, ձիթենիի հաշտարար կեղծ ճիւղեր ճօճելով, թրքավարի «մարդասիրութեամբ» զրահուած, ձեր պաշտպանեալ Տաւութթօղլուն ալ, Միջին Արեւելքի քրիստոնէայ հալածական բնիկ ժողովուրդներուն եւ զանգուածներուն հովանաւորողի դերով ներկայանալով, Թուրքիոյ արիւնով յագեցած հողերուն վրայ, անոնց ֆիզիքական գոյութիւնը ապահովելու եւ իրաւական վիճակը բարելաւելու համար... Համագումարներու կայացումը կ'առաջարկէք:

Դուք՝ որ դարերով իւրացուցիք ձեր ճնշած ազգերուն նիւթական ողջ սեփականութիւնը, իւրացուցիք եւ փոշիի վերածեցիք անոնց ստեղծած մշակութային դարաւոր կոթողները եւ հայոց պարագային բռնագրաւեցիք ազգի մը ապահով գոյատեւման անփոխարինելի երաշխիք, հազարամեայ բնօրրանը՝ հայրենի ՀՂԸ...

Պարոն Էրտողան, մինչեւ այսօր հայապատկան բռնագրուած հողերուն վրայ անօրէն կերպով հաստատուած ձեր ծոյլ ու մակաբոյծ զաւակները՝ իրենց մեծ հայրերուն գողութեամբ սեփականացուած պարտեզներուն մէջ թաղուած ոսկիի կարասներուն փնտռտուքով զբաղած են... անկուշտ նիւթապաշտութեամբ:

Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիր՝ Զեմալ Աթաթիւրք, 1920-ական թուականներուն, իրեն զօրակցող եւ «ազատագրական» իր շարժումին մղիչ ուժը դարձած Իթթիհատի նախկին ղեկավար դասակարգի Էֆէնտիներուն՝ հայերէն գողցուած եւ յափշտակուած ոսկիի կարասներուն ահագնութենէն եւ հաշուետուութեան հաւանականութենէն ահաբեկուած առաջնորդներուն, սա խօսքերով կը դիմէր.

«Էֆէնտիներ, դուք պարտաւոր էք իմ ստեղծելիք պետութեանս նեցուկ կանգնելու, որովհետեւ եթէ դաշնակից յաղթական իշխանութիւնները հաշիւ պահանջեն, եւ կամ հայերու եւ այլ ազգերու հալածուած ու մորթուածներու ժառանգորդները, իրենց հայրերուն ինչքերուն եւ կալուածներուն համար իրաւականօրէն հատուցում պահանջելու դիմեն, բոլորդ ալ կորսուած կ'ըլլաք, որովհետեւ... (բառացիօրէն՝ Աթաթիւրքի նկարագրութեամբ), կոթը կ'ուտէք...»:

Պարոն Էրտողան, դուք եւ ձեր ծայրայեղ ազգայնականները, պատմական յիշողութեան տկարութիւն ունեցող հայրենակիցները, օտար ազգերու ազատ ու անկախ զաւակներուն ու անոնց քաղաքական առաջնորդներուն կը զլանաք խօսքի եւ մտքի ազատութիւն, ճի'շդ ինչպէս ձեր թուրք քաղաքացիներուն, ձեր տխրահռչակ օրէնքի 301-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն, արդէն կը զլանաք նոյն իրաւունքները:

Ու զարմանալի չէ, որ մինչեւ այսօր, ձեր հռչակեալ բանտերը խճողուած են հազարաւոր այլախոհ թուրքերով եւ օտար «դատապարտեալ»-ներով:

Դո՛ւք, թուրքերդ, անատակ էք ընդառաջելու բոլոր տեսակի դրական ու կառուցողական նախապայմաններու: Անոնց փոխարէն, դուք ոչ-կառուցողական պայմաններ առաջարկելու անմրցելի տաղանդը զարգացուցեր էք ազգովին:

Թրքատիպ «Էտէպիէթի» (մշակո՞յթ) հերոս՝ պարոն Էրտողան, ձեր օրինակով այլամերժ դաստիարակութեամբ սնած անձերուն հոգիները անատակ են մարդկային վսեմ թռիչքներու: Դուք, Թուրքիոյ սահմաններէն ներս, հակառակ ձեր երեւութական զարգացման ու խօսքով «հանդուրժողութեան», մնացած էք այլամերժ:

Ձեր հոգին անհաղորդ մնացած է Բարիին, Գեղեցիկին եւ Վսեմին ձգտելու սխրանքներուն:

Դարերով մասնագիտացաք հուրով, սուրով, ջարդերով, եաթաղանի գործածութեամբ իշխելու, գերեվարուած ազգերուն, եւ անոնց շարժուն եւ անշարժ կալուածներուն ապօրէն տիրաւալով, անոնց մշակութային անկրկնելի կոթողները անխղճօրէն փոշիացնելով, եւ մասնաւորաբար, հայ ազգի զաւակներուն կողմէ՝ «Օթոման Պանքի» եւ Գերմանական «Տոյչէ Պանք»-ի դրամատուներուն մէջ պահ դրուած մեծ քանակութեամբ ոսկին կողոպտելով եւ Եւրոպայի եւ Պերլինի ձեր գաղտնի գանձարաններուն մէջ պահելով, յետևորդ սերունդներուդ արիւնով շաղախուած ժառանգ ձգեցիք:

Արդարութեան, երախտագիտութեան, անյիշաչարութեան եւ զղջումի զգացումները ձեր քաղաքացիներուն համար միշտ ալ խորթ մնացին եւ ազգային մարդկային ոգիի մը գոյառման չծառայեցին ամենեւին:

Դարերու երկայնքին, միլիոնաւոր խաղաղասեր, շինարար, հողին կապուած եւ ստեղծագործ բնակչութիւններ ծրագրուած կերպով, անխղճօրէն ու անպատիժ, անապատներուն մէջ ոչընչացուցիք եւ առանց զղջումի դոյզն զգացում ցուցաբերելու, Պիղատոսի նման, յուղարկաւորի դերով եւ «կարեկցողի» հանդարտ խղճով կը ներկայանաք... կարճ յիշողութեամբ յատկանշուող անտարբեր աշխարհին:

Պարոն Էրտողան, ազգովին արդեօք երախտագիտութիւն յայտնա՞ծ եք հայազգի ճարտարապետ Սինանին, Օսմանեան ու նախորդող դարերուն իր կատարած ծառայութեանց համար, կամ Այա Սոֆիան ճարտարօրէն վերանորոգած Տրդատ անկրկնելի ճարտարագետին, դարերով Օսմանեան սուլթաններուդ հաւատարմօրէն ծառայած՝ արտաքին նախարար Գաբրիէլ Նորատունկեանին, Տատեան, Պալեան, Պեզճեան, եւ այլ ամիրաներուն, անթիւ անհամար շէնքեր ու պալատներ կառուցած հայ երկրաչափներուն, Պետական գանձը եւ ֆինանսները ապահով շրջանառութեան մէջ պահած տնտեսագետներուն, թուրք արդի լեզուն մաքրագտող Յակոբ Մարթայեան՝ «Տիլաչար» կոչումով լեզուագետին, Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ ձեռնահասօրէն օսմանեան հայրենիքին քաղաքական վարկը բարձր պահած դեսպաններուն, հիւպատոսներուն, Եազըճեան եւ Պապիկեան պայծառանուն դիւանագետներուն, Օսմանեան խորհրդարանի «մեպուս», օրէնսգետ, իրաւաբան,

երկրաչափ եւ անկրկնելի հռետոր՝ Գրիգոր Չօհրապին, որուն հանճարեղ ուղեղը ամայի տափաստանի մը մէջ ժայռաքարով ճգմեցիք եւ տեղւոյն վրայ՝ վայրի գազաններու պար պարեցիք:

Ու տակաւին երէկ, ձեր «Եօզէլեան» 21-րդ դարու սեմին, իր խմբագրատան առջեւ, ոճրաբար Զրանդ Տիւնը օր-ցերեկով սպաննելէ ետք, հարիւր հազարաւոր յուղարկաւոր թուրքերու հազագներէն՝ «**Բուլորս հայ ենք, բուլորս Զրանդ Տիւնք ենք**» յանկերգող թրքական կեղծ երախտագիտութիւն բեմադրեցիք:

Միլիոնաւոր հայերու Տեղասպանութիւնը ծրագրած ու գործադրած ջարդարար Թալէաթը ազգային հերոս հռչակեցիք, ու Պոլսոյ մէջ անոր արձանը կանգնեցուցիք:

Պարոն Էրտողան եւ նոր օսմանականութեան աշխարհագրական քարտէսը պատրաստող Ահմէթ Տաւութօղլու, այնքան ատեն որ արդարութեան, երախտագիտութեան եւ ձեր արիւնալի ու ոճրապարտ անցեալի պատմութիւնը անկեղծ զղջումով ընդունելու անընդունակ եւ արդար հատուցման պատրաստակամութիւն չէք ցուցաբերեր:

Կը մնաք՝ թրքական «Էտեպիէթի» կեղծ հերոսներ, հազարամեակ մը առաջ՝ մոնկոլի տափաստաններէն դուրս եկած՝ արեան ծարաւի, վայրագ թուրքեր ու բովանդակ Թուրքիոյ տարածքին, հայապատկան հողերուն եւ պարտէզներուն մէջ, տակաւին երկար ժամանակ՝ ոսկիի կարասներու փնտռտուքով զբաղողներ:

Ձեզի հարկաւոր է ազգովին սորվիլ մարդկութեան ծառայել՝ ստեղծագործ հայ ազգի զաւակներուն պէս, ճակտի քրտինքով իրենց օր-աւուր հացը քարէն հանող, արդարասիրութեամբ, երախտագիտութեամբ, հաւատարմութեամբ, մարդկային քաղաքակրթութեան իրենց նպաստը անսակարկ ընծայաբերող «Գլխագիր Մարդ»-ու նման եւ ոչ՝ որպէս եաթաղանի «քաղաքակրթական Էտեպիէթի» երկրպագու, արեան անյագօրէն ծարաւի, Ֆաթիհ Մեհմէթ Սուլթանի հարազատ հոգեզաւակ:

Պէյրութ
03/03/2012

**ՃԱՏՐԱԿԱՅԻՆ ՀԱՆՃԱՐԵՂ ԹՈՒՉՔՈՎ՝
ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ ԿԵՐՏԱԾ
ՀԻՆՓ ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ**

**ՃԱՏՐԱԿԱՅԻՆ ԹՌԻԶՔՈՎ՝
ԳԵՐՊԵՏՈՒԹԻՒՆ ԿԵՐՏՈՂ
ՀԱՅ ՀԵՐՈՄՆԵՐՈՒՆ**

Նուեր՝ Միջազգային 38-րդ Ճատրակի
Ողիմպիականի ակտիվեան հնգեակին:

*Մեր թուականի առաջին հազարամեակի արշալոյսէն ալ առաջ,
Հայոց Ազգակերտումի գործընթացը՝
Յաղթականօրէն կայացած էր արդէն՝*

*Հայաշխարհի չորս ծագերուն՝
Արտաշէս Աշխարհակալ Արքային զետեղել տուած
Հազարաւոր ժայռափոր սահմանաքարերով՝
Սա՛ դիպուկ փորագրեալ արձանագրութեամբ՝
- «Ճամբորդ դուն կը մտնես Երկիրն Հայոց»:*

*Երկրորդ Հազարամեակի 2008 թուին,
Գերմանիոյ Տրեստէն քաղաքին մէջ,
Հայու ռազմական ծինային նոյն ոգին,
Ու մտային հզօր տաղանդը՝
Միաձուլուած հանդէս եկան՝
Ճատրակային հաւաքական ռազմավարութեամբ,
Հինգ հայ հերոսներուն տարած գերակշիռ Յաղթանակով:
Անոնք կ'աւետէին ամբողջ աշխարհին,
Թէ Աշխարհակալ Արտաշէս Արքային սկսած՝
Հայակերտումի եւ Ազգակերտումի հզօր գործընթացը՝
Այսօր ալ կը շարունակէ իր յաղթերթը,
Զուգահեռաբար, համաշխարհային մշակոյթին բերելով՝
Իր բազկի ու մտքի
Ծինային ստեղծագործ հանձարի նպաստը:*

Ճատրակախաղի չոր տախտակին՝
Քառակուսիներէն իւրաքանչիւրը՝
Կարծես տարածք մ'է աշխարհագրական,
Ուր կը դերակատարեն ու կը գործեն՝
Խորհրդանշական ճատրաքարերով՝
Թագուհի եւ Արքայ,
Ասպետ, Ձիատր, Բերդեր ու Ձինուոր...

Յստակ կանոնագրով ճատրակի՝
Սահմանուած է նպատակը խաղին՝
Անուր պահելն է բերդը անառիկ,
Ու պաշտպանել Թագուհին,
Կեանքի գնով, մահէն ալ անդին...

Հնգեակն ահեղ ճատրակի խաղին,
Ջերդ ասպետներ սպառազէն՝
Ուխտած են պահել ու պաշտպանել հողը հայրենի,
Բոռ մը հողը Հայաստանին,
Թէկուզ ճատրակի քարերով բերդի՝
Նման անառիկ բերդն Արտագերսի,
Ու փրկել առյաւէտ՝
Արքայուհին, պաշարումէն բռնադատեալ:

Հնգեակն ահեղ ճատրակի խաղին,
Հին հիմն դարերէն, պատմութեան խորքէն՝
Վերստին Յարեալ, մեր փառքը յուշող՝
Ապրող Ասպետներն են նոր Հայաստանին:

- Մէկը՝ Արտաշէս Մինասեան,
Ջերդ Արտաշէս Աշխարհակալ,
Անթրոնէն կը պաշտպանէ՝ մտքի զէնքով հզօր՝
Բերդ ու Թագաւոր,
Թագուհի եւ Իշխան,
Ձինուոր, Ձիատր...

- Միւս Ասպետը, ճատրակի հսկան՝
Տիգրան Պետրոսեան,
Կարծես ծինային կրողն է՝
Արքայից-Արքայ Մեծն Տիգրանին՝
Որ շքեղօրէն, ու կայծակնային խոյանքով՝

Դուրս գալով Հայաստանի նեղ սահմաններէն՝
Հայկեան անմեռ ոգիի փառքը կը հիստ,
Եւ այսօր՝ Աշխարհակալն է՝
Հնգեակի միւս Ասպետներուն հետ՝
Ձին ու մաշինի,
Ու հանձարեղ Տիրակալը՝
Հայու հզօր մտքի կայսրութեան:

- Տակաւին երրորդ Ասպետը ճատրակի խաղին՝
Լեւոն Արոնեան,
Կարծես յարուցեալ Լեւոն Արքան է՝
Կիլիկիոյ թագաւորութեան,
Որ տեսարար կը պաշտպանէ՝
Նեղ սահմանները կորիզ հայրենի տան,
Գրաւականը վաղուան՝
Հզօր եւ Միացեալ Հայաստանի:

- Չորրորդ Ասպետը ճատրակի խաղին՝
Գաբրիէլ Սարգիսեանն է՝
Կարծես երկինքէն, Եղեմի դռնէն՝
Երկիր իջաւ՝ թուրով հրեղէն,
Պատուհաս Չարին,
Մեր լինելութեան թշնամի ուժին:

- Ու յետսապահը ահեղ հնգեակին՝
Վլատիմիր Յակոբեանն է՝
Անխոնջ պայքարող,
Ինքնիշխան էմիր՝ ճատրակի խաղին:

Բիւր ողջին Ձեզի,
ճատրակի Ախոյեան՝ հինգ հայ Ասպետներ,
Դուք Երրորդ Հազարամեակի
Առաջին Տասնամեակին իսկ,
Նեղ սահմաններով՝ վերանկախ կորիզ Հայաստանին
տարածքներէն՝ գոյգ առիթներով,
Հինգով թէ անհատ,
Մնացիք անպարտելի,
Գերհսկայ յաղթական ախոյեաններն՝
Համա՛յն աշխարհի,
Ձին ու մաշինի...

Յնծա՝ երկիր Նայիրեան,
Յնծա՝ հզօր Հայաստան,
 Ու Փառք ու Պատիւ Ձեզ՝
Ազգերու Առաջիններուն կողքին,
 Հզօր երթով քայլ պահող՝
Կայացած Փոքր Հայաստանի
 Հերոս Զաւակներ:

Պէյրուք
30/11/2008

**ԺԸՆԵՒԷՆ՝ ՔՐԻՍՏԱՓՈՐԻՆ ՇԵՓՈՐԱԾ
«ՅԱՐԱՏԵՒ ՊԱՅՔԱՐ»-Ի ՆՈՅՆ ՈԳԻՆ՝
ՔՐԻՍՏՈՍԻ ԷՔԻՄԵՆԻՔ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ
ՔԱՐՈՉՈՂ ՎԵՀԱՓԱՌ ԱՐԻ**

ԾԱՌԱՅԱԿԱՆ ՅԱՂԹԵՐԹԻ ԱՆԽՈՆՁ ՌԱՀՎԻՐԱՅԻՆ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԳԱՅԱԿԱԼՈՒԹԵԱՆ 10-ԱՄԵԱԿԻՆ

«Ժողովուրդիս հեկր ըլլալով՝ աւելի
զգացի ծառայութեան մեծութիւնը»

ԱՐԱՄ Ա. (1989թ.)

Հայ Ունիայի՝
Անպարտելի Ոգին կրողդ՝ Իշխանական,
Անթիլիասի Մայրավանքէն՝
Մինչեւ Ծագերն Հայ Սփիւքի,
Պահապան՝ մշտարթուն,
Վահան՝ ամրակոտ,
Աննինջ Նաապետ՝
Սփիւքացեալ ժողովուրդիդ
Ալեկոծեալ Հսկայ Նաւուն:

Արդէն Պատմութեան
Լուսախայլ էջ դարձաւ՝
Ծառայական Առաքելութեան
Օրինաբեր Տասնամեակը Առաջին:

Երէկ էր կարծես,
Արամ Առաջին Կաթողիկոս Հայոց՝
Ծնկաչոք՝
Կը Հայցէր

Արարիչէն Երկնային՝
Շնորհ անհմանալի,
Որպէս Նոր Օրերու Միմովն-Պետրոսի-
Ջի հոգիդ յօժար էր արդէն՝ Տէրը կանգնելու,
Առաջնորդելու՝ Հօտդ Բանաւոր,
Քրիստոսաւանդ
Ծառայական Առաքելութեան:

Տազնապող անդու,
Գործող յարաշարժ,
Սպասարկու Բանին Կենարար,
Վեհափառ Արի,
Պայծառ Տեսիլքի,
Եկար սրբելու
Եւ յաւերժօրէն
Հայ մարդու ձակտէն՝
Խարանը ահաւոր Թուրքի Ոձիրիւն.
Յուցանիշ Ուղի,
Ճանապարհ Բարի,
Ծաղկեալ Գաւազան Ահարոնի,
Որ Մեզ կը տանի՝
Տէր Զօրեան Ուխտի...

Որ արմատներուդ կապուիս հաւատքով,
Ու աղաւաղեալ դէմքդ ձանաչես,
Ու պայծառանուն ՀԱՅՈՒ նմանիս,
Ուխտդ նորոգես,
Նահատակ Յեղիդ Անկատար Դատին՝
Զինուորագրուիս,
Վրէժագոռ Շեփոր դառնաս ահաւոր,

Սորվիս պահել սրտիդ մօտիկ,
Ոսկեղնիկ Լեզուդ Հազարագանձ,
Դարատր Սրբութիւնդ Էջմիածնաւէջ,
Վերանկախ Կեանքի Հրաշքը Հօր՝
Նախահայրերուդ հաւատքովը խոր.

Զանգ Անրելի՝ Վեհափառ Արի,
Դարձեալ ժընեւէն,
Դար մը հեռուէն,

Կշռոյթով հաստատ
Քրիստափորի «Անդու Պայքար»-ի ժընեւեան Ոգին՝
Քրիստոսի եւ Հայութեան,
Նոր Յարութեան,
«Էքիմենիք» վկայութիւնդ
Յաղթարշաւով շեփորեցիր,
Ու Տիրական Բարձր Դիրքէ՝
Մարդկային Արդարութեան
Արշալուստող Յաղթանակին՝
Զօնօրէն դեռ կը սպասես.

Եւ տակաւին,
Վեհդ անխոնջ նուիրեալ՝
Իսլամ-Քրիստոնեայ Տիպոկի,
Ռահվիրայ Նոր Գործընթացի.

Արեւածին Հին Իրանի հողէն պատմական,
Ճշմարիտ Իսլամի հաւատքի Էատարրերը՝
Համարձակօրէն Բարձրագոչող Հովիւ Քաջ,
Երոպայի սեմին մուրեալ՝
Լայիք Թուրք Իսլամի անհանդուրժող
Այլամերժութիւնը խարանեցիր,
Եւ Իսլամական Իրանը Նոր՝
Դրական Առաքելութեան նախապատրաստող՝
Սողոմոնեան Իմաստուն:

Եւ տակաւին,
Արեւելքի Ուղղափառ Քոյր Եկեղեցիներուն՝
Քրիստոսով Միութեան Ամրագրման Ճամբուն
Բացառիկ Դերակատար,

Ու տակաւին,
Թանգարանով Կիլիկեան,
Ազգովին միաձ եղանք՝
Սեպ Մահացու՝ Եղեռնագործ կոկորդին Թուրքի,
Յիշեցում աշխարհին՝
«Թանգարան»-է Յարուցեալ՝ Փառքը Հայ Ազգին,

Իր Խոյր-Աւետարանով, Խաչ ու Սկիհով,
Գաւազանով Իշխանութեան

Դարձած ախտյեան՝
Արդարութեան Յաղթանակման

Վարձքդ կատար Վեհափառ Տէր,
Ծառայական Գործընթացիդ՝ Առաջին 10-ամեակին համար:

Ու հիմա,

Գահակալական փառահեղ Նոր 10-ամեակի սեմին,

Ունին բաղձանք վերամբարձ,

Անյապաղ կայացման՝ Հին Թաքուն Իդձիդ,

Մշտանորոգ Ուխտիդ,

Մշտավառ Սորենի Երազիդ

Հայսփիտքի Կեդրոն՝ Անթիլիասի մէջ՝

Միջազգային նորմերով՝

Միմփոզիմ - Համագումար

«Հայ Դատին եւ Յեղասպան Թուրքի Դատապարտման»

Ի վայելումն՝

Թորգոմեան Յեղի զաւակներուդ,

Ի փառս՝ Հայ Ազգին տառապեալ,

Ի Պայծառութիւն Եկեղեցոյս Հայաստանեայց,

Հօրացում՝ Վերանկախացած Հայրենիքիս:

Պէլրութ
20/07/2005

**ՀՐԱՆԴ ՏԻՆՔ՝
ՈՂՋԱԿԻԶՈՒԱԾ ՍՊԻՏԱԿ ԱՂԱԲՆԻ**

* Վեհափառ Արամ Ա.ին յանձնուած՝ Անթիլիասի վեհարանին մէջ:

ԽՈՂԵՐ

ՀՐԱՆԴ ՏԻՆԵԻ ԱՆԱԽԱՐՏ ԵՐԱԶԻՆ ՀԵՏՏԵՐՈՎ

Մահմանաքանդ «Ալլոսափոր»,
Ու սերմնացան աղաւնակերպ,
Համշէն հայու խո՛ր ինքնութեան
Բացայայտման ձարտարագէտ,
Նոր օրերու անվախ հերոս՝
Թրքաշխարհի մութ երկրին մէջ,
Երազասպան գնդակի զո՛հ՝
Թուրք այլամերժ երկնքին տակ,
Ողջակիզուած աղաւնի...
Հոգիդ սակայն իբրեւ արծիւ,
Խեղդող կապանքներէդ ձերբազատ,
Կը սաւառնի՝ Պոլսէն մինչեւ Մալաթիա,
Ու Սասունէն՝ մինչ ժայռանիստ Գարահիսար,
Թուրքի էութիւնը խորապէս ձանչցած միւս՝ Արծիւին,
Անդրանիկին կողքին ձախրելու...:
Քանզի Տինքը թուրք չէր,
այլ գտարիւն հայ,
Գերեվարեալ Հայաստանի բոսորագոյն հողի կողին՝
Յոյսի Ալլոս լուսասփռող գրիչ...
Վառ երազող հէք հերոս Տինք,
Չանդրադարձար թէ ունայն է երազել ու
սպասել ապարդիւն...

«Բոլորս հայ», «Բոլորս Տինք»
Բարձրագոչող թուրանածին ամբոխին մէջ...

Իմացեալ մահով՝ անմահութեան ուղեւոր,
Հէք հերոս Տինք,
Երանի՛ թէ համոզուէիր, քիչ երագէիր՝
Խաւարամիտ, «խօսքով լայիք» կրօնամուլ թուրքի կողքին,
Երանի՛ թէ գիտակցէիր՝
Քրիստափորեան պայքարի իրաւութեան,
Երանի՛ թէ «ակօսելով»՝ հրաշածին սուր կոփէիր,
Երանի՛ թէ հաւատայիր՝

Սահմանաքանդ սուր գրիչիդ հաւասար՝
Բիրտ ուժի առհատութեան...
Եւ սակայն՝

Դուն անխոռով, հաստատակամ,
Պատռեցիր ընդմիջտ՝ թուրքի կեղծ ինքնութեան քողը,
Խօսքի ու մտքի ազատութեանց թշնամի դէմքը,
Հոգիներու մոլեխիւնդը,
Անարգ ցեղասպանի խարանը,
Մարդակերպ Գորշ գայլի անպատիւ հռչակը,
Իր էութենէն սարսափող թաքուն թուրքը...
Պատիւ ցեղիդ արեան,
Ամենայն տեղ հաստատեցիր
Թէ՛ մոնկոլատիպ, Օսմանի թոռ՝
Թուրքերը, բոլոր, բոլոր դարերուն,
Եղած են, ու կը մնան՝
Սուլթաններ կարմիր,
Թալէաթ ու Էնվեր,
Ճեմալ ու Քեմալ, ու մինչեւ Իսմէթ,
Մինչեւ Թուրկուֆ Էօզալներ,
Մինչեւ Տէմիրէլ,
Մինչեւ Էրտողան...
Մաքրագործումի մէկ ու միակ գործելաձեւի
խոր կը հաւատան,
Կանխամտածուած ու ծրագրուած՝
Ջարդի, սպանդի, ցեղասպանութեան,
Հայրենի երկրիս բռնակցման ու գերավարման...

Երբէ՞ն ի վեր, այլամերժ թո՛ւրքը սելճուք,
Իր դարպասէն ներս, թէ Երոսպայի սրտին՝

«Քաղաքակիրթ», «աշխարհիկ»-լայիք»,
Խօսքի եւ ազատութեան ռահվիրայ,
Ու արդարութեան «ջահակիր» դարձաւ...
Թուրքը երէկ, նաեւ այսօր եւ այսուհետեւ,
Էր, ու կը մնայ՝

Կեղծ բարեկամ Ալեւիին,
Կրօնակից Արաբ ազգին,
Քիւրտին ու Զէրքէզին,
Ու մանաւանդ Հայ անունին,
Հայո՛ւ հողին ու ոգիին, մշակոյթին.
Պատմութիւն խեղաթիրող թուրքը վայրագ,
Սրբատաշ խաչքարերը՝ տգիտօրէն փոշիացնող,
Վանտա՛լը հին, ան
Զի կրնար ամենեւին՝
Աղթամարեան հազարամեայ խորհուրդին, Սուրբ
Խա՛չ Տաճարին պահապանը դառնալ կրկին,
Որովհետեւ՝
Թուրքի արեան մէջ կ'եռայ ընդմիջտ,
Ցեղասպանի, այլամերժի տիպարը հի՛ն,
Գորշ գայլերու ժանիքը սուր...

Հէք հերոս Տինք,
Թուրքի դաժան երկնքին տակ՝
Ողջակիզուած դուն Սպիտակ Աղանի:

Պէյրուք
14/02/2007

ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայրենահանձնան դարադարձին

Ի՞նչպէս երգեմ վիրատոր այլ սխրալի փառքդ վսեմ,
Ի՞նչպէս մեկնեմ խորհուրդդ անհմանալի,
Ի՞նչպէս ընկալեմ խոյանքդ վերապրումի,
Որպէսզի կոչուիմ որդիդ հարազատ,
Երբ ես ամէն օր,

Էութեանս ողջ հիւլէներով
Կապրիմ արդէն՝ անցեալդ Փառատր,
Վերանկախ ներկադ,
ու տակաւին, Պայծառ ապագադ:

Հայաստան կոչեն քեզ,
Թէ երկիր Նայիրի,
Կայսերական Հայաստան՝ Մեծն Տիգրանի,
Թէ երկիր դրախտավայր, թէկուզ կորուսեալ,
Հրեղէն սին՝ Միածնաէջ տաճարի,
Թէ լուսատրչահիմն Տուն՝ խաչեալ Յիսուսի,
Հազարազանգ՝ փառատր Անի,
Թէ Գանձասարի վանք՝ Խորագոյն Հայքի,
Միացման հանգոյց՝ Մետաքսի ձանապարհի,
Թէ անառիկ ամրոց՝ Կարին հայրենի,
Միեւնոյնն է:
Հայաստան անուանդ հմայքը սոսկ՝
Պարտեալ ոտխներուդ սարսափն է մահաբեր,
Անունդ՝ Նոյեան Տապանի խարհիս Արարատ,
Անունդ՝ յաւերժի ձամբորդ ազգիս յաղթերզը հզօր,

Հայաստան,
Հազար անգամ ոտքի կոխան,
Հազար անգամ դժոխք դարձած,
Հազար անգամ մահէն յարեալ:

Անունդ՝ հանապազօրեալ աղօթք շրթներուս,
Անունդ՝ խորան հաշտութեան,
Անունդ՝ Խաղաղութեան Նոյեան աղանի,

Հայաստան
Երկնամերձ Բիրականէդ՝
Բիր ակնով անջրպետը չափազօղ հանձար,
Կոմիտասեան երգի խազերով աշխարհ գրատդ:

Հայաստան,
Լոյսի անմար փարոս,
Օտարութեան մէջ ձուլուող զաւակներուդ՝
Տուն դարձի ահեղ շեփոր,
Հզօր մագնիս՝ Հողահաւաքի,
Խաղաղ օթեան հայրենադարձ կարաւանի:

Հայաստան,
Պատմութեան արշալոյսին իսկ ծաղկեալ Էրեբունի,
Ազգակերտումի հնոց՝ Դաշտ Արարատեան,
Օրինաբեր ջուրի ովկիան անսպառ,
Անապատներ ծաղկեցնող՝ Եփրատ ու Տիգրիս,
Կեանքի աղբիւր՝ Արածանի,
Երկնքի թաս՝ Լիճ Սեւանայ,
Երեւանը Վանին կապող՝
Յաղթաբազուկ հզօր բանակ,
Միացեալի գոյատման
Կորիզ անփոխարինելի,
Նոր ազգերու կազմատրման մեկնակէտ,
Մշակոյթներու փոխընկալման՝ Մայրաքաղաք,
Աւարայրէն՝ իմացեալ մահապարտերու յաղթարշաուկ,
Մարդարապատ հասած անմեռ ոգի,
Տէրգօրեան դժոխքէն վերածնած զաւակներուդ՝
Միակ ապաւէն,
Հայրենահանող ոճրածին թուրքին՝
ստոյգ գերեզման,

Սփիռքացեալ որդիներուդ՝
Վախճանական հայրենիք:

Հայաստան,

Դուն, ինձի համար այս բոլորն ես,

Եւ դեռ աւելին,

Գոյութիւնս իմաստատորոջ՝

Իմ փառապանծ հայրենիք,

Գիտակցուած հպարտանքիս՝

Դուն անսպառ ներշնչարան:

Պէլրոս
30/11/2013



Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանը՝

«Չպա՛րտ» Հայաստանի Հանրապետութեան
Առաջին Աստրագետ Նախագահ-Գիտնականին
«Յարմար նստավայրը»

ՄԵՆԱՏԵՐ ԴԵՄՈԿՐԱՏ ԼԵՒՈՆ ԱՍՈՐԱԳԷՏ՝
ՏԽՐԱՀՈՉԱԿ ՆԱԽԱԳԱՀ՝
«ՀՊԱՐՏ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅՈ՞ՒՆ ԵՐԹԱ՛Ս... ՄԵՆԱՏԵՐ ԴԵՄՈՎՐԱՏ. «ԹՈՒՂԹ ԱՌ ԼԵՒՈՆ ԱՍՈՐԱԳԷՏԻՆ՝ ՎԱՄՆ ՏԽՐԱՀՈՉԱԿ ՏԵԿՐԵՏԻՆ ԻԻՐՈՅ...»

ՀՅ Դաշնակցութիւնը՝ հայկական նոր ասպերտութիւնն է:

Ելէք, ելէք, ժողովուրդ Հայոց, զինուորագրուեցէք հայկական նոր Ասպերտութեան, թեւ ու թիկունք փուէք անոր, զի իսաչին եւ մանին հետ փրկարար է նաև ասպերին սուրբ:

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Մե՛ն ու թա՛նծր ամպեր մթազևած են երկինքը Յայոց.

Մռայլա՛ծ է գայրագին՝ Արարատը խոժոռադեմ.

Գալարումներով ցաւատանջ՝ յղի է արգանդը Յայաստան աշխարհին.

Անստոյգ է քաղաքական ապագան «Յպա՛րտ» Յայաստանին.

Նոր տարուան սեմին՝ յիսուն տարիքը թելակոխեց ու կարծես հասուն մարդ դարձաւ՝ «Լեւոնը արի», ու փաթթուած անշահ Ասորագետի իր հնամաշ պատմութեանին, կեղծ գիտութիւն հռչակեց պատմութիւնը, որմէ չ՛արժեր դասեր քաղել... յստակ տեսնելու ապագան հայոց:

Բայց Պր. Նախագահը հակասելով ինքզինքին, եկաւ ինքն ալ կրկնելու ձախորդ փորձը ապագգային պոլշելիզմին, ու իր կարգին սարքեց թաղմանական հանդէսը ՀՀԴ-ին, այս անգամ «Յպարտ» Յայաստանի պետական ահաբեկչութեան ասպարէ-

զին մէջ մասնագիտացած՝ Մաֆիոզներուն կնքահայրութեամբ...

Ու այսպէս, Յամի Տեառն 1994-ին, Դեկտեմբերի 28-ին, խաւարին մէջ կորսուած Երեւանէն, հրապարակուեցաւ նախագահական ամսնորեան Ռումբ-նուէրը, աւետելով ՀՀ-ի գործունեութեան ժամանակաւոր արգիլումը ի Հայաստան աշխարհի...

Ու այս աննախընթաց «Մանեովրի» պահը կը զուգահիշէր՝ Հայաստանի վերահաստատ անկախութեան հռչակման չորրորդ տարեդարձին,

Հայաստանութեան ահաւոր ոճիրի 80-ամեակի սեմին,

Քոզմոփոլիթ ու ապագային պոլշեւիզմի բազմիցս սարքած Դաշնակցութեան թաղմանական արարողութիւններու 60-րդ տարւոյն,

Հայաստանի ահաւոր երկրաշարժի 6-րդ տարուան,

Շրջափակուած Հայաստանի 4-րդ դաժան ձմրան եղանակին,

Մեծամօր աթոմակայանի անարգ փակման 6-րդ տարւոյն...

Երբ հայրենաբնակ ու սփիւռքացեալ բովանդակ հայութիւնը, ու բիրաւոր հոգիները հայոց անկատար տենչերուն,

Ու երկնքի երանաւետ ոլորտներէն՝ լոյս հոգիները նահատակ ու տառապեալ հայոց,

Վիտոշի բզքտեալ բազէն՝ Զրիստափորը սուրբ,

Ահարոնեան՝ «Թուխ Արամազդ»-ը հայոց պատմութեան,

Յեղասպան Թալեաթը պատուհասող՝ Թեւիլիբեանը հեզ,

Հայաշխարհի սաւառնող արծիւը՝ Անդրանիկն անյաղթ,

Բռնակալ Յարի գահին երբեք չխնկարկող՝ Խրիմեանի պայծառ հոգին,

Հայապատկան հողատարածքները ազատագրող՝ Ռուբէնը հսկայ,

Արարատեան դաշտի մարմնացեալ ոգին՝ անմահանուն Արամը Մանուկեան,

Նոր Օրերու Դեռնոյ Երեցը՝ Գարեգին Յովսէփեանց,

Չանգեզուրի եւ Արցախ աշխարհի փրկիչ՝ մաքրակրօն Գարեգինը Նժդեհ,

Հայ-Թաթարական գոյամարտի անզուգական ռազմագետ Նիկոլը Դուման,

Բոլորը, բոլորը, կը սպասէին անձկագին ու արդարօրէն, որ ինքնիշխան ու անկախ Հայաստանի իշխանութիւնը, ու ողջ ժո-

ղովուրդը հայրենի, անքակտելիօրէն միացած սփիւռքի ճակատագրակից իր միլիոնաւոր եղբայրներուն ու քոյրերուն, միացեալ ճակատով օրինակելի միակամութեամբ, ներկայանային համայն աշխարհին որոշումի կեդրոններուն, հայասպան թուրքին անոնց ուժգնօրէն վերյիշեցնելու՝ անժամանցելի ու անպատիժ մնացած Յեղասպանութիւնը հայոց եւ արդար հատուցում պահանջելու միլիոնաւոր նահատակներուն արեան, անոնց ձգած նիւթական անհուն հարստութեանց, ինչքին, եւ ազգիս մշակութային ու ճարտարապետական անգնահատելի կոթողներուն կորուստին փոխարէն:

Եւ սակայն, Պարոն նախագահ «հպարտ» Հայաստանի, «մանեովրելու» այս ի՞նչ սինիք ախորժակ, հայութեան Լինելութեան ճանապարհին լարուած այս ի՞նչ մութ սադրանք...

Վերջապէս բերեք հայութեան, ամսնորեան ձեր նուէրը, իբր «աւետիս», թէ չիք է այլեւս ՀՀ Դաշնակցութիւն...

Դուք ձեր Տեկրետ թուղթով կը նպատակադրեք ողջ հայութիւնը պոկել իր արմատներէն եւ սպունգ քաշել հայոց հաւաքական ու պատմական յիշողութեան վրայէն եւ հայ ժողովուրդի հարազատ զաւակ Դաշնակցութեան պայծառ դէմքը ահաբեկչութեան ու թմրապիզնէսի մրուրով արատաւորել, հայոց նոր Ասպետութեան յանձնառուներու փաղանգը ազգային դաւաճանութեամբ, եւ հայրենահաստատ պետութեան դէմ ցնորածին պետական հարուած կազմակերպելու ոճիրով ամբաստանել ու Դաշնակցութեան հայաստանեան գործունեութիւնը վեց ամիսով խափանել:

Պարոն նախագահ, Եղեռնի ոգեկոչման 80-ամեակի սեմին, հայոց անժամանցելի ցեղասպանութեան ոճիրը բարձրադաղակ ու պետական մակարդակով աշխարհին յիշեցնելու փոխարէն, ամբաստանելի եւ ահաբեկիչի աթոռին կը կարծեք նստեցնել հայութեան ծոցէն ծնած, անոր հարազատ ապրումներուն եւ ազգային հաւաքական տենչերուն անսակարկ դրօշակիր եւ յանձնառուներու հզօր կազմակերպութիւնը:

Եւ ի՞նչ հեզնանք մերկ ճշմարտութեան.- իմացեալ մահի փաղանգը ազատամարտիկներուն եւ համալսարանական ուսանող անդամները՝ պայծառանուն Նիկոլ Աղբալեան Ուսանողական Միութեան՝ դասել կարգին թմրապիզնէսի օտար ու խորթ ակումբներուն...

Չմոռնաք սակայն, իւրաքանչիւր անդամը համալսարանական ընտրեալ այդ միութեան՝ հայ ոգիի վրիժառու անշէշ ռումբ է թշնամիին դէմ, ու յանձնառու դեկավարները՝ վաղուան անպայման հզօրանալիք Հայաստանին:

Տէր Պետրոսեան Պարոն՝ նախագահ, բա՛ւ է միթէ Ակադեմական Յանձնաժողով կազմել, ձեր նախագահութեամբ, ցեղասպանութեան 80-ամեակը նշելու...

Թերեւս ակադեմական «Սիմփոզիումեր» ու գիտաժողովներ ալ հովանաւորեք՝ ակադեմական եզրահանումներու յանգելու՝ դարասկիզբի ցեղասպանութիւնը դատապարտող.

Բայց հոս հակասութեան վիհին մէջ էք Պր. նախագահ, Ասորագետ պատմաբան, դո՛ւք որ պատմութիւնը ամբողջ կեղծ գիտութիւն կը դաւանիք...

Ալ որո՞ւն համար ուրեմն ակադեմական եզրահանումներու «Շարապիան» աղճատ, անել ու լաբիրինթոսային «հաւանական» յայտարարութիւնները, երբ՝ «հպարտ» ու գերիշխան պետութիւնը Հայաստանի, իրողապէս ու գործնականօրէն, լոյս ցերեկով, փարսախներով հեռու է հողային պահանջներ ձեւակերպելէ, ոճրագործ ու ցեղասպան թուրքը դատապարտելէ, Պիղատոսաբար ձեռք լուացած է Արցախէն, Նախիջեւանէն, Կարսէն, Արտահանէն, Սուրմալույէն, Վանէն, Սասունէն, ու Արարատէն...

Երբ ներկայ «Հպարտ» ու անկախ Հայաստանը տեր չի կանգնիր մեր անժամանցելի դատին եւ չի դատապարտեր պետականօրէն, անպատիժ ու անհատոյց մնացած հայասպանութիւնը գործադրած ահաւոր ոճիրը թուրքին:

Դուք, «Ղարաբաղեան Կոմիտէ»-ի թելերով իշխանութեան լծակներուն տիրացած՝ գետնաքարշ խնկարկուներ՝ ՀՀԾ Յուսիկեան Շարժման:

Եւ սակայն, ո՞վ է արդեօք Տէր Յուսիկը Լազարեան, - Եկեղեցոյ համեստ ծառան, քարոզի՞չը Զրիստոսի խաղաղութեան, Ղեւոնդ Երե՛ցը նոր օրերու, - թէ երկրորդ Գետադարձ Պետրոս քաղաքական ահաւոր դաւի, որ Անիի 40 բանալիներուն փոխարէն՝ Հայաստանի Ասորագետ Պատմաբան նախագահին կնքահայրութեամբ, - Երեւանի եւ Հայաստանի, Շահումեանի եւ Արցախի հազար ու մէկ բանալիները պատրաստ է յանձնելու թուրքի խնամքին ու ազերիի բարեգթութեան...

Այս քահանան սեւազգեստ, «Էմինանս Կրիզ»-ն (Eminence Grise) է ու Չար Ոգին՝ Ասորագետ Նոր Վեստին:

Եւ արդէն այս Շարժումը՝ համազգային վիժուկն է հայ կեանքին, անվերականգնելիօրէն ու առյաւետ ջնջուած հայրորդներու հոգիէն, որովհետեւ ան հայոց երկրի ընդերքներէն եւ հայ հոգիներու ակունքներէն չի բխիր ու հոնկէ չ'աղբիւրանար,

Եւ որովհետեւ, ապազգային ու շուկայիկ արեւելումով այդ շարժումը սնունդ կ'առնէ՝ թրքամետ կուրսի թունալից արիւնէն մոնկոլի...

Տխրահռչակ հրամանագիրը նախագահական, հասկանալիօրէն ու մոլեգին ցնծութեամբ՝... հրատարակման նո՛յն օրն իսկ դիմաւորուեցաւ՝ ատելավառ ու ռազմամուլ թուրք մոնկոլէն, որովհետեւ՝ «Հ. Հ. նախագահը Տէր Պետրոսեան՝ Թուրքիոյ թշնամի Դաշնակ կուսակցութիւնը կ'արգիլէ (yöketti, վերջը բերաւ) Հայաստանի մէջ: Թրքական «Ճումհուրիյէթ» թերթը այսպէս գոչերգեց.- «Էրմէնիստան Ճումհուրիյէթ Պաշպաքանի, Տէր Պետրոսեան, Դաշնակցութիւն փարթիի եօք էթթի:»

Որովհետեւ՝ թուրքը գիտէ, բոլորէն առաջ ու բոլորէն անելի, որ նոր Ասպետութիւնը Հայոց, Դաշնակցութիւնն է, որ կը հաւատայ ու յար կը գործէ՝ «Մէկ Ազգ ու Մէկ Հայրենիք» տեսլականով, ան է, որ անտեղիտալիօրէն պահանջատէրն է հայապատկան հողերուն,

Եւ որովհետեւ ան է կատաղօրէն կը դասանի, որ՝

Հայաստանը Փանթուրքիզմի ճամբուն վրայ՝ Արարատացած մեխն է ցցուն, Աքքիլլէսի մահացու կրունկը թուրքին անոր մոնկոլատիպ ախորժակներուն:

Նախագահական Տեկրետը ցնծալ կու տայ տակաւին, երէկի մեռելաթաղ, ապազգային, Զոզմփոլիթ պոլշեւիկ կարմիրները բոլոր, երբ բանադրանքի եւ ցնորածին ամբաստանութիւններու «գոհ» կը դառնայ համայնավար Բեժմի իրենց հանգիստը տասնամեակներ խռոված՝ դաշնակցական «Միակ ռիսերիմ թշնամին...»

Եւ սակայն ի՞նչպէս որակել հակադաշնակցական թունալից «հիսթերիան» բոլոր Լեւոններուն ու լծակից բոլոր Տէր-Յուսիկներուն:

Ինչո՞ւ այսօր, այս տարի մանաւանդ, զօրաշարժն «ահեղ լեւոնեան մութ ուժերուն», երբ աշխարհով մէկ, հայութիւնը ինք-

նիշխան, վերանորոգ ու անտեղիսալի պահանջատիրութեամբ, հայրենի ու սփիւռքացեալ գոյգ թելերով, բռունցքացեալ հզօրութեամբ, պետական մակարդակով, հարկ է, որ միակամ յիշեցներ աշխարհին, եւ ցեղասպան թո՛ւրքին առաջին կարգով, անպատիժ մնացած ու անժամանցելի Առաջին Տեղասպանութիւնը 20-րդ դարու, եւ արդար հատուցման անկապտելի իրաւունքը հայուն...

Եւ սակայն, նախագահական հրամանագիրները թուղթ՝ չեն կրնար փոխել հայոց պատմութեան վճիռը արդար, չեն կրնար պոկել հայ ազգի գոյութեան կռուին ու հայ ժողովուրդի հոգիին հազար-հազար անքակտելի կարմիր թելերով զօդած՝ Նոր Ասպետութիւնը հարիւրամեայ, հայութեան ազատատենչ երազներու իրականացման յաւետ յանձնառու, եւ մարմնացեալ ազատամարտիկներու փաղանգ կազմակերպութիւնը, որովհետեւ՝ ինչպէս պատգամեց անմահանուն Խրիմեան Յայրիկը, խօսքն ուղղելով Յայոց երիտասարդութեան, թէ Դաշնակցութիւնը անձերու պաշտամունքի կուսակցութիւն չէ, այլ վերածաղկեալ Նոր Ասպետութիւնը Յայոց, Մաճին ու Խաչին հետ անհրաժեշտ, մեր Լինելութեան ճանապարհին...

Դաշնակցութիւնը, ազգային-ազատագրական սխրանքներու դարաւոր փորձով, կուռ ու կարգապահ ուխտեալներու շարքերով եւ ազգային-քաղաքական անշեղ գործունեութեամբ:

Դաշնակցական մեծ ընտանիքը գաղափարի ընտրեալներուն, նիւթի ու փառքի խնդիրներ չունի լուծելիք ինքն իր մէջ...

Որովհետեւ իր գոյութեան իմաստը, իր Միակ ՄԵՃ ԽՆԴԻՐԸ՝ փառաւորումն է հայ ազգին, եւ առաւել հզօրացումը հայկական անկախ ու ինքնիշխան գոյութեան...

Ինչպէս երեկ, իր ծնունդի օրերուն, նաեւ այսօր, ու այսուհետեւ, Դաշնակցութիւնը կը մնայ, ինչպէս իր ժամանակին ճիշդ կանխագագ ու յայտարարեց պոլշեիկ Աղասի Խանջեանը, համայնավար իր գործընկերներուն, թէ՛ «Դաշնակցութիւնը կը մնայ Էն միակ Ռեալ ուժը, որը մի բան պատահելու դէպքում, - (այսինքն բոլշեիկ կարմիրներուն ու անոնց մանկլաւիկներուն փախուստէն ետքը) «ասպարեզը նորէն կը մնայ Դաշնակներին...»

Որովհետեւ Դաշնակցութիւնը, հակառակ պոլշեիկներուն

սարքած բազմաթիւ յուղարկաւորական արարողութիւններուն եւ թաղմանական ծեսերուն, նորէն Յարութիւն առաւ...

Որովհետեւ ան միշտ գործեց ու կը գործէ հայութեան հարազատ ծոցին մէջ, անոր հոգիի խոր ապրումներուն մէջ տիրական տեղ ունի, իր հզօրութիւնը հայութեան փառաւոր անցեալի ակունքներէն կը բխի եւ հարազատ զաւակն է հայութեան՝ միսը միսէն եւ ոսկորը ոսկորէն:

Ու պետական կազմակերպուած ահաբեկչութիւնը անզօր է այսօր ալ լռութեան մատնելու Դաշնակցութիւնը...

Փաստ՝ Օսմանեան ու Յարական հայաջինջ հալածանքներուն դէմ՝ Դաշնակցութեան տասնամեակներու երկար փորձառութիւնը:

Դաշնակցութիւնը միշտ ալ, իր ազգային գաղափարներու ներգործութեամբ՝ յաղթանակներ արձանագրած է պոլշեիկեան ապագային համակարգին դէմ իր մղած անհաշտ պայքարներուն մէջ...

Անձեւ քառսէն մարմին առած Յրաշք Յայաստանի առաջին հանրապետութեան ստեղծումէն մինչեւ սփիւռքի կազմակերպումը եւ հայութեան հզօրացման համար հոն գոյառած կուռ կառոյցները:

Կարելի՞ է երեւակայել Յայաստանի ԳՅԸ-ական վարչախումբի շուքին՝ հայ ազգային մշակոյթի կամ ազգային որեւէ կառոյցի զարգացում եւ հզօրացում.- ո՛չ, հազար անգամ ոչ:

Որովհետեւ, ինչպէս երեկ, ապագային պոլշեիկմի օրերուն, այնպէս ալ այսօր, կատաղի հալածանք կը մղուի՝ հայադրոշմ, հայատրոփ, խորքով ազգային գրականութեան, այլ կառոյցներու զարգացման եւ հայ կեանքի որեւէ այլ երեւոյթի գոյառման, եթէ ան չի կրեր ԳՅԸ-ական մենատիրական այլասերիչ ու ապագային կնիք...

Անհիմն ու ցնորածին նախագահական ամբաստանութիւնները Դաշնակցութեան դէմ, եւ անոր գործունեութեան «ժամանակաւոր» կամ «ընդմիշտ» արգիլումը Յայաստանի տարածքին, երբեք չեն ծառայեր պայծառացնելու անոր մենատեր-դեմոկրատ հեղինակին քաղաքական ապագան...

Իր «վեց տարիներու ակտիւ» քաղաքական ասպարեզին մէջ յաջողելու համար՝ օտար յանձնառութիւններու խնկարկու Տեր Պետրոսեան նախագահը՝ ազգային ուրիշ համոզիչ արժանիքի

պետք ունի, քան Ասորագետ պատմաբանի հնամաշ պատմու-
ճանը...

Թոյլ պիտի տա՞նք ազգովին, որ պոլշեիկեան այլասերիչ ու
քոզմոփոլիթ քանդիչ մեթոտներէն ալ աւելի վատ միջոցներով
հալածանքի ելած այժմու իշխող վարչախումբը, մնայ աներեր
իր ապազգային ծրագիրներու աթոռներուն գամուած...

Կրնա՞նք հաշտուիլ Հայաստանի ազգային կատարեալ
կղզիացման այժմու կիրարկուած մեթոտներու քաղաքակա-
նութեան հետ:

Պէ՞տք է արտօնելք, որ ամէն օր, Չինական պարիսպներով՝
հայրենի երկրի զաւակները իրարմէ հեռանան եւ «օտարուին»
սփիւռքի գաղթօճախներու իրենց հայրենակարօտ եղբայրնե-
րէն եւ քոյրերէն...

Եւ արդէն փաստուեցաւ «վեց տարիների արքիւ փորձով»,
որ Տեր Յուսիկեան շարժումը՝ հայկական մեր կեանքին մէջ, ոչ
թէ կեդրոնաձիգ, այլ կեդրոնախոյս ապազգային ուժ մըն է...

Նոր օրերու Վեստ-Սարգիս «Արի Լեւոն»-ը եւ Նոր Գետա-
դարձ- սեւազգեստ Տեր-Յուսիկը, եւ այս խաւարի գոյգին հովա-
նաւորած ապազգային շարժումին նպատակը՝ ազգահաւա-
քումը եւ հայութեան արդար պաշտպանութիւնը եւ հզօրացու-
մը չէ, այլ՝ ձուլումի, ազգային աղաւաղման, ձեւով ազգային, եւ
սակայն խորքով քոզմոփոլիթ, ու քափիթալիստական, եւ
ցրուումի եւ տկարացման քաղաքականութիւնն է, որովհետեւ,
բանիւ եւ գործով կը քարոզեն՝ որ հայ ազգը եւ հայութիւնը,
ազգային ու պատմական յիշողութիւն պետք չէ ունենան, Հա-
յոց ցեղասպանութիւնը պետք չէ դատապարտեն, ահաւոր ոճի-
րի թուրք մարդասպան հեղինակը պետք չէ ամբաստանեն, եւ
սակայն՝

Հայոց Նոր Ասպետութեան ռահվիրայ կուսակցութիւնը
պետք է հալածեն եւ ամբաստանեալի աթոռին պետք է նստեցը-
նեն եւ անոր հայրենասեր բոլոր գործունէութիւնները պետք է
բանադրեն, եւ... Դաշնակցութիւնը՝ Հայաստանի տարածքին
պետք է մահացնեն...

Հայաստանի առաջին հանրապետութեան անդրանիկ վար-
չապետը՝ Յովհաննէս Զաջազունին, Հայաստանին համայնա-
վարութեան ճիրաններուն մէջ իյնալէն երկու տարի ետքը, երբ
հակադաշնակցական հալածանքները՝ օր աւուր սաստկացու-

մի մէջ էին, - եւ մենք այսօր, այդ նոյն մթնոլորտը յիշեցնող
բազմաթիւ պատճառներ ունինք, - այսպէս կը գրէր.-

«Դաշնակցութիւնը հակառակ իր թերութիւններին եւ պակա-
սութիւններին ունի մի անփոխարինելի առաքինութիւն. նա
հայրենի երկրին եւ ժողովրդին հետ կապուած է անքակտելի
կապերով, իր բոլոր ջիղերով, իր միսը միտով եւ ոսկորը ոս-
կորով.

Հայաստանի կեանքը՝ նրա իսկ կեանքն է, եւ մահը՝ նրա իսկ
մահը. նա երբեք, եւ ոչ մի պայմաններում չի մոռանայ եւ չի դա-
ւաճանի հայ ժողովրդի դարաւոր դատին»:

«Եւ եթէ մի Սեւ Օր, Դաշնակցութեան կրծքին հասցուած
հարուածը մահացու լինի, նա կը լինի մահացու՝ նաեւ հայկա-
կան դատի համար»:

«Ոճրագործ է ամէն մի հայ մարդ, որ ուզենար փորձ անել
քանդելու Հայ ժողովրդի այդ միակ կազմակերպուած ուժը...»

Ի հետեւումս վերոյիշեալ բոլոր տուեալներուն եւ պատմա-
կան փաստերուն, հայութեան եւ Հայաստանի ազգային գերա-
գոյն շահերը կը պահանջեն, որ անյապաղ վերջ տրուի՝ ազգա-
կործան, ազգավնաս, հակադաշնակցական, հիսթերիք, ան-
հիմն, ցնորածին ու կոյր մոլուցքին:

Պէտք է դադրին այլեւս, ՀՀԾ-ական մասնագիտացած, պե-
տական ահաբեկչական Մաֆիային, եւ անոր մենատեր-դեմոկ-
րատին, մեծամոլ եւ ամենագետ դատաւորին, դատական,
օրէնսդիր, եւ գործադիր իշխանութեանց լծակները՝ իր եւ սե-
ւազգեստ լծակիցներուն ձեռքը ամբօրէն պահողներուն խա-
չակրական ճամարտակութիւնները եւ անոնց ապօրէն օգտա-
գործումը Հայոց Նոր Ասպետութեան դէմ...

Յո՞ր երթաս... Ասորագետ Պատմաբան...

Կ'ուզե՞ս ողջ հայութիւնն ալ արժանացնել Ասորիներու մոխ-
րացեալ բախտին...

Պարո՞ն նախագահ, «հպարտ» Հայաստանի, բաւ է «դաւա-
ճաններ», «խանգարիչներ», «աւանտուրիստներ», «ահաբե-
կիչներ» ու «թմրապիզնէսի» առեւտուրի անշահ անձեր
փնտռել, հայութեան ազգային վառ երազներու դրօշակիր, ազ-
գային-քաղաքական գերագոյն իտեալներուն եւ շահերուն ար-
թուն պահակ եւ Ազատութեան ճանապարհին՝ իր հաւատա-

ւորներուն ամենաընտրեալները՝ իմացեալ մահի, եւ նահատակութեան յանձնառութեամբ՝ Ազատութեան Բագինին ողջակիզելու միշտ պատրաստ պահող՝ Դաշնակցութեան կարգապահ եւ կուռ շարքերուն մէջ...:

Ու հիմա, ի՞նչ կ'ուզէք, որ մաղթենք մեր «հպարտ» եւ «Անկախ» Հայաստանի, ՀՀԾ-ական «Ազգընտիր» նախագահին, 95-ի առաջին օրերուն «հասուն մարդու» յիսուն տարիքը թեւակոխող՝ ինքզինք ձեռով «ժողովրդավար» եւ սակայն խորքով բռնակալ՝ Մենատեր Դեմոկրատին, որպէսզի մենք ալ ետ չմնանք, զինք Հայաստանի մէջ թութակաբար եւ լորձաշուրթն գովաբանողներէն եւ Սթալինեան ոճի անձի պաշտամունք բուրող խնկարկումներէն...

Պարո՛ն նախագահ «Հպարտ» Հայաստանի, ապրեցէք, որ տեսնէք շուտով, ազգադաւ ձեր կուրսին անփառունակ վայրէջքը անվերականգնելի...


Մինչ այդ, ունեցէք իմաստութիւնը էրիմեանին, եւ խիզախութիւնը անոր, հրաժարելու մութ յանձնառութիւններէ, «թրքամետ» աղիտաբեր արեւելումէ եւ ծախու չհանէք Հայ Եկեղեցւոյ եւ Հայաստանի «ազգային կալուածները», մեր հայրենիքին հզօրացման թշնամի եւ հիմնովին հակադրուած՝ ներքին եւ օտար ուժերուն...

Յետս կոչեցէք մաղձալիք ու երեւակայածին թուղթ հրամանագիրները, որովհետեւ անոնք անզօր են թումբ կանգնելու եւ կասեցնելու՝

Հայրենիքի հզօրացման գործընթացը,
Հայաստան երկրի բարգաւաճումը,
Հայութեան՝ «ՄԵկ Ազգ եւ ՄԵկ Հայրենիք»-ի տեսլականը, արդար հատուցման իրաւունքը իրականացնելու անդամնալի յանձնառութեամբ ճամբայ ելած,

Եւ ՀԱՅՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԻՏԵԱԼՆԵՐՈՒ ԲԱԳԻՆԻՆ ԱՌՅԱԻԷՏ ՈՒԵՏԵԱԼ, ՀԱՅՈՑ ՆՈՐ ԱՍՊԵՏՈՒԹԵԱՆ՝ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆԱԼԻ ԱՅԼ ՓԱՌԱԽՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ...

Պուրճ Համուտ
6 Յունուար 1995



Աղթամարի Սուրբ Խաչ Տաճարը՝ վերստին խաչուած առանց խաչի...

ՆՁՈՎՔ՝
ԱՂԹԱՄԱՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՏԱԾԱՐԸ՝
ՎԵՐՍՏԻՆ ԽԱՉԵԼՈՎ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԾՈՂՆԵՐՈՒՆ

ՊՈՌԹԿՈՒՄ ՈՒ ՆՁՈՎՔ ԱՂԹԱՄԱՐԻ ՍՔ. ԽԱՉ ՏԱՃԱՐԸ ՎԵՐՍՏԻՆ ԽԱՉՈՂՆԵՐՈՒՆ

«Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգույս,
ինչպես քանար մ'ընդարշակ լայն ու խորունկ,
մութ ու լոյս... Եկեղեցին հայկական դեպի երկինք
բարձրացող գաղարկի անմրայ մը ունի...»:

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Մահէն յարուցեալ՝ հայութիւնն ամէնուրեք,
Տարին մէկ օր Պատարագի «հրաւեր» ունի՝
Աղթամարի «թանգարան»-ին պահակ դարձած՝
Մոնկոլատիպ «լայիք» թուրքէն,
Առանց ծէսի, շարականի,
Առանց խունկի, առանց մոմի,
Անխօս վկան դառնալու՝
Հագարամեայ Սուրբ Խաչ Տաճարի վերստին խաչելութեան...
Յատումով կը պողոթկայ Հայը կրկին...
Ի՞նչ Աղթամար՝ առանց Հայի,
Ի՞նչ Սուրբ Տաճար՝ առանց խունկի,
Ի՞նչ Պատարագ՝ առանց խաչի...

Յեղասպան թո՛րքը միայն՝
Անմրցելի տաղանդն ունի,
Հայու դարաւոր խո՛ր հաւատքը,
Անոր գալիքի անմեռ հուրը,
Սուրբ Խաչ Տաճարի լոյս խորհուրդը,
Իր սրբատաշ խաչքարերը՝
Փերեզակի անշահ իրի,
Ոտքի կոխան թանգարանի,
Շահի աղբիւր, մուտքի տոմսի վերածելու...

Արինարբու թո՛ւրքը միայն,
Անշեղօրէն ու նենգաբար ծրագրած է՝
Մութ աշխարհի կրկէսներուն,
Հայն ստորնացնելու, նսեմացնելու,
Խայտառակ ծաղրի, արհամարհանքի,
Ծիծաղելի հաւատորաց ամբոխի վերածելու,
Թուրխտ ժամուր-ուխտական դարձնելու...

Այլամերժ ու նենգամիտ սելձուք թուրքը՝
Կեղծ բարեկամ է մարդ էակին,
Մարդկութեան թշնամի՝ կեղծ Սամարացի,
Արեան ծարաւի մարդակերպ գազան,
Աղթամարեան խաչեալի խորհուրդին անհաղորդ,
Սուրբ Խաչ Տաճարի սրբութիւնը պղծող:

Անապատէն Մոնկոլի՝
Հուր ու արիւն, մահ ու սարսափ սփռելով՝
Աղթամար հասած վանտալ թուրքը՝
Անատակ է ձգտելու՝ Բարիին, Գեղեցիկին,
Ու Վսեմի սրբութեան,
Անոր հոգին անպատրաստ է,
Եւ աչքերը յաւէ՛տ փակ են,
Աղթամարի Սուրբ Խաչ Տաճարի
Խաղաղութեան եւ հաշտութեան Պատարագին:

Աղթամարի առա՛նց խաչի
Թանգարանի մութ շէնքին մէջ,
Թուրքն այս անգամ կ'ուզէ ընդմիշտ խափանել՝
Հայուն դարաւոր լոյս հաւատքը.
Վերապրումի անմեռ յոյսը,
Այս երկինքին տակ՝
Հայ Ազգի գերիշխան գոյութիւնը:

Առա՛նց հայու՝ ի՞նչ Աղթամար,
Առանց խաչի ի՞նչ պատարագ,
Ի՞նչ Սուրբ Խաչ Տաճար՝
Առա՛նց լոյսի, առա՛նց խումկի,
Առա՛նց լուսատրչահաստատ
Դարաւոր Հայ Եկեղեցւոյ՝
Ջոյգ գահակալներուն օրհնաբեր հովանիին:

Հազարամեայ խորհուրդներով Սուրբ Խաչ Տաճարը՝
Գորշ գայլերու մութ քարայրի վերածեցիք,
Տաճարէն ներս մտն վառելու արգելք դրիք,
Խաչեալ Մանուկ Յիսուսէն Սէր աղերսող՝
Հայ մանուկին, երիտասարդին
Պլպլացուցած մոմի թէժ շիթերէն իսկ՝
Սարսափող թո՛ւրք,
Գիտցի՛ր,

Աղթամարի Սուրբ Խաչ Տաճարին՝
Հարկաւոր չեն թանգարանի հսկիչ պահակներ.
Բաւարար են՝
Խաչեալին Սիրոյ Պատգամին հաղորդակից հոգիներ

Թալէաթի անյաջող ահաւոր ոճրափորձը՝
Թանգարանի մէջ ցուցադրելու՝
Վերջին ապրող հայու գանկը...
Այսօր դարձեալ կը փորձեն,
Հին Օսմանի թոռները նոր...
Բայց այս անգամ, կեղծ խաղաղասերի
Ու «քաղաքակիրթ» լայիքի պատմուճան հազած:
Համոզուեցէք դո՛ւք Արդարութեան թշնամիներ,
Անխիղձ կեղեքիչներ բոլո՛ւր՝
Ու ոճրապարտ զաւակները Օսմանի,
Թէ մահ չէ գրուած՝ Յաւերժի ձամբորդ
Հայ ազգի զաւակներու ձակտին,
Ու փակ է ձամբան առյաւէտ՝
Աղթամարի Սուրբ Խաչ Տաճարը
Վերստին խաչողներուն...

Պէլրութ
01/09/2010

ՄԱՅԻՍԵԱՆ ԽՈՂԵՐ ԱԶԳԱԿԵՐՏՈՒՄԻ

Հայատարածքներ ազատագրող հսկաներուն

Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանի
կամարներուն տակ խորհրդաւոր,
Ազգակերտումի Մայիսեան սիրանքի
վսեմացնող այս օրերուն,
Հայոց լինելութեան ազգաժողովին հանդիսաւոր՝
Ներկայ են բոլոր,
Ապրիլէն յարեալ՝ ոգիներն հայոց,
Տիտանեան դէմքերը Մայիսեան տեսիլքին,
Հայրենի հողատարածքները հայաձուլող
հսկաները սուրբ,
Արցախեան Գոյամարտի նահատակները լուսապսակ,
Հայրենի երկրիս տառապեալ այլ՝
Պայծառադէմ ժողովուրդն հայոց,
Արտերկրի տազնապահար ու
Դատի տէր զաւակներն Հայկի,
Յեղիս ձայնին, Արեան կանչին
իրաւունքով անկապտելի:
Մեծախորհուրդ այս ժողովին,
Ներկայ են, ու գործի վրայ՝
Հայրենի «Նոր Կուրս»-ի իշխանաւորներն ամէն դասի:

Ապրիլէն Մայիս երկարող,
Խորհուրդներով հարուստ այս ամսին,
Վերանուած եռագոյն դրօշով հպարտ,
Նահատակներուս անժամանցելի կտակով՝
զրահեալ տեսլահար հոգիս,
Մարդակերտումի Մայիսեան խոհերով՝
խօսքի է նստած

Ինքնիշխան հայրենի տան

Նոր իշխող դասին հետ...

Ո՛վ դուք ազգաժողովի մասնակից արիներ,
Հարկ է որ յիշէք միշտ՝
Դարերէն եկող, դարերո՞ւն գացող՝
Պատգամը վսեմ Խորենացի պատմահօրը մեր,
Թէ ազգերու արշալոյսէն ալ առաջ,
Հայը եղած է՝
«Հանուր Հիսիսականաց Ազգն Վեհագոյն».
Ինծի կը թուի, թէ
Մատենադարանի մագաղաթներուն խնկաբոյր
եւ արիւնաներկ մտերմութեան մէջ,
Հրկիզեալ ու կիսալալի մատեաններու
լոյս էջերէն,
Արի մարդոց դասը բոլոր,
Աւելի երկիրդած ունկնդիրն էին՝
Յեղիս արեան կանչին.
Անոնք հմտութեան հասան,
Ու դարձան իշխողաց դասը ինքնիշխան երկրիս.
Ինծի կը թուի կրկին,
Թէ Երեւանեան թատերական հարթակին վրայ,
Պրկեալ մատներու կշռոյթով հատու,
«Պայքար, պայքար մինչեւ յաղթանակ»
գոչերգողներու վերնախաւ դասը՝
Հաւատքի անկում ցոյց կու տայ այսօր...
Նոր հիմքի «թրքամէտ կուրսի»
անշահ զէն ու զրահով՝
Կարելի չէ կերտել Նոր Պատմութիւնն Հայոց,
Ոչ ալ ապահովել գոյութեան կռուան՝
Հանուր Հիսիսի վեհագոյն ազգին.
Թուլցած կը թուի ձեռքին մէջ աւա՛ղ
Հայրենի տան նոր իշխող դասին՝
Զէնքը կենսական, բռունցքն ժայռակոփ,
«Գաւազան երկաթաւ» Սմբատ իշխանին.
Կը պակսի նաեւ՝
Քրիստափորի պողպատէ կամքը «Յարատեւ կռուի»
Վճռականութիւնը՝ Ռուբէն հերոսին,
Պատմական մոմենտի այդ մեծ հսկային,
Որ հմտութեամբ եւ ռազմագիտօրէն,
Մաքրագտեց տարածքն հայրենի,

Եւ հայաձուլեց բուռն այդ լոյս հողին,
Որ այսօրուան աւանդն է Մուրթ,
Տապանակն Ուխտի՝
Յանձնուած պահ մը ահա,
Բարձր խնամքին նո՛ր իշխող դասիդ...
Աւա՛ղ, «անել կուրսի» տեսաբաններդ բոլոր,
Կարծես կը ջանաք յարատեօրէն ստրկացնել ներուժը ազգիս,
Հռչակագրելով, թէ
Յեղասպանութիւնը՝ հիմքը չէ երբեք
Արտաքին «Պոլիտիկ»-ի ձեր անել կուրսին.
Ուրեմն, կը մնայ մեզի՝ Եղեռնը մոռնա՛լ,
Հաց մուրալ թո՛ւրքէն,
Գութ ու նպաստ հայցել անխի՞ղճ աշխարհէն.
Ասոնք են միթէ՞ արտաքին հարցերը ձեր հիմնական.
Գոյատեւումի իբրեւ հատուցում,
Ազգաքանդօրէն պէ՛տք է որ զիջինք
Արցախն հայրենի,
Ընդունի՞նք պահել զայն, հայաթափ ու
անդիմագիծ Ազերի կազմին մէջ...

Ազգընտիրներուդ որպէս հիմնասիւն,
«Սրբութեան-Սրբոց» պէտք է որ մնա՛ր՝
Գետաշէնն ու Ծահումեանը՝
Հայ արինի շաղախով յաւէտ սրբացած,
Ազերի Գորշ գայլին անկուշտ երախիւն՝
Պատառներ երբեք չեն կրնար ըլլալ.
«Խամսայի Մելիքութեանց» հողերն Արցախի
Փոխանակման ապրանք չեն բնաւ՝
Ազատ շուկայի տարազի գոյառման,
Ո՛չ ալ Արծուաշէնը՝
Բարի դրացնութեան «թրքամէտ կուրսին»
Քաւութեան նոխազ չեն կրնար ըլլալ...
Թրքահունչ Ղարաբաղ խորթ անունն իսկ՝
Մեր Աշխարհացոյցի «Խորագոյն Հայքն» է՝
Խիզախներու՝ հայրենիք,
Ազատամարտիկի՝ անառիկ բերդ,
Անպարտելի ուժ՝ միասնութեան,
Կախարդական բանալի՝ սահմանաքանդ գէնքի,
Արցախ աշխարհը՝
Վառ կիզակէտն է Հայ Լիներութեան,

Արցախը ապրո՛ղ վկան է
մեր Յանրժութեան:
Ճակատագրակից հայերուս համար,
Նո՛յն արդար դատին յանձնառումներուս,
Միացեալ հողի ազատագրման զինուորեալ
բոլոր սերունդներուն համար՝
Մեծ ու Փոքր Հայքերը Հայոց,
Ու Մասիսներն հայապատկան,
Ազատ Արցախը հայրենի,
Եւ ո՛չ իսկ մէկ հիւլէն հայ հողին սրբազան՝
Սակարկութեանց ու մութ դաւերու ամենեւին
զոհասեղան չեն կրնար ըլլալ:
Պատմական մեր յիշողութիւնը բթացնելու,
«Թրքամէտ Կուրս»-ով Հայոց Պատմութեան դասերը մերժելու,
Եւ կամազուրկ համակերպումի առաջնորդող
Քարոզչութիւնը ընդունելի չեն՝
Վերանկախացած ինքնիշխան հայուն,
«Կուրսերն» այդ բոլո՛ր,
Մեր անթաղ նահատակներուն յիշատակին՝
Շարտուած նախատինք կը թուին,
Անոնց անկատար կտակին դէմ՝
նետուած ամօթալի հայիոյանք,
Իւրաքանչիւր շնչող հայու լինելութեան՝
Տապարի հարուած՝ իւրային բազկի...
Յետ Մեծ Եղեռնի,
Հայ պետականութեան անկայուն
բախտորոշ օրերուն,
Յաւատանջ առաքելութեամբ Թուրքիա ուղեորուեցաւ՝
Ահարոնեան «Թուխ Արամազդ»-ը Հայոց Պատմութեան.
Եւ սակայն՝
«Ազատութեան Ճանապարհի» տառապեալ հսկան՝
Որեւէ գնով թրքամէտ չդարձաւ բնաւ,
Այլ՝ «Կրակէ Ծապիկ» կտակեց վերապրող
յետնորդներուս,
Եւ նախատինքն աշխարհի՝
Թուրքի ջարդը մոռցող հայուն...
Աւա՛ղ, այսօր կը լսուի երգի նո՛ր երանգ
ու շեշտ՝ Հրազդանի ափերէն,
Ուրանալու պատմական մեր յիշողութիւնը՝
ինքնաժխտումի քարոզներով,

Մոռնալու արմատները՝ Հիսիսի վեհագոյն ազգիս՝
Դառնացնելով Պատմահայրը մեր,
Եւ հայակերտումի հողն հսկաներուն:
Արդեօք նման «Կուրս»-ի գոյառման համար՝
Յարատեւ կռուի Քրիստափորը բզքտեալ ինկաւ:
Ինչո՞ւ Թեհլիրեանը վրիժառու՝
Պայթեցուց ուղեղը Թալէաթ ձիաղին,
Ի՞նչն էր, որ մղեց Դաւիթ Բեկը յաղթական սխրանքի,
Առասպելական ո՞ր ոգիով յաղթանակեց՝
Մխիթար Սպարապետն Խորագոյն Հայքի,
Հայրիկն Հայոց ինչո՞ւ զօրակոչեց
Մանուկներն ազգիս Նոր Ասպետութեան,
Ու տակաւին,
Աշխարհի ոգեղէն ո՞ր ուժին ապաւինած՝
Կալուածոց թողթը՝ հզօր Յարի գահին երբեք չհասաւ:
Կարելի չէ սրբել կարմիր թելերը հայոց պատմութեան,
Ոչ ալ պատմական մեր յիշողութեան՝
Մոռացութեան անթափանց վարագոյր քաշել:
Վերանկախ Հայաստանի նոր իշխող դասի
առաքեալներ բոլո՞ր
Ազգընտիրի կոչումին արժանանալու համար՝
Հարկ է միասնութեան շեփորը հնչեցնել,
Տառապելով, տագնապելով,
Անխտրական ոգիով վսեմ,
Ու դառնալ հայր ամենեցուն,
Ազգընտիրը համա՛յն ազգին,
Գէթ որդեգրելով գործընթացը հողահաւաքի,
Վարքագիծն անբիծ այդ հսկաներուն՝
Որոնք կոչուեցան Այրեր հին առասպելի,
Անուններն անոնց լուսէ՝
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ու ՆԻԿՈՒ ԴՈՒՄԱՆ,
ԴՐՕ ՄՐԲԿԱԾԻՆ ու ՆԺԴԵՎ ԳԱՐԵԳԻՆ:
Սպիտակահեր ՀԱՅՐ ԱԲՐԱՀԱՄԸ՝
Նախագահն էր անգոյլէն ծնած՝
Առաջին Հանրապետութեան Խորհրդարանին:
Եւ սակայն, ան որպէս Նոր Մովսէս,
Մարգարէական ուրիշ ոճ ունէր խօսելու՝
Շեշտակի նայելով Խալիլ Փաշա թուրք դեսպանի աչքերուն,
Եւ նահատակներուն ոգեղէն կամքով
Յայտարարեց համայն աշխարհին,

Թէ սահմաններն Հայոց, այսօր նեղ ու խեղդիչ՝
Բայց քարային չեն,
Պիտ ընդարձակուին ու պիտի լայնան,
Ընդգրկելու համար կրկին՝
Համայն հողերը հայապատկան:
Հայր Աբրահամը՝
Նուիրաբաշխի դերով բեմ չեկաւ բնա՛ւ,
Հայու սուրբ հողի որեւէ հիւլէն
Սակարկութեանց կրկէսներուն ծախու չհանեց.
Ան Գետաշէնն ու Շահումեանը՝
Ազերիական ներքին տարածք չէ դաւանած բնա՛ւ,
Ինչպէս որ եղաւ, կրնայ ըլլալ դեռ՝
«Թրքամէտ Կուրսի» միաբեւեռ ընտրանքի այս օրերուն:
Դարաբաղեան Կոմիտէի հոգեժառանգ դաս իշխանաց,
Հարց տուա՞ծ էք միթէ օր մը դուք ձեզի,
Թէ կամրջընկեց Արաքսի ակերուն՝
Թուրքը ինչո՞ւ հաստատեց իր «Կամուրջը Յոյսի»:
Պարզ է, որ գիտնաք
Ինչպէս որ գիտէ արդէն ժողովուրդս տառապեալ,
Նոյնիսկ փոքրիկ աշակերտը՝ Հայոց Պատմութեան,
Թէ՛ կամուրջէն այդ պղտոր Արաքսին՝
«Գարա Գոյուն» թուրք սելձուքի ոչխարները
չեն լոկ գետն անցնելու...
Այլ՝ զէն ու զրահով,
Ատամներով սուր, Գորշ գայլերու
դարանակալ վոհմակները արեան ծարափ,
Հայաստան լոյս աշխարհի վերապրումին,
Ազատ կեանքին, վատ գալիքին
լոյսի ջահերը մարելու,
Եւ համաթրքական իր հին երազի ձամբան
անարգել լա՛յն բանալու՝
Թէկուզ հայ մարդու դիակը փռած...
Գործընթացն այս անշահ անկումի,
անպայման անելի պիտի յանգի,
Քանի հայրենի իշխող այրերն այսօր՝
Ուխտական չեն Տէր Զօրեան Նահատակներու կոչին,
Գերադասելով, դաժան ընտրանքով
Հակառակ երթալ խո՞ր ապրումներուն,
Անտեղիտալի կամքին,

Դատի տէր աշխարհասփիտ զանգուածներուն,
Եւ հայրենաբնակ պատուհասեալ հայերուն,
Ու տարածամօրէն երթալ խոկումի՝
Մեռելատան մէջ դրացի երկրին...

Ո՛վ դուք թրքամէտ դրացութեան շեփորահարներ,
Տակաւին ուշ չէ՛.

Ազգակերտումի դարատեւ ծամբուն
բերէք նպաստը ձեր,

Ազգաշէն միասնութեան հզօր երթին՝
Հայ ազգի զոյգ թեւերուն համերաշխ գործընթացով,
Արտերկրի հայոց բազմամակարդակ
կարողականութիւնը զօրակոչելով,
Յարութեան շունչով վերանորոգ հայրենի հայութեան՝
Հայ արմատներուն խորիմացման նպաստելով:

Զմոռնալ երբեք Արարատեան աշխարհի
ամրածուլման՝ ռազմագէտ հսկան,

Անունը պայծառ,
Փաշա կոչումով ՌՌԻԲԷՆ ՄԻՆԱՍԵԱՆ:



Մռաւ լեռան բարձունքէն Արծուաբիբ ճախրանքով
Արցախին հսկող՝ ցեղակրօն հերոս, անսինջ Գարեգին Նժդեհ

Նոր օրերու հայրենի այրեր,
Ճակատագրի պատմական դատակնիքն է՝
Որ իւրացնէք Ազգակերտումի դարասկիզբի
գործընթացը՝ իրականացնող առասպելական՝
Զորս հսկաներուն.

Զմոռնալ երբեք դէմքը տիտանեան,
Արցախ աշխարհէն, Շուշիի ծնունդ,
Եւ Արարատեան ողբի ու դրբի
անգոյ տարածքէն՝

Ուժեղ պետականութեան հիմերը կոփող,
Միշտ ապրող հսկան,
Անունը դարբերուն աւանդ՝
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ:

Զմոռնալ ապա, գործիչն աննկուն,
Յեղիս անմահութեան առաքելատիպ քարոզիչը,
Նախիջեւանի Արազի ափէն, Կղունթ գիւղացին,
Փրկիչն Արցախի,

Սպարապետն Զանգեզուրի,
Որ մինչեւ այսօր,
Մահէն ալ անդին,
Արծուաբիբ ու մոլեգին,
Դափանի բարձունքէն Մռաւին հսկող՝
Այր Յառաջընթաց՝
ՆԺԴԵՀ ԳԱՐԵԳԻՆ:

Զմոռնալ նաեւ,
Դարասկիզբի հայ-թաթարական
ազգամիջեան կռիւներուն՝

Աննկուն Ռազմագէտը,
Հայաջնջումի դար վիժեցնող՝
Ֆիտայի հսկան՝ անունը լուսէ՝
ՆԻԿՈԼԸ ԴՈՒՄԱՆ:

Զմոռնալ երբեք,
Սուրմալու գաւառէն, Իգդիր աւանի
«Ահարկու գիւղացին»,
Մահու եւ կենաց Մայիսեան գուպարին,
Առասպելական դէմքը սխրալի,

Խաչակիր Զորավար՝ Բաշ Ապարանի,
Աննահ Ասպետը՝

ԴՐՕ ԿԱՆԱՅԵԱՆ:

* * *

Մատենադարանի Ազգաժողովին
Մասնակից նոր օրերու հերոսներ բոլո՛ր,
Դարերու խորէն ձեզի կը նային՝
ԱԶԳԱԿԵՐՏՈՒՄԻ,

ՀԱՅԱՀԱԻԱՔԻ,

ՀՈՂԱԿՑՈՒՄԻ

Բիրատր հոգիները մեր հսկաներուն,
Բոլո՛ր դարերուն,
Տէր կանգնեցէք աչքի բիբի պէս
մեր թանկ Ասանդին,
«Սրբութեան-Սրբոց» սա բոտ մը հողին,
Ապահովելով երթը յաղթական,
Յաւերժի ձամբորդ Վեհագոյն Ազգիս,
Անուր ձեռքերով միշտ բարձր պահած,
Եռախորհուրդ Դրօշը Հայոց՝
Եռագոյնը Յաւէտ պանծալի:

Պէլյուք
21/05/1993

ԱՐՑԱԽԵԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺԱՊԱԻԷՆԸ ԴԻՏԵԼԷ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ԴԷՊՔԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԵԼԷ ԵՏՔ

Երեւանեան քանդումներո՞վ պիտի սկսեիք «Արցախ» ֆոնտի «Նոր Կեանք, Նոր Յոյս» ծրագիրը, արդարօրէն հարց կու տայ յանձնառու եւ տազնապահար ոեւէ հայրորդի այս օրերուն: Որովհետեւ խոր համոզումով կ'արձանագրենք, որ Արցախը հզօր է՝ անկախ Հայաստանը նեցուկ ունենալով. սակայն վերանկախացած հայրենի բուռ մը հողատարածքը պաշտպանողի գործեր չեն, Երեւանի մէջ կատարած վանտալական թրջատիպ արարքները:

Եթէ արցախեան թեժ պատերազմին եւ խաղաղութեան պայքարին նուիրուած վաւերագրական ժապաւենը, Երեւանի եւ հայրենի այլ քաղաքներուն մէջ, Լիբանանի հայրորդիներու զանգուածային ներկայութեան նման ընկալուէր, թերեւս երեւանեան վերջին ապագային արիւնալի արարքները չէին պատահեր:

Ուղղակի կարելի չէ չընդվզիլ եւ հայու վիրաւորուած արժանապատուութեամբ չտազնապիլ՝ արցախեան «Մարդկային պատմութիւն պատերազմի եւ խաղաղութեան օրերէն» ժապաւենը դիտելէ ետք, երբ կը լսենք ու կը տեսնենք Երեւանի վերջին օրերու քանդումները, կողոպուտներն ու հրկիզումները, եւ այս բոլորը՝ իբր թէ յանուն ազատութեան կերտումին եւ հայրենիքը «հայ դաւաճաններէն» ու «տականքներէն» փրկելու համար:

Եւ սակայն հոս մեզ կը յուզէ Գարեգին Նժդեհի մարգարեաշունչ պատգամը՝ ապագայանիշ ուղի թելադրող հայոց գալիք սերունդներուն. «Մեր պատմութիւնը յետ այսու, աղիտալի

սխալների կրկնությունը չպետք է լինի, այլ... ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Էլ ոչինչ այն ամենից՝ ինչը արուում է թշնամու գործը հեշտացրելու համար»:

Տակալին, Հայաստանի նախագահ Ռոպերթ Զոչարեան հայոց պատմութենէն ժառանգուած անկախութեան պաշտամունքի ինքնավստահ շեշտերով կ'աւետեր հանուր հայութեան, թէ՛ «Մենք այսօր ամուր հիմքերը ունենք ապահով եւ բարգաւաճ երկիր կառուցելու համար, որով հպարտանան բոլոր հայերը ամբողջ աշխարհում»:

Արդարեւ, արցախեան հողահաւաքի եւ հայատարածքներ ազատագրելու հերոսական մաքառումներէն ետք, հայ մարդու տրամաբանութիւնը անկարող է ըմբռնելու՝ երեւանեան վանտալական արարքները, որոնք միայն շուքի մէջ ձգելու կը ծառայեն Հայաստանի Հանրապետութեան կենարար դերը՝ «Ամենայն Հայոց Հայրենիք»-ը կենսագործելու տառապալից ու դժուարին ճանապարհին:

20 տարիներ առաջ սկսած արցախեան լինելութեան հերոսամարտերուն մասնակցող այր ու կին բոլոր հերոսները, իրենց նիւթական «ամէն ինչը» մոռնալով, մինչեւ իսկ իրենց ամենաթանկ հարստութիւնը՝ կեանքը զոհեցին եւ «մահուամբ զմահ» կոխելով՝ Արցախի եւ հանուր հայոց ապագայ բոլոր սերունդներուն ազատ եւ ինքնիշխան գոյութիւնը կտակեցին:

Սակայն քաղաքամայր Երեւանի մէջ, շահուած եւ կայացած անկախութիւնը, հայութեան ծոցէն ծնած այլամերժ զանգուածի մը կողմէ կրակի, հրկիզումի, քանդումի եւ ալան-թալանի տրուեցան:

Անհամատեղելի երկուութիւն մը կայ արցախեան հերոսներուն, եւ թրքածին վայրի բնազդներով սնած հայանուններուն բեւեռացած տիպարներուն միջեւ:

Հայրենի հանդուրժող իշխանութիւնները օրինական լծակներու ուշացած զսպիչ միջոցներով եկան առաջը առնելու հաւանական եղբայրասպան կռիւներուն:

Փոխադարձաբար, Հայաստանի Հանրապետութիւնը աւելի կը հզօրանայ, հայ ժողովուրդի լինելութեան յարթերթը ապահովուած՝ արծուաբոյն Արցախի, արիւնով շահուած լեռնաշխարհը ունենալով իր թիկունքին:

Արցախի անձնուրաց հերոսներուն դասը լաւա՛պէս սերտած

պետք է ըլլային Հայաստանի մէջ քաղաքական ապակայունացման կողմնակիցները եւ խնայելի մեր երկրին՝ այլամերժութեան եւ եղբայրասպան կռիւներու որեւէ դրսեւորում:

Պատերազմի դաշտին վրայ շահուած յաղթանակը պետք չէ պարտութիւն կրէ խաղաղ եւ արժանավայել կեանքի ստեղծման եւ պահպանման, համազգային լարում պահանջող երկարաշունչ պայքարին ընթացքին:

Հարկ է, որ համահայկական լարումով յաջողցնենք «Արցախ» ֆոնտի «Նոր Կեանք, Նոր Յոյս» ծրագիրը՝ սրբագրելու եւ շրջանցելու ազգաքանդ ճակատագրական սխալներու կրկնութիւնը եւ վիժեցնելու Հայաստանի սահմաններուն անդորրութեան եւ անձեռնմխելիութեան յարաժամ կերպով սպառնացող թշնամիներուն սադրանքները:

Տասնամեակ մը ամբողջ քար լռութիւն պահած «Մեծ Լռակեաց Ասորագետը» քաղաքական բեմ վերադարձաւ, կրկին «Նոր փրկիչ»-ի հնամաշ պատմուճան հագած, «հաւատացնելով», որ ինք ապաքինած է՝ թրքամետութեան «Սինտրոմային, Հիսթերիայէն», եւ այս անգամ ասպարեզ կ'իջնէ Հայաստանի «Ապականած» մթնոլորտը «Տականքներէն» մաքրելու սրբազան առաքելութեամբ:

Եւ սակայն, աւա՛ղ, Ասորագետ անշահ գիտնականը յամառեցաւ՝ այս անգամ եւս կառչած մնալու թրքամետ «Անել Կուրսի» ապագային գործընթացին՝ Մոխրացեալ Ասորիներուն վերապահուած պատմական ճակատագիրը, ա՛յս անգամ, դաւաճանաբար կրել տալով Յաւերժի ճամբորդ հայ ազգի վզին:

Խոժոռադեմ Արարատը կը հետեւի Արարատեան աշխարհի ազգաքանդ դէպքերուն:

Հայոց աշխարհի նահատակ Հերոսները բոլոր՝ դարերուն՝ կը սպասեն հայրենի այրերուն երկաթեայ անտեղիտալի բռունցքին զսպիչ ուժի դրսեւորման, եւ սկամայ սփիւռքացած, միակամ հայութեան ազդու գործով մասնակցութեան, աչքի բիբի պէս պահելով «Բուռ» մը փրկուած եւ մեր «Սրբութեան Սրբոց» Հայաստան աշխարհը՝ իբրեւ աւանդ եկող դարերուն:



Անմահանուն «Արամ Մանուկեանի սերունդին»
Պատգամ փոխանցող՝ Յ. Է.
(Մահուան 90-րդ տարելիցին առիթով)
Պուրճ Համուտ՝ 20 Նոյ. 2009

**ՀՅԴ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԽՈՍՍՈՒՄԸ՝
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՔՐԱԶՏՈՂ
ՏԱՃԱՐԻ ՆԱԽԱԴՈՒՌ**

**ԽՕՍՔ՝ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ
ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ 20 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-ԻՆ**

Սիրելի՛ Դաշնակցական Պատանի- Երիտասարդներ,

Որքան պիտի փափաքեի, որ ձեր մատղաշ կեանքի անկիւնադարձային այս հանդիսաւոր հանգրուանին, անիմանալի հրաշքով մը, ես ալ ձեզի տարեկից ու ձեր երիտասարդական անսպառ խանդավառութեամբ հարստացած ընկեր մը դարձած ըլլալ,

Պիտի ուզեի նաեւ, ձեզի հետ ու ձեր կողքին՝ սրտատրոփ սպասել ԽՈՍՏՈՒՄԻ կատարման եւ Դաշնակցութեան Մաքրագտող Տաճարի նախադուռէն մուտք գործողներէն մէկն ալ ես ըլլալ,

Այա՛ մաղթելու ձեզի, որ ոչ հեռաւոր բախտաւոր օր մըն ալ՝ որպէս ուխտեալ շարքային ծառայելու Դաշնակցութեան 120-ամեայ հզօր կառոյցի շարքերէն ներս:

Իրականութիւնը սակայն այլ կերպ կ'ընթանայ այս պահուն:

Ձեր դեմ կանգնած է աւելի քան 52 տարիներու կարգապահ շարքայինի վաստակով հպարտ ընկեր մը, որ իր Դաշնակցականի Կոչումին ամբողջական պարտաւորութիւններով՝ կը ներկայանայ որպէս Կնքահայրը ձեր Սերունդին եւ Երաշխաւորը ձեր հանդիսաւոր խոստումին, արժանաւորապէս ծառայելու Դաշնակցութեան իւրայատուկ, ահաւոր, սայթաքումներ չհանդուրժող, այլ սքանչելի կառոյցէն ներս:

Արդարեւ, Դաշնակցութեան յեղափոխիչ շունչով, ձեզի նման դաստիարակուած բանակ մը պատանի-երիտասարդներ, մեր մօտ 120 տարիներու փոթորկալի այլ փառաւոր մաքառումներ

րուն ընթացքին՝ բազմաթիվ աշխատանքներու, թռուցիկ խումբերու, թիկունքային վտանգալից գործողութիւններու եւ դժուար առաքելութեանց գործադրման մէջ՝ նախախնամական եւ հերոսական դերեր վերցուցած են, եւ անոնցմէ նոյնիսկ տասնեակներ՝ Նահատակութեան Փառապսակին արժանացած են:

Դաշնակցական պատանին իր ստացած դաստիարակութեան իսկ բերումով, պարտի իր շրջապատի տարեկիցներէն տարբեր նկարագրի տեր, աւելի վեհ գաղափարներու եւ բարոյական հասկացողութիւններու տարածիչ գործիչը եւ ազգօգուտ աշխատանքներու կենդանի օրինակը դառնալ:

Դաշնակցական պատանին, պարտաւորութիւնը ունի՝ հոգեփոխիչ ներկայութիւն դառնալու, ներկայ ժամանակներու բարոյական այլասերումներու, սայթաքումներու, խաղամոլութեանց եւ թմրամոլութիւններու, եւ ընկերային այլեւայլ յոռի երեւոյթներու դէմ սկսուած պայքարը յաջող կերպով իրականացնելու:

Վաղուան յանձնառու Դաշնակցական շարքայինը դառնալու ձեր այսօր կատարելիք առաջին հանդիսաւոր խոստումին պարտադրանքովն իսկ, կոչուած էք յառաջապահներէն մէկը դառնալու՝ Հայ Դատի հետապնդման, հայեցի առողջ դաստիարակութեան տարածման, թմրամոլութեան կործանիչ ախտին արմատէն վերացման եւ հայահոծ շրջաններու դիմագիծի անեղծ պահպանման անյետաձգելի եւ ազգօգուտ աշխատանքները իրագործելու:

Դաշնակցական պատանին, ներկայ դարու գիտական եւ ընկերային յառաջդիմութիւններուն եւ ուսումով զինուած ըլլալու կողքին՝ հարկ է, որ իր վարք ու բարքով, բարոյական եւ ընկերային գիտելիքներով նուիրեալ զինուորը դառնայ՝ 120-ամեայ Դաշնակցական հոյակապ կառոյցի հզօրացման եւ տեւականացման:

Արդէն, Դաշնակցութեան Առաջին Մանիֆէստը՝ Սեպտ. 1890 թ.ին կոչ կ'ուղղէր նաեւ երիտասարդութեան, հետեւեալ դիպուկ պատգամով.-

«Եւ դուք երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացեք ժողովուրդին՝ իրականացնելու ազգիս անկատար տենչերը»:

ՀՅԴ-ի Հիմնադիր Երրորդութեան՝ Զրիստափորի, Ռոստոմի եւ Չաւարեանի իւրաքանչիւրին գրաւիչ հմայքը, աներեր հեղինակութիւնը եւ անսասան հաւատքը՝ ազգի ազատութեան սուրբ գործին հանդէպ՝ կը սանձահարէին անհատական շեղումները, շեշտուած փառասիրութիւնները,

Եւ մարտիկը, հսկայ ֆիտային, ռենչալէր գիւղացին, գրողն ու մտաւորականը կը պահէին Դաշնակցական կառոյցի կուռ միութեան մէջ:

Սիրելի՛ Պատանի-Երիտասարդներ,

ՀՅԴ-ի Պայքարի վեհութիւնը, Ուխտի Սրբութիւնը, Ընկերասիրութիւնը եւ Նահատակ Մարտակից ընկերներու յիշատակին յարգումը՝ գլխաւոր շաղախը դարձան՝ կուռ կառոյցով Դաշնակցութեան Տաճարի անսասան պահպանման:

Պատանի՛-Երիտասարդներ,

Պետք է գիտակցիք՝ որ հերոսներու ծնունդ տուող եւ նահատակութեան պատրաստող բացառիկ կուսակցութիւն է Դաշնակցութիւնը:

Ան կը խմբէ եւ գործի կը մղէ ազգին լաւագոյն ուժերը՝ հանրային եւ ազգօգուտ նպատակներու իրականացման համար, անոնց շուրջ ստեղծելով համակրանք, փառք եւ մեծութիւն:

Միաժամանակ, սայթաքումներու հանդէպ աններող, դաժան եւ ահարկու կազմակերպութիւն է Դաշնակցութիւնը:

Հայ կեանքի դժոխային պայմաններուն մէջ ծնունդ առաւ, եւ հասակ նետեց ՀՅԴ-ի ամրակուռ կազմակերպութիւնը, ապրեցաւ ու գործեց ահաւոր փոթորիկներու մէջ, եւ սակայն կանգուն մնաց մինչեւ այսօր:

Սիրելի՛ Պատանիներ,

Դուք ԽՈՍՏՈՒՄ պիտի տաք՝ այսուհետեւ մաս կազմելու կազմակերպական կառոյցի մը՝ ուր կը տիրէ՝

Երկաթեայ զինուորական կարգապահութիւն, Ստեղծագործ Ոգի, Գերագոյն զոհողութեան վճռակամութիւն, Յեղափոխական յարատեւ պայքարի շունչ, որ հիացում կը պատճառէ նոյնիսկ մեր անհաշտ թշնամիներուն եւ հակառակորդներուն:

ՀՅԴ կազմակերպութիւնն է, թէ կուսակցութիւն

հարցադրումով ընկալուած այս զոյգ ըմբռնումը Դաշնակցութեան մասին, փոթորկալի տասնամեակներու ընթացքին բիրտեղացած՝ ստեղծեցին այսօրուան **ՀՅԴ հզօր կառոյցը, որ**

իր նախընթացը եւ նմանը չունի՝ ոչ միայն հայ, այլեւ օտար ազգերու կեանքին մէջ:

Յատկանշօրէն կը մէջբերեմ՝ Ռուս Յեղափոխական «Նարո-դանայա Վոլէա» (Ժողովրդական Կամք) շարժման ղեկավար դեմքերէն, համոզուած ընկերավարական եւ Զրիստափորի մտերիմներէն մեկուն, խոր համոզումի արդիւնք հետեւեալ խոստովանութիւնը:

«Փոքր ժողովուրդի մը ծոցէն ծնած Դաշնակցութիւն հզօր կառոյցը՝ երանի թէ ծնունդ առած ըլլար Ռուս ժողովուրդին ծոցին մէջ»:

Իսկ խորհրդային շրջանին, 1936 թուականին, Սովետական Զայաստանի Առաջին Վարիչ՝ Ադասի Խանջեան, իրեն գործակից բոլշեւիկ ընկերոջ՝ Լուսաւորութեան նախարար Դրաստամատ Սիմոնեանին կ'ըսէր ահաբեկուած կանխատեսութեամբ. -

«Խորհրդային իշխանութիւնը կատաստրոֆի ենթարկուելու դէպքում, Դաշնակներն են Ռեալ Միակ ուժը, որ կարող է անցընել իշխանութեան գլուխ. այն ատեն, ես ու դու կը փախչենք, եւ ասպարեզը կը մնայ Դաշնակներին»:

Եւ հիմա, սիրելի՛ պատանի-երիտասարդներ,

Դուք, կու՞մ շարքերով կանգնած էք 120-ամեայ ԶՅԴ-ի հզօր կառոյցի նախաշեմին:

Ձեր Դաշնակցական Պատանիի խոստումը կատարելով, տեր կանգնեցէք այս հզօր կառոյցին:

Արժանի պաշտպան պահակները դարձէք եւ անդուլ աշխատեցէք անոր անսասան գոյատեւման:

ԿԱՐԳԱՊԱՅ ԶԱԲԱՏԱՐՄՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԱԴՐԵՑԷՔ

ՁԵՉԻ ՏՐՈՒՄԾ ԶՐԱՅԱՆԳՆԵՐԸ:

ԱՆՁՆԱԶՈՐ ԸՆԿԵՐԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԱՍՐԱՑՈՒՑԷՔ

ՁԵՐ ԿԱՊԵՐԸ՝ ԻՐԱՐՈՒ ԶԵՏ:

Այս տարի 90-րդ տարելիցն է՝ Զայաստանի Առաջին Զանրապետութեան հիմնադիր՝ անմահանուն ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ:

Այսօրուրնէ սկսեալ, ձեր խիտ շարքերով եւ յանձնառու խոստումով, ապահոված պիտի ըլլաք ձեր մուտքի տոմսը Դաշնակցութեան ահաւոր, պատուհասող, հզօր, այլ՝ սքանչելի կառոյցէն ներս:

Ո՛վ Դաշնակցական Պատանիներ,
Խորհրդանշական ընտրութեամբ, բախտաւոր ձեր սերունդը թող կոչուի՝

Ընտրեալ Մենատեր, ժողովուրդի ծառայ եւ Ռազմագետ Զսկայ՝

«ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ» անունով՝

Գործնականօրէն ամրապնդելու Զայաստան - Սփիւռք անքակտելի Միութիւնը եւ Յարատեւ Պայքարի ձեր ներդրումով՝

Ի սպառ ձախողեցնելու

Զայաստանի Յաւերժութեան երթը խոչընդոտող հայրենի նորօրեայ «Զաղաքագետներուն» Թրքամետ սայթաքումները, եւ ճամբան լայն բանալու՝

ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՏ ՏԵՍԼԱԿԱՆԻ ԳՈՅԱՌՄԱՆ:

Ձեր խոստումը ընդունելի, «ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԵՐՈՒՆԴ»
Ձեր գալուստը բարի՝ ԶՅԴ հզօր կառոյցի նախաշեմէն ներս:

Պէյրուք
20/11/2009

**ԱՐԱՐԱՏԸ՝ ԳԵՐԻՇԽԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ
ՀՈՂԱՀԱՒԱՔԻ ՄԵՐ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ**

«ԱՊՐԻԼ 24»-Ի 96-ԱՄԵԱԿԻՆ՝ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԽՕՍՔ

Ցեղասպանության ոգեկոչման 96-ամեակի համազգային այս հանդիսաւոր պահուն, անգամ մը եւս կը յայտարարենք ի լուր աշխարհի, որ Հայոց ցեղասպանութիւնը պատմական անժխտելի իրողութիւն է, ան չէ դատապարտուած ու տակաւին կը մնայ անպատիժ:

Տասնեակներով պետութիւններ ճանչցած են արդէն 20-րդ դարու Առաջին Ցեղասպանութիւնը, հակառակ որ այս օրերուն մանաւանդ՝ Միացեալ Նահանգներու նախագահ Օպաման կը դրժէ իր խոստումը՝ Ցեղասպանութիւն եզրով բնութագրելու հայ ժողովուրդին կրած պատմական Աղէտը:

Ու հայութիւնը կը շարունակէ պահանջատիրական անկոտրում պայքարի յաղթերթը:

1915 թուականին Օսմանեան պետութեան ղեկավարութեան կանխաձրագրած Հայոց Ցեղասպանութեան ստեղծած ահաւոր ցնցումը, հոգեկան անկումը, յուսալքումը, գաղթական հայուն ապրած ընդվզումը եւ հայութեան հաւաքական խաթարման ընթացքը սակայն, Մեծ Եղեռնի գործադրման թուականէն 96 տարիներ ետք ալ այսօ՛ր, ապահովաբար չկրցան սպաննել հայ ազգի իւրայատկութիւնները,

Որովհետեւ ձուլումը հեռու է մեր հոգիներէն,
ԱՐԱՐԱՏԸ ՏԻՐԱԲԱՐ ԳԵՐԻՇԵԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է ԱԶ-
ԳԱԿԵՐՏՈՒՄԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ,

Ազատ ու անկախ է Հայաստանի Հանրապետութիւնը,

Ինքնիշխան է Ազատ Արցախը,

Վերականգնած է կոտորակուած հայութիւնը,

Պահանջատեր է Սփիւռքահայութիւնը,

Միակամ է Լիբանանահայութիւնը, իր կաթողիկոսական

աթոռով, իր քաղաքական հոսանքներով եւ հայութեան պահանջատերի անժամանցելի իրաւունքով:

Յաղթանակած է հայութիւնը ամենուրեք,

Որովհետեւ ան հաւատաց ու փաստեց աշխարհին, որ ինք հազարամեակներու մշակոյթ ունեցող՝ ապրող ու ստեղծագործող ազգ մըն է եւ իր անմնացորդ նպաստը բերած է ու կը շարունակէ բերել մարդկային քաղաքակրթութեան:

Հաւատա՛ց Աստուծոյ եւ աղօթքի հզօրութեան,

Սիրեց իր լեզուն, գիրն ու մշակոյթը,

Հպարտօրէն կառչած մնաց իր արմատներուն,

Չմոռցաւ հիւրընկալ ասպնջականութիւն ցուցաբերող ժողովուրդները,

Չմոռցաւ երբեք իր Արաբ եղբայրը,

Եղբայրացաւ՝ Արաբականութեան Դատին, որովհետեւ հաւատաց, որ ինք ճակատագրակիցն է նաեւ Արաբ ազգին:

Արաբական Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի ժողովուրդներուն տարրերային եւ ճակատագրական յեղափոխիչ շարժումները եւ Հայոց ցեղասպանութեան 96-ամեակի ոգեկոչումը՝

Առաւել եւս պէտք է ամրացնեն հայութեան միասնականութիւնը ամենուրեք,

Աշխատինք ամբողջական լարումով նպաստել կորիզ Հայաստանի Հանրապետութեան հզօրացման,

Ամրագրենք մեր խոր հաւատքը՝ Ամբողջական Հայաստանի իտեալին կենսագործման համար,

Ամենեւին պէտք չէ ընկրկի հայութեան պահանջատիրութիւնը, զօրակոչի ենթարկելով հայութեան ողջ կարողականութիւնը:

Այսօր ցեղասպանութիւնը կը շարունակուի նո՛ր գէնքերով.

Յեղասպանութեան հոգեբանական ցնցումը կը շարունակուի 1915 թ.էն ասդին եւ շարունակական պայքարի մարտահրաւերներ ունի վերանորոգ հայութեան:

Եւ այսօ՛ր, հայութիւնը նոյն հաւատքով եւ հաւատարմութեամբ կը զօրակցի Արաբական տարրերային ժողովրդային յեղափոխական շարժումներուն եւ անոնց հայրենանուէր դէկավարներուն:

Չուզահեռաբար, անպատիժ պէտք չէ մնայ՝ անժամանցելի

Հայոց Յեղասպանութիւնը կանխամտածուած ծրագրաւորումով գործադրած թուրքը:

Որովհետեւ, անպատիժ ցեղասպանութիւնը, առանց արդար հատուցումներու՝ կը քաջալերէ հրէշածին նոր Թալէթները եւ յետադիմական ֆաշիստ նոր կարգերու յառաջացումը:

Եւրոպական Միութեան թեկնածութեան արեւելումով եւ Միջին Արեւելքի քաղաքական խնդիրներու լուծման իր «միջնորդական դերակատարութեամբ» հանդէս եկող նոր Թուրքիան, անյետաձգելիօրէն պէտք է դէմ-յանդիման գայ իր սեփական արհեսաներկ անցեալին հետ եւ արդարութիւն բերէ եւ հատուցում կատարէ՝ Հայ Ազգին դէմ իր գործադրած ցեղասպանութեան համար,

Որպէսզի արդարանայ «Ձեռք խնդիրներու» թրջական նորաթուխ դրացիական քաղաքականութիւնը,

Եւ խաղաղութիւն հաստատուի շրջափակուած բոլոր ժողովուրդներուն եւ անարդարութեան զոհ հաւաքականութիւններուն միջեւ,

Եւ ստեղծուի աւելի արդար Միջին Արեւելք մը, տնտեսական եւ մշակութային բարգաւաճ ապագայով:

Թուրքիոյ ներկայ դեկավարութեան կը յիշեցնենք պատմակերտ նշանակութեամբ խոստովանութիւնը՝ ԹՈՒՐԶԻՈՅ ԵՐԲԵՄՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԱՄԱՏ ՖԵՐԻՏ ՄԵԾ ՎԵՉԻՐԻՆ՝ 17 Յունիս 1919 թուականին, խաղաղութեան վեհաժողովին առջեւ.-

«Պատերազմի ընթացքին, քաղաքակիրթ գրեթէ ամբողջ աշխարհը յուզուեցաւ, լսելով պատմութիւնը այն ոճիրներուն, զորս թուրքերը կատարեցին:

Հեռու ինձմէ այդ ոճիրները ծածկելու ամեն փորձ. անոնք մարդկային խղճմտանքը յաւիտենապէս սարսափով ցնցելու բնոյթը ունին:

Պիտի չփորձեմ նաեւ մեծ ողբերգութեան հեղինակներուն մեղքի բաժինը թեթեւցնել:»

Միացեալ Հայաստանի գոյառման ճամբուն վրայ, հայ քաղաքական մտքի ուշադրութենէն պէտք չէ վրիպի այսուհետեւ, թէ Արեւմտահայաստանի տարածքը այսօր, ամբողջովին ալ հայաթափուած չէ, թէկուզ իր արմատներէն հարկադրաբար հեռացւած, հարիւր-հազարաւոր վերազարթնող եւ իր ծագումին հաւատարիմ հայ զանգուածներով, հայ հողին ԼՈՒՐ ՊԱՅՄԱՆԵՐՈՎ...

Աշխարհագրականօրէն, հազարամեակէ մ'ի վեր, հայութիւնը եւ թրքութիւնը ճակատագրուած են ապրելու կողք-կողքի:

Ներկայիս, կայացած անկախ պետութիւնն է Հայաստանը, որ սակայն շրջափակուած է եւ Սեւրեան համեմատաբար ապահով աշխարհագրական սահմաններուն վերականգնման կը սպասէ:

Հայութիւնը կը հաւատայ, որ հեռու չէ նաեւ պատմական այն պահը, երբ դրացի թուրքիան, իր իսկ շահերէն մեկնելով՝ Արդարութիւն եւ հողային ու նիւթական հատուցում պիտի կատարէ իրաւատէր եւ պահանջատէր հայութեան:

Մինչ այդ,

Միասնականութեան անկոտրում լարումով եւ յարատեւ պայքարով,

Պահանջատէր պիտի մնանք մեր Արդար Հողային պահանջներուն,

Պիտի հզօրացնենք մեր կորիզ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը,

Ի գին ամեն զոհողութեան, ամուր պիտի պահենք ինքնիշխան Արցախը,

Սփիւռքի «հոգեղէն հայրենիք»-ի բոլոր կառոյցները պէտք է պահել, որպէսզի կարողանանք ստեղծել՝ ամբողջական ու Միացեալ հողեղէն հայրենիքը՝ իր Արեւելեան եւ Արեւմտեան թելերով, ինչպէս պատգամեր էր՝ Կիլիկիոյ կաթողիկոսներէն Քարեզին Ա. Յովսէփեանցը:

Պէյրուօ
24/04/2011

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀՐԱԶԴԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՆԱԽԱՇԷՄԻՆ

Այսօր կրկին, ցաւագինօրէն,
Պատմութիւնն Հայոց՝ կը կրկնէ ինքզինք,
Մասիսի խոժոռ նայուածքին ներքեւ:
Տարիներ առաջ, վերանկախացած Հայաստանի
Թրքամէտ «անել կուրսի» Ասորագէտ ռահվիրան՝
Երեսանեան թատերական բեմահարթակէն,
Անվերջ պայքարի դրօշը պարզեց...
մինչեւ յաղթանակ.

Սակայն՝
Մեր ազգային խոր ապրումներու դիմակատը հերոսը՝
Հաւատքի աններելի անկում արձանագրեց,
Դառնացնելով Ապրիլէն յարեալ՝
Նահատակները Եղեռնի Հայոց,

Սփիւռքացեալ բեկորները՝ աւեր Հայաստանի,
Մահապարտ հերոսները՝ Արցախ աշխարհի,
Յանձնառու հայորդիները՝ անլոյծ Հայ Դատին.
Ու վերջապէ՛ս,

Հայ Նոր Ասպետութեան կո՛տ շարքերուն՝
Արտաքսում եւ բանտ սահմանելով,
Մահապարտներու բանակ կազմակերպութիւնը՝
Մինչեւ իսկ Օրէնքէ դուրս հռչակագրելով՝
Հայրենի տարածքին...

Այսօր կրկին,
Կայ հրաւէր՝ ինքնաժխտումի, սակայն՝ անմեղ բնոյթի,
Վարագուրելու պատմական յիշողութիւնը ազգիս,
Այս անգամ՝ որպէս հլու-հնազանդ մարզական բանակ՝
Տեղ գրաւելու «Հրազդան» մարզաւանի չոր նստարաններուն վրայ,
Ցեղասպան թուրքի թոռներուն կողքին...

Անա՛ղ, հանուր հայութեան քաղաքական կամքը՝
Այսօր ալ, կը մնայ Մեծ բացական՝
Նորանկախ Հայաստանի առօրեայէն:
Երէկ, Երեւանեան թատրոնի բեմահարթակն էր՝
վայրը ձակատումին,
Այսօր, «Հրազդան»-ի մարզադաշտը կանաչ՝
Դառնալու է դաշտ Նոր Աւարայրի...
Ոտագնդակ գլորելու գմբուխտ դաշտը «Հրազդան»-ի՝
Ամենեւին պէտք չէ դառնայ ահաւոր
զոհասեղան, ու հեղման վայր՝
Հայոց բոսոր արեան...
Վերանկախ Հայաստանի Պատմական
ձակատագիրը վճռահատելու,
Փոխհատուցման գին որոշելու,
Քաղաքական ցանկացած շահեր ապահովելու
իտէալ նախադուր վայրը՝
Ոտագնդակի մրցման «Հրազդան»-ի
կանանչ դաշտը չէ՝
Թէկուզ՝ թուրք եւ հայ նախագահներուն
միացեալ ներկայութեան:
Պատմական դարաւոր կնիքով կնձռոտած, եւ
անլոյծ թուացող քաղաքական դատ մը,
Դիմացի կողմին աւանդական այլամերժութեամբ,
Երկախօսութեան բացարձակ բացակայութեան,
Զյայտարարուած գաղտնի բանակցութեանց
առկայութեան,
Եւ ոտագնդակներու անհաշի գլորումներով
երբեք չի լուծուիր...
Մարզական բարեկամական հանդիպման,
Եւ սոսկական երկու խումբերու ազնի մրցման
երեսոյթ չի պարզեր հրամցուածը...
Խումբերէն հայկականը՝ Արեւածին եւ
Ազատութեան երկրպագու ազգիս գաւակներն են՝
ազնի գործի անմնացորդ մարզիկներ.
Սակայն, Արաքսի դիմացի ափէն՝ «Հրազդան»-ի
մարզադաշտ ներկայանալիք խումբը, եւ
անոր հետեւելիք, ազատ մուտքով
հազարատրոններու զանգուածը՝
Նո՛յն Գորշ գայլերու արեան ծարաւի
վոհմակներն են՝

Մարզիկի կարմիր շապիկով ծայտեալ...
«Անել կուրսի», «Պատմութեան կեղծ կատաղորեայի»
եւ ֆութպոլի անշահ
խաղերու գոյառմա՞ն համար՝
Հայոց Պատմութեան՝ «Թուխ Արամազդը»
աշխարհի նգովքը կտակեց՝
թուրքին ոճիրը ուրացող հայուն. միթէ
«Հրազդան»-ի մարզադաշտ հասնելո՞ւ համար
Վիտոշի լանջին, Քրիստափորը բզբտեալ ինկաւ,
Թէ՛իլիրեանը ինչո՞ւ պայթեցուց ուղեղը՝
Թալէաթ ձիաղին,
Ռուբէնը ինչո՞ւ մաքրագտեց՝
բոս մը հողը Արարատեան աշխարհին,
Արամը ինչո՞ւ Հայ Պետականութեան
Հրաշքը կտակեց յետնորդ սերունդներու:
Որպէ՛սզի՝
Հայը, դէն շարտէ ընդմիշտ գաղթականի ցուպը,
Ազգովին բոլորուելու ի՛ր Մասիսին շուրջ,
Տէր ու Պահակ կանգնելու՝ հայրենի երկրի
ազատ տարածքներուն,
Դրական իր նպաստը բերելու՝
Անելի քաղաքակիրթ,
աւելի արդար աշխարհի մը գոյառման:
Այս հիմնաւորումներով արդարանային գուցէ՝
ցանկացած որեւէ մակարդակի
Հայ եւ թուրք յարաբերութիւնները,
Բաղձալի դառնային՝
սահմանային տեղաշարժերը՝
Թուրք եւ Հայ խաղաղ ազգաբնակչութեանց.
Հուսկ ապա՝
Կիմաստաւորուէին՝
Անմեղ թուացող խաղերը ֆութպոլի,
Եւ ցանկալի մերձեցումը՝
Դրացի ազգերու ժողովուրդներուն
եւ մշակոյթներուն:



Վեհափառ Խորեն կաթողիկոսին
մտերմութեանը մէջ

**ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԵՒ ԻՆՉՊԷՍ
ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱՅԼ ԼԻՔԱՆԱՆԻ ՍԷՉ
ՊԵՏԱԿԱՆ ԵՐԴՈՒԵԱԼ ԹԱՐԳՄԱՆԻՉ**

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԵՒ Ի՞ՆՉՊԵՍ ՆՇԱՆԱԿՈՒԵՑԱՅ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՉ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳՈՒԵԱԼ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Կաղ պատանեկության օրերես շեշտուած սեր ու հակում կը ցուցաբերի օտար լեզուներ սորվելու եւ բնագիրներէն ուղղակի անոնց գրականութեան եւ մշակութային գանձերուն բովանդակութիւնը կարդալու նկատմամբ:

Եւ սակայն, հակառակ անձնական ներքին նախասիրութեանս, համալսարանական ուսումնառութիւնս ամբողջացուցի մասնագիտանալով տնտեսա-վարչագիտական եւ քաղաքական գիտութեանց ճիւղին մէջ:

Հոս մասնայատուկ կերպով կը փափաքիմ յիշատակել, թէ Հայ ճեմարանի նախախնամական հայաբոյր ու հայագիտական նիւթերու դասաւանդման եւ իւրացման անփոխարինելի մթնոլորտին մէջ աւելի քան զարգացումի հասցուցի հայ եւ օտար լեզուներու տիրապետման աստիճանական գործընթացը՝ պաշտամունքի հասցնելով հայերէնագիտութիւնս ու մասնաւանդ՝ հայոց լեզուի անսպառ գանձերուն շարահիւսական նրբութիւններուն եւ ճկունութեանց մէջ հմտանալու արուեստը:

Հայ ճեմարանի մշակոյթի տաճարին հաւատաւոր քուրմերուն անմիջական հսկողութեամբ, անկասելի քաջալերանքին եւ հսկաներուն պատկառելի ներկայութեան՝ յանձնառու հայեր կերտելու սրբազան առաքելութիւնը կը շարունակուի ցայսօր:

Հայ ճեմարանը մտքի այն իւրայատուկ հնոցն էր, ուր առաւել կամ նուազ շեշտաւորումով հունաւորուեցաւ օտար լեզուներու, մշակութային ու գրական անմեռ գանձերուն ծաղկեալ նրբութեանց ծանօթացման, ամբողջացման եւ իւրացման հոլովոյթս:

Արդարեւ, իւրաքանչիւր ճեմարանաւարտ հայորդի, յանձնառու հայ դառնալու կողքին, տիրապետած կ'ըլլայ արդէն՝ հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներու իւրացման եւ օգտագործման գերազանցօրէն ընդունելի մակարդակի:

Այս բացառիկ իրողութիւնը նախադուռն էր թերեւս՝ ապագային պետական երդուեալ թարգմանիչ նշանակուելու երագիս իրականացման:

Համալսարանաւարտ դառնալէս ետք, գրեթէ տասնամեակ մը պաշտօնավարեցի ամբարտական զանազան հաստատութեանց մէջ՝ վարչական տնօրէնի հանգամանքով, եւ օտար երեք լեզուներով ամբարտական թղթակցութիւններ վարեցի՝ ցանկալի արհեստագիտական մակարդակով:

Սակայն վերոնշեալ տասնամեակին, տակաւ նշմարելի եղափոխական զարգացումով, եւրօթեանս մէջ կ'արմատանար օտար լեզուներով օրինական թարգմանութիւններ կատարելու ընդոծին ձիրքս:

Մասնաշատուկ յիշատակելի փաստ մըն ալ կ'ուզեմ մէջբերել հոս. 1960-1970 ժամանակաշրջանին, Լիբանանի մէջ հայութեան մօտաւոր թուաքանակը հասած էր արդէն ոչ արհամարհելի 300 հազար հայ քաղաքացիներէ բաղկացած ըլլալու նախանձելի մակարդակին եւ անկրկնելի պատմական իրողութեան:

ԴԺԲԱԽՏԱԲԱՐ ԱՅԴ ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԵԸ ՏԱԿԱԻՆ ՉՈՒՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԻ ՀԱՍԱԾ ՈՉ ԻՍԿ ՄԵԿ ՕՐԻՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ:

Կային անշուշտ անհատ արաբագետներ, ֆրանսագետներ, անգլիագետներ, նոյնիսկ՝ արաբերէն-հայերէն լեզուներու բառարանագետ հեղինակ անհատներ ու արաբագետ պետական երեսփոխաններ եւ նախարարներ:

Այս տխուր իրողութենէն մեկնելով՝ 1969 թուականին, ամառնային արեւոտ պայծառ կիրակի օր մը, որոշեցի Անթիլիասի մայրավանք երթալ՝ պատարագին ներկայ գտնուելու, ապա յատուկ ունկնդրութիւն մը խնդրելու Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Խորեն Ա. կաթողիկոսէն, տազնապալի անդհանքս եւ խոր մտահոգութիւնս բացայայտելու վեհափառ հօր:

Համարձակութիւնս արդիւնք էր փոքր տարիքէս մեր

նուիրապետական զանազան աստիճանի եկեղեցական դեմքերուն հետ ծանօթութիւն հաստատելու եւ կապը շարունակական պահելու նախանձախնդրութեանս, որ ժառանգաբար փոխանցուած էր անձիս՝ հոգիով հարուստ եւ ազնուական նկարագիրով հօրս մշտական քաջալերանքով:

Իսկապէս ալ, պատարագէն ետք ներկայացայ Խորեն Ա. կաթողիկոսին եւ աջահամբոյրէն ետք, ի պատասխան վեհափառ հօր հայրական իւրայատուկ նկարագրային գծին՝ ծանօթ ազգայիններու ընտանեկան եւ ընկերային հարցերուն մասին տեղեկանալու վեհին շեշտուած հետաքրքրութեան, բացատրեցի վեհափառ հօր, որ հակառակ մասնագիտական գոհացուցիչ զբաղումներուս, տեւական տազնապալի անձկութեամբ կը հետեւի լիբանանահայութեան օրինական թարգմանութեանց ասպարեզին պարզած ողորմելի վիճակին, բաղձանք յայտնելով, պետական ճանաչումի արժանանալով՝ լեզուներու օրինական թարգմանիչ նշանակուիլ Լիբանանի մէջ:

Վեհափառ հօր նկատել տուի նաեւ, որ նորին Սրբութիւնը հայոց միակ հեղինակութիւնն է, որ տեղեակ է Լիբանանի մէջ Հայ համայնքին այդ օրերու թուաքանակին եւ պետական դատական պատկան բաժանմունքներէն ներս՝ հայ տարրերու եւ մասնագետներու գրեթէ բացարձակ բացակայութեան:

Միաժամանակ Վեհափառ հօր յայտնեցի, անանձնական դրական պատրաստակամութիւնս նշանակուելու պետական երդուեալ թարգմանիչ՝ Լիբանանի Դատական նախարարութեան մասնագետներու նշանակումներու պատկան բաժանմունքին ցանկերուն վրայ:

Յայտնեմ երախտագիտաբար, որ Խորեն Ա. վեհափառ Գործնապաշտ (Pragmatist) կաթողիկոսը, սկզբունքով համաձայն գտնուեցաւ սրտցաւ առաջարկութեանս հիմնաւորումին, սակայն տեղին մատնանշեց, որ աւելի նպատակայարմար պիտի ըլլար Լիբանանի Հայոց Ազգային Առաջնորդարանին խորովակով եւ օրուան Լիբանանի հայոց բարեջան առաջնորդ Տաճատ արք. Ուրֆալեանի ուղղակի միջամտութեամբ, առաջնորդարանին կողմէ պատշաճ դիմում կատարել: Վերջինս պիտի դիմէր, Լիբանանի դատական պատկան իշխանութեանց՝ Ազգային Առաջնորդարանին Դատաստանական Խորհուրդին վճռահատած հայերէնով տեղեկագիրներուն, փաստաթուղթե-

րուն եւ դատական վճռագիրներուն օրինական թարգմանութիւնները՝ Հայոց Ազգային Առաջնորդարանէն ներս կատարելու արտօնութիւն ձեռք ձգելու պետական ճանաչում շնորհուած Երդուեալ թարգմանիչի մը կողմէ: Այս կերպով պիտի սրբագրուէր օրինական բացթողում մը, մասնագետ թարգմանիչի մը բացակայութեան փաստով՝ հայ համայնքին մէջ եւ Լիբանանի Հայոց Ազգային Առաջնորդարանէն ներս:

Արդարեւ, յաջորդող օրերուն, Լիբանանի հայոց բարեջան առաջնորդ Տաճատ արք.ը ընդառաջելով Նորին Սրբութիւն Խորէն Ա. կաթողիկոսին թելադրանքին, յատուկ յանձնարարական հաստատագիր-դիմումնագիր մը պատրաստել տուաւ՝ զայն յղելու Լիբանանի Դատական Նախարարութեան պատկան բաժանմունքին:

Նախքան 1969 թուականը, Լիբանանի մէջ յատուկ արտօնագիրով կը գործէին 32 մասնագետ նշանակեալ թարգմանիչներ: Այսօր հին ու նոր համալսարանական մասնագիտական վկայականներով արտօնեալ Երդուեալ թարգմանիչներու թուաքանակը հասած է արդէն 1500 մասնագետի՝ Լիբանանի տարածքին:

Լիբանանի Հայոց Առաջնորդարանին կատարած վերոյիշեալ դիմումէն քանի մը ամիս անց պաշտօնապէս տեղեկացայ, ապա՝ պատկան մարմիններէն ստուգելով հաստատեցի Երդուեալ Թարգմանիչ նշանակմանս մասին, Լիբանանի Պետական Պաշտօնաթերթին մէջ հրատարակուած ցանկերուն հիմամբ՝ Մարտի 1969 թուականին:

Լիբանանի Հայոց Ազգային Առաջնորդարանը եւ Լիբանանի հայ համայնքը վերջապէս ունեցան երկու օրինական նշանակեալ Երդուեալ Թարգմանիչներ՝ հայերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ թրքերէն (արաբատառ օսմաներէն եւ լատինատառ) լեզուներու:

Յիշեալ զոյգ թարգմանիչները այնուհետեւ օրէնքով արտօնուած էին օրինական թարգմանութիւններ կատարելու յիշեալ լեզուներով՝ Ազգային Առաջնորդարանին եւ լիբանանեան ընկերութեան թարգմանչական պահանջներուն գոհացում տալով:

Իմ պարագայիս, աւելի քան չորս տասնամեակներէ ի վեր Ազգային Առաջնորդարանի Դատաստանական Խորհուրդին վճռահատած ժառանգական, կալուածային, ամուսնալուծման,

խնամակալական, որդեգրական եւ այլ կարեւոր որոշումները հայերէն բնագիրներէն օրինաւորապէս կը թարգմանեմ արաբերէնի եւ այլ օտար լեզուներու, որպէսզի ըստ օրէնքի վաւերացում ստանան Լիբանանի Դատական Պատկան իշխանութեանց կողմէ: Հուսկ ապա օրինական ձեւով թարգմանուած եւ արդէն Ազգային Առաջնորդարանէն վճռահատուած որոշումները օրինաւորապէս գործադրելի կը դառնային եւ ընդունելի՝ պետական թէ անհատական կառոյցներէն, հաւատարմագրուած դեսպանատուներէն, համալսարաններու վարչութիւններէն, օտար երկիրներու գաղթականական բաժանմունքներէն եւ այլ սոսկական առնչակից անձնաւորութիւններէն ու հաստատութիւններէն:

Այսօր, յետադարձ ակնարկ մը նետելով, 1969 թուականը նախորդող շրջանը ներառելով, կը տեսնեք, որ հայ մասնագետ թարգմանիչներու աններելի բացակայութեան, կրկնակի զաւեշտական ողբերգակատակերգական երեւոյթ մը կը պարզեր մեր հաւաքական ազգային կեանքը: Այդ շրջանին անարդարանալի պարագաներու բերմամբ, եւ սխալ հիմնաւորումներով Հայոց լեզուի կատարեալ անգիտութեամբ փայլող Ասորի Երդուեալ Թարգմանիչ մը, տգիտօրէն, եւ ծիծաղելի անպատասխանատուութեամբ կը համարձակեր հայ համայնքի Պատկանելի Դատաստանական Խորհուրդին կողմէ վճռահատուած ամուսնալուծման որոշում մը... «օրինաւորապէս թարգմանել», հիմէն արդէն աններելի սխալ մեկնակետի մը հիմունքով... ամուսնալուծուած կնոջ օրինաւոր սննդագին գանձելու իրաւունքները փոխանցելով... յանցաւոր ամուսնալուծուած ամուսնոյն... եւ պարտաւորեցնել իրաւատեր կինը՝ «Սննդագին վճարելու յանցաւոր ամուսնոյն...»:

Այսպիսի ոչ նախանձելի կացութեան մէջ կը գտնուէր Ազգային Իշխանութիւնը եւ ոչ իրաւասու մարմիններու եւ թարգմանիչներու քմահաճոյքէն կախուած... լիբանանահայ մեր համայնքի օրինական գործառնութեանց ճակատագիրը:

Երդուեալ թարգմանիչին իւրայատկութեան ամենագլխաւոր յատկանիշը լեզուներուն կատարեալ տիրապետումն է, ճշգրիտ, բառացի եւ օրինական թարգմանութիւն կատարելը, պատասխանատուութեան բարձր գիտակցութիւն ունենալը եւ կատարեալ յարգանքի դրսեւորումը՝ պատկան դատական իշ-

խանութեանց հաստատած նիւթա-բարոյական պարտաւորութեանց եւ Օրէնքին տրամադրութիւններուն գործադրման նկատմամբ:

Չորս տասնամեակներ յարատեւութեամբ եւ խղճմտօրէն կատարած են բազմաազար օրինական ու մասնագիտական գործողութիւններու, պայմանագիրներու, փոխանորդագիրներու եւ համալսարանական վկայագիրներու թարգմանութիւնները՝ հայերէն, արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ թրքերէն (արաբատառ օսմաներէն եւ լատինատառ) լեզուներով:

Իմ երկար ծառայական գործունեութեանս ընթացքին միշտ պաշտպանած եմ յաճախորդ քաղաքացիներուն օրինական շահերը:

Յարատեւութիւնս եւ վստահելիութիւնս, միացած թարգմանիչի բաղձալի գաղտնապահութեանս, անձիս եւ հաստատութեանս վերապահած են ցանկալի, վստահելի եւ Օրինաւոր Երդուեալ Թարգմանիչի հռչակ:

Եւ սակայն, ասպարեզային իւրայատուկ եւ յարատեւ անդհանքս, առօրեայ անձկութիւնս եւ հնհնուքս, միացած յաճախորդ քաղաքացիներուն անհամբերութեան եւ ժամանակի գնահատումը կատարելու անկարողութեան, ամէն գնով իրենց կողմէ հաստատութեանս յանձնուած փաստաթուղթերուն կարճ ժամանակի մը ընթացքին օրինաւորապէս թարգմանած եւ վաւերացուած, ետ իրենց ճշդապահօրէն յանձնելու նախանձախնդրութիւնս, տարիներու երկայնքին, ասպարեզային եւ մասնագիտական աշխատանքներուս իրագործման համար կատարած մարդկային անօրինակ վազքս բաղձալի կեդրոնացած գրական գործունեութիւն ծաւալելու առիթը եւ կենսական ժամանակը յաւետ փակած են՝ սիրողական բանաստեղծիս ուսումնասիրութիւններուս անհրաժեշտ աղբիւրները հաւաքելու համար:

Ու զարմանալի չէ, որ գրական անդաստանին մէջ ներս մուտքս կը զուգադիպի յարաբերաբար յառաջացած տարիքիս, «Երկրորդ մանկութեան» հաճելի կենսափորձիս ճամբուն...

Սակայն հաստատօրէն կը բացայայտեմ հո՛ւս, թէ անձս երիտասարդական նոր «խանդ»-ով լիցքաւորուած, հպարտօրէն կ'ողջունեմ սերնդակիցներս եւ նոր սերունդի յանձնառու պարման-պարմանուիները եւ կը հրաւիրեմ զիրենք Գեղեցիկին,

Ճշմարիտին, Արդարին եւ Բարիին յաւետ լարումով ձգտելու եւ յանձնառութեան անմար ջահը յաջորդ սերունդին փոխանցելու պատրաստակամութեամբ:

Անհունօրէն բաւարարուած պիտի զգամ ինքզինքս, եթէ հրաւեր-պատգամներս դրականօրէն ընկալուին եւ արժեւորուին նոր սերունդին կողմէ:

Երկու խօսք ալ՝ իբրեւ վերջաբան.

Մտմտունքներով, անձկութեամբ ու տագնապալի հնհնուքներով յատկանշուող ասպարեզային առօրեայ կեանքս 45 տարիներ շարունակ ստիպեցին, որ քայլերս ուղղեմ դէպի Անթիլիասի մայրավանք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Խորէն Ա. կաթողիկոսի մօտ, որուն բարձր հասկացողութեան ու Գործնապաշտպանութեան (Pragmatism) շնորհիւ՝ Լիբանանի Հայոց օրինաւոր թարգմանութեանց ոլորտը, որ անտեսուած էր ու կը գոհացուեր պատահական օտար օրինական թարգմանիչներու զաւեշտական ողորմելի եղբայրական օժանդակութեամբ, վերջապէս 1969 թուականին օժտուեցաւ անհրաժեշտ հրամայական եղող Հայ Երդուեալ Պետական Թարգմանիչներով՝ միանգամընդմիշտ փրկելով Լիբանանի Հայ Համայնքը օրինաւոր թարգմանութիւնները պատահական Ասորական ու այլ օտար թարգմանիչներու «հակաօրինական» կախուածութիւններէն:

Պէյրութ
07/03/2016

ՎԵՐՋ՝ Ա. ՄԱՍ-Ի

Ա. ՄԱՍԻ Բ. ԲԱԺԻՆ

**«ԽԱՆԱՍՈՐԷՆ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ՝
ՀԱՅ ՈԳԻԻ ՎԵՐԱԶԱՐԹՆՈՒՄ ԵՒ
ԴԱՐԱԻՈՐ ՍՏՐԿԱՅՈՒՄԷ
ԱԶԱՏԱԳՐՈՒՄ»**

- **ՎԵՐՅՈՒՇԵՐՈՒ ԱՆԿԱՍԵԼԻ ԶԱՐԹՆՈՒՄ
ԿԻՍԱՓՈՒԼ ՇԷՆՔԻ ՄԸ ԱՌՋԵԻ**
- **ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԿՈԼ ԳՈՒՄԱՆԻ
ԾՆՆԴԱՎԱՅՐ (ԾԱՂԿԱՇԱՏ) ԳԻՂԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ**
- **ՀՐԱԶ ՓԱՓԱԶԵԱՆ ՆԵՄԵՍԻՍԻՆ
ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ**
- **ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑ ՊՈՂՈՏԱՅԻՆ ՎՐԱՅ՝
(ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԸ ՅԻՇԵՅՆՈՂ)
«ՍՈՒԼԹԱՆ ԽՈՐՈՎԱԾ» ՃԱՇԱՐԱՆԸ**



Երզրումի Դաշնակցութեան երբեմնի «ժողովրդային Տուն»ը

ՎԵՐՅՈՒՇԵՐՈՒ ԱՆԿԱՍԵԼԻ ՋԱՐԹՆՈՒՄ ԿԻՍԱՓՈՒԼ ՇԵՆՔԻ ՄԸ ԱՌՋԵՒ

Չայն մը հնչեց Երզրումի հայոց լեռներէն

Ընթերցող հայորդի, ուշադրութեամբ դիտե՛ն սկարը սա կիսափուլ, խոռոչ աչքերով ու ապակիները ջարդուած շէնքը:

Լիբանանի քաղաքացիական տխուր կռիւները յիշեցնող կամ Պեքաայի դաշտին խուլ անկիւններուն մէջ ծուարած գաւառային տխրատեսիլ շինութիւն մը չէ, ո՛չ ալ սուրիական, արդէն տարիներէ ի վեր շարունակուող պատերազմէն ազատագրուած շրջանի մը մէջ տեղադրուած՝ սոսկական շէնքի մը կմախքը, որուն ճակատամասի՝ վաճառատուներու վերածուած ընդարձակ սրահներուն մէջ, ո՛վ հեգնանք, շինարարութեան համար անհրաժեշտ շինանիւթեր, երկաթի ձողեր, պողպատեայ թելեր, կրաղիւս ու սիմէնթ (Demir, Çellik ve Çimento) կը վաճառեն... Իբրեւ թէ նպաստ բերելու շրջանի բարեգարդման, վերաշինութեան, եւ այլ կառուցումներու գործառնութեանց:

Ընթերցո՛ղ, վստահաբար տակաւին չկրցար կռահել այս տխրատեսիլ շինութեան գտնուած վայրը. ու կռահումներու հոսքին՝ ասկէ աւելի յանձնուիլ ներելի չէ, նոյնիսկ՝ երեւակայութեան զօրաւոր թելերուն ալ թափ տալով:

Ուրեմն՝ կարճ կապեմ. այս խարխլած, խոռոչ աչքերով, փշրուած ապակիներով շինութիւնը...

Այլ կառուցում մը չէ, եթէ ոչ՝ Կարինի Դաշնակցութեան երբեմնի փառաւոր, անկասելի թափով՝ «Մահ կամ Ազատութիւն» շէփորող, ու տււաբար Յեղափոխութեան գաղափարը տարա-

ծող՝ ՀՀԿ կազմակերպութեան ժողովրդային Տունն է:

Երզրումի այս կեդրոնին մէջ Յուլիս 1915 թ. կայացաւ ՀՀԿ-ի 8-րդ Ընդհանուր Ժողովը, Երկրի հողին վրայ երկրորդ անգամ ըլլալով, եւ որուն մասնակցեցան կուսակցութեան օրուան ղեկավար ղեմքերէն շատեր, ու տակաւին լիազօրուած եւ ընտրուած պատգամաւորներ:

Պատմութեան համար եւ Արխիւային մեր գրականութիւնը ակամայ «մոռացումներ» փրկելու նախանձախնդրութեամբ, կը յիշատակեմ ստորեւ շարք մը պատգամաւոր ղեկավար ընկերներու անունները, մանրակրկիտ ստուգումներ կատարելէ ետք:

Կ'ընդունիմ միաժամանակ, որ Պատգամաւոր ընկերներուն անուանացանկը սպառնիչ է:

Ուրեմն՝ տիրական ներկայութիւն էին՝ Ա. Վռամեան, Շահ Արմէն, Վ. Հիւսիսեան, Ռուբէն Տէր Մինասեան (Փաշան), Համագասպ Սրուանձտեան, Ռուբէն Չարդարեան, Ռոստոմ, Էտ. Ակնունի, Սիմոն Վրացեան, Վահան Մինախորեան, Աւետիս Ինճէ-ճիքեան, Վարդազար Տազետեան, Արտ. Հանըմեան, Տիգրան Խաչիկեան, Արմենակ Հոխիկեան, Վարդանեան, Փօլատեան եւ այլ պատգամաւոր ընկերներ:

Դժբախտաբար, այդ շրջանին զուգահիւսեցաւ նաեւ Համաշխարհային Առաջին Պատերազմին պայթումը, որուն աննախատեսելի հետեւանքներէն մէկը կրնար դառնալ՝ կեանքի դժխեմ ճակատագիր մը՝ վերապահուած վերոյիշեալ ընկերներէն ոմանց:

Արդարեւ, Երզրումի՝ ՀՀԿ 8-րդ Ընդհանուր Ժողովը վերջ տուաւ իր աշխատանքներուն ու նիստերը փակեց՝ առանց օրակարգի հարցերը սպառելու: Սակայն ընտրեց 9 հոգիէ բաղկացած յանձնախումբ մը՝ առկախ մնացած հարցերով զբաղելու համար:

Այսօր, պատահականօրէն անշուք վաճառատուներու վերածուած՝ Դաշնակցութեան կեդրոնի երբեմնի ընդարձակ սրահները՝ Վանտալ Թուրքերու Ժառանգորդները՝ «Շինարար» եւ «Գործարար» դարձած մարդիկ, «Տեմիր», «Չելլիք» «Չիմենթ» (երկաթ, պողպատ ու կրաղիւ) կը ծախեն՝ «Վերաշինելով» Երզրումի քանդուած ու աւերակոյտի վերածուած շէնքերը:

Նմանապէս, վերոնշեալ ՀՀԿ 8-րդ Ընդհանուր Ժողովը, արդէն նիստերը փակելու գործընթացին մէջն էր, երբ՝ Դաշնակցութեան ժողովրդային Տան գլխաւոր սա դռնէն հաւանաբար՝ մուտք գործեցին՝ Օսմանեան կայսրութեան «ամենագօր» ներքին նախարար Թալէաթի, եւ՝ «Իթթիհատ Վէ Թերրաքի» կուսակցութեան յատուկ պատուիրակները՝ տխրահռչակ ճիւղը՝ Տոքթ. Պեհաւետին Շաքիրը, եւ իրեն ընկերակցող թուրք յայտնի հռետոր Նաճի Պէյը եւ Հիլմի Պէյը, Դաշնակցութեան պաշտօնապէս առաջարկելու, որ հայութիւնը պատերազմին մասնակցի՝ Թուրքիոյ կողքին... Ռուսիոյ դէմ ու տարտամօրէն, ստապատիր խոստումներով՝ Անկախութիւն շնորհելու հայերուն, մոնկոլաբա՛ր այդ խոստումը յարգելու... պատերազմի աւարտին:

Բան մը, որ կտրականօրէն մերժուեցաւ ՀՀԿ-ին կողմէ:

Սահմուկեցուցիչ տեսարաններ կ'ուրուագծուին մտքիս պաստառին վրայ, մտաբերելով ՀՀԿ 8-րդ Ընդհանուր Ժողովին մասնակցող մեր ղեկավար ընկերներուն սպասող՝ անստոյգ ու դժխեմ ճակատագիր մը... Ի լրումն Պոլսոյ Ապրիլ 24-ի չարագուշակ գիշերուան ընթացքին կատարուած նենգ ձերբակալութիւններուն, թուրքի կեղծաւոր քաղաքականութեան, մօտալուտ կանխամտածուած Ցեղասպանութեան հրէշային ծրագիրին լայնածիր գործադրման:

Կանխելու համար աննախատեսելի դժուարութիւնները, Ընդհանուր Ժողովի պատգամաւոր ընկերները հապճեպ կերպով կը մեկնին՝ Հայատրոփ Կարինէն:

Ու տակաւին, այս շինութեան օրինակով, հազարաւոր նմանօրինակ շէնքեր, բնակարաններ, պատմական կառոյցներ, կենսական հաղորդակցութեանց ճամբաներ ու կամուրջներ, դարաւոր վանքեր ու եկեղեցիներ, եւ այլ հասարակական շինութիւններ՝ հիմնայատակ քանդուեցան, կամ՝ սեփականացւեցան ապօրինի իւրացումներով՝ «շինարար թուրք վանտալներուն», գորշ-գայլերու վոհմակներուն, մակաբոյծ եւ ամբարտաւան թուրքերուն կողմէ:

Անոնք, անտեղեակ արտաքին աշխարհին կը ներկայանան... որպէս՝

«Տիպար կառուցող»՝ եւ ոչ թէ քանդիչ տարր,

«Նրբաճաշակ շինարար»՝ եւ ո՛չ Մշակութասպան Մոնկոլ...

Մանրամասնօրեն նկարագրուեցաւ վերելը, թէ յիշեալ նկարը կը պատկերէ՝ 100 տարիներ առաջ՝ Կարինի Դաշնակցութեան երբեմնի փառաւոր ժողովրդային Տան ներկայի անփառունակ կիսափուլ վիճակը, ուր՝ ինչպէս ըսուեցաւ՝ հոն կը վաճառուին «Տէմիր, Չելլիք ու Չիմենթօ» եւ այլ շինանիւթեր:

Թուրքը ցարդ, ամբարտաւանօրեն կը սրբապղծէ այդ վայրերը, կ'անցնի երբեմնի հայատրոփ Էրզրումի ծաղկած փողոցներէն, Արմէն Գարոյի հօրենական պալատանման տան մօտակայքէն, Սանասարեան հռչակաւոր երկրորդականի բանուկ շրջափակէն...

Մինչեւ Վարդահեդէղ Արշալոյսի Ծագումը, երբ յաղթակասօրեն կրկին... պիտի հնչէ Յեղափոխութեան գոռ ձայնը՝ Էրզրումի հայոց լեռներէն:

Պէյրութ
23/03/2016

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ ԾՆՆԴԱՎԱՅՐ ՂՇԼԱՂ (ԾԱՂԿԱՇԱՏ) ԳԻՒՂԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

Արդէն աւելի քան տարի մը անցած է, անմոռանալի եւ անջնջելի ապրումներով յատկանշուող այն օրէն աստիճան, երբ անսպասելի հրաւեր մը ստացայ Լոս Անճելըսի մէջ բնակութիւն հաստատած եղբօրմէս: Ան կը տեղեկացըներ, որ մասնակցիմ տասնօրեայ շրջապտոյտի մը՝ դէպի Զայաստան ու Արցախ: Անհուն ուրախութեամբ ընդունեցի հրաւերը:

Մասնակցողները, բոլորն ալ նախկին լիբանանահայ յանձնառու ընկերներ էին, որոնցմէ կարելոր թիւ մը, զանազան ժամանակահատուածներու, Արցախի մղած ազատագրական, եւ Շուշիի անկարելիօրէն հրաշալի գրաւման ու հողակցման մարտերուն գործօն մասնակցութիւն բերած են:

Խանդավառուած էի մանաւանդ, խումբի առաջնորդ՝ ընկեր Յովիկ Սալիպայի այն հաստատումով թէ՛ «Այս անգամ, Զայաստանի ու Արցախի այցելելիք կարելորագոյն վայրերն ու անոնց կապուած յեղափոխական նշանակալից դէպքերը պիտի ընկալէք ու տեսնէք իմ աչքերովս»:

Արդարեւ, յիշեալ շրջապտոյտը կազմակերպող ընկերոջ բազմաթիւ այցերէն մէկն էր Զայաստան եւ Արցախ՝ 1988 թ.էն ասդին, եւ սակայն այս մէկը յատկանշականօրէն մնալու էր բացառիկ՝ իր ստեղծելիք ոգեշնչող հայրենասիրական անջնջելի զգացումներու առատութեամբ եւ նորանոր յանձնառութիւններով լիցքաւորուած, որովհետեւ նոյն այս այցը՝ ուխտագնացութիւն մըն էր՝ Արցախ հաչէն գաւառի (Ասկերանի շրջան), Նիկոլ Դումանի ծննդավայր՝ Ղշլաղ (Ծաղկաշատ) գիւղի տուն-թանգարանը:



Երկիւղած, յարգալից եւ աննկարագրելի գաղափարական հպարտութիւն կը ներշնչէ՝ տուն-թանգարանի նախնական գիւղական կառոյցի իւրաքանչիւր անկիւնը:

Արդէն, ներկայ գրութիւնը

պիտի կեդրոնանայ խորհրդաւոր այս վայրէն ժայթքող գաղափարական անխառն ապրումներու հոսքին, եւ իւրաքանչիւր ուխտաւոր ընկերոջ հոգւոյն խորերը դրոշմելիք Նոր Յանձնառութեան Ուխտին:

Ու մտքի թռիչքով եւ երեւակայութեան ոստումով իսկ անհաւատալի կը թուի, որ 148 տարիներ առաջ, տուն-թանգարանի նախնական բնակարանային կառոյցով այս տան մէջ 20 Յունւար 1867 թուին, իր աչքերը այս աշխարհին պիտի բանար մեր ժամանակներու յեղափոխական անկրկնելի ռազմագետ հայ-դուկապետը, Խանասորի պատուհասող արշաւանքին մտայնացումը, անոր յաջողութեան անվիճելի անտես ոգին, հայ-թաթարական արիւնալի ընդհարումներուն անմոռանալի յեղափոխական ղեկավարը: Արաուիլի քիւրտ վայրագ Մագրիկ ցեղը պատուհասող բազուկը՝ գոհացաւ յիսնապետի համեստ աստիճանով, երբ կրնար ու արժանի էր նշանակուելու, որպէս տաղանդաւոր ու հմայիչ ընդհանուր հրամանատարը, ան համեստութեան վսեմագոյն օրինակով այդ դերը ձգեց՝ համագիւղացի Վարդանին, որուն տունն ալ կը գտնուէր՝ տուն-թանգարանէն 50 մէթր հեռու՝ կորսուած գունաւոր պէս-պէս ծաղիկներու մէջ:

Մեր ուխտաւոր խումբը, երկիւղած լրջութեամբ պտտելով հողածածկ ու ընդարձակ տան իւրաքանչիւր սենեակը, հաղորդակից կը դառնար հոն ցուցադրուած շրջանակուած նկարնե-

րուն եւ հերոսին պատկանող առարկաները եւ իրերը զգուշօրէն շօշափելով, կը հաղորդէր անոնցմէ փոխանցուած յանձնառութեան աննիւթական գաղափարներուն:

Յատկանշական էր նկատել,

որ Նիկոլ Դումանի ընտանիքին մօտիկ անդամներէն մանկամարդ ժպտերես տիկինը՝ մեր առաջնորդ-ուղեցոյցն էր, եւ ան խոր յարգանքով ու նուիրուածութեամբ կը պահպանէր ու կը գուրգուրար տուն-թանգարանի իւրաքանչիւր ցուցադրուած առարկային վրայ, կը խնամէր նկարները մաշումէ, որոնք բոլորն ալ կը ներկայացնէին կեանքի զանազան հանգրուանները մեծ հերոսին եւ իրեն ժամանակակից ու գործակից բազմաթիւ գաղափարի ընկերներուն:

Տուն-թանգարանի ընդարձակ բակին մէջ, ուխտաւոր խումբիս ոգեղինացած ու ներշնչեալ ամէն մէկ անդամը՝ ինքնամոռաց խանդավառութեամբ, սկսաւ երգել քիւրտ վայրագ Մագրիկ ցեղի բնաջնջման նուիրուած յեղափոխական «Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտում»-ը հանրայայտ երգը... Կանանց երբեք ձեռք չտուող վրէժառու հայ ֆետայիի բարոյական վսեմ տիպարը վերյիշեցնող:

Անձնապէս, ուխտաւոր անձս, երկիւղած յարգանքով ու գաղափարական հպարտանքի պահեր ապրեցայ ու մտքի անօրինակ թռիչքով՝ զուգահեռներ գծեցի այս սրբազան բնակավայր քարային նախնական կառոյցին մէջ, տասնամեակներ ամբողջ կազմաւորման շրջան անցուցած ռազմագետ հսկային, Որսորդամուլ յեղափոխական հայդուկին, «Պօղազբէսէն»-ի յանդուգն անհաւասար կռիւին, երբ պաշարուած եւ քիւրտերուն կողմէ կրակի տրուած մարագին մէջ՝ առաջնորդող ղեկավար, խի-



զախ, եւ հնարամիտ Նիկոլ Դումանը յանկարծօրէն եւ անակընկալ, կը հրահանգէ ծուխերու մէջ կորսուած մարագէն դուրս թռչիլ ընկերներուն հետ, եւ անվրէպ հարուածներով կը գնդակահարեն այլայլած քիւրտերը, եւ ապահով ճանապարհ կը հարթէ իրեն եւ ընկերներուն համար:

Այնուհետեւ, հնարամիտ ու համարձակ հսկան, քիւրտերէն «Դուման» մակդիրով կը հռչակուի... ծուխերու մէջ կորած գոմէն անվնաս դուրս գալուն եւ բնութեան մէջ հետքը կորսնցնելուն համար:

Նիկոլ Դումանը, Խանասորի զսպիչ արշաւանքին մտայղացողը, գործադրողը եւ անոր յաջողութեան մղիչ ոգին էր:

Տուն-թանգարանի նախնական այս նոյն կառուցավայրէն, Նիկոլ Դուման հսկան, կը փլանաւորէ եւ ապագայ մղուելիք բոլոր կռիւներուն ծրագիրները կը յղանայ, նախապէս զանոնք բաժնելով երկու տեսակի.- Ամբոխային - հօտային եւ Կազմակերպ ու գիտակցուած Կարգապահ կռիւներ:

Նման տիպարի անփառասէր նուիրեալ յեղափոխական մեծ հայդուկը, այսպէս կը դաստիարակէր իր զինակից ընկերները՝ «Կարսի հնոց»-ի գաղափարական պատրաստութեան կեդրոններէն:

Մտքի անկաշկանդ թռչիքս շարունակելով՝ զուգորդաբար կը հասնիմ «Լիբանանի Կարսի հնոց»-ը համարուող Պուրճ Զամուտի Նիկոլ Դուման կոմիտէութեան շրջանը, ուր տասնամեակներ շարունակ Նիկոլ Դումանի յեղափոխական անհնազանդութիւնները որդեգրող փաղանգ մը ընկերներ անշահախնդրօրէն գործեցին եւ իրենք ալ իրենց կարգին՝ հրաշքներ գործեցին Լիբանանի քաղաքացիական տարիներ տւած եղբայրասպան քանդիչ պատերազմի դժուար օրերուն՝ անսակարկ օգնութեան հասան հայ եւ իսլամ անձերու եւ ընտանիքներու առօրեայ կենցաղային անհրաժեշտ պէտքերուն ապահովման եւ կեանքի պաշտպանութեան:

Արդարեւ, Նիկոլ Դուման կոմիտէութեան եւ մասնաւորաբար Թրատ թաղի շրջաններէն տասնեակներով իսլամ ընտանիքներ, կիներ, ծերեր, երեխաներ, նախընտրեցին՝ օրերով գիշերները անցընել եւ առժամեայ կայք հաստատել՝ Նիկոլ Դուման ժողովրդային ակումբի շրջապատէն ներս, կենցաղային, ապրուստի եւ բժշկական ամէն տեսակի անհրաժեշտ օժանդակու-

թիւն եւ ապահովութիւն գտան ԶՅԴ-ի յարկին տակ, որովհետեւ այդ իսլամ ընտանիքները իրենց կիները, ծերերը եւ մանուկները Դաշնակցութեան եւ Նիկոլ Դուման կոմիտէին անշահախնդիր եւ արդարամիտ վերաբերմունքին վստահեցան, ճիշդ ինչպէս 100 տարիներ առաջ, Խանասորի պատուհասող, պատժիչ եւ Մազրիկ ցեղի բնաջնջման արշաւանքին միջոցին եւ սակայն, խիստ հրահանգի ենթակայ՝ «Կանանց երբեք ձեռք չտալու» ֆետայական բարոյական յանձնառութեան, ու կողոպուտի ու նիւթական հիմքի ախորժակներով երբեք չչարժեցաւ վրէժխնդիր հայ ֆետան...

Նիկոլ Դուման կազմակերպիչ, գաղտնապահ, ռազմագետ հսկային թելադրանքները եւ զինուորական ցուցմունքները առկայ էին նաեւ Լիբանանի քաղաքացիական պաշտպանողական եւ ռազմավարական պատերազմին ողջ տեւողութեան, նոր օրերու մահապարտներուն կողմէ:

- «Որսորդամուլ» ֆետայի Դումանը կը պատգամէր եւ յատուկ նշանակութիւն կու տար որսորդութեան «արուեստ»-ին, երբ կ'ըսէր իր ընտրուած եւ պողպատէ կազմուածքով փորձառու եւ հասակաւոր ֆետայի զինակիցներուն.-

- «Որսորդական վարժութիւնն է միայն, որ մարդուն մօտեցընում է պատերազմի արհեստին. որսորդը այն անձն է, որ գործում է անկախ եւ ինքնուրոյն, եւ այդպէսով նրա մէջ է զարգանում հնարագիտութեան ոգին ու նախաձեռնութիւնը՝ կարելորտութեան խաղաղ կեանքի պայմանների ընթացքում, ու մանաւանդ պատերազմական կացութիւնների ժամանակ»:

Ըստ Նիկոլ Դուման անփառասէր եւ դաստիարակող յեղափոխականին, ինքնապաշտպանութեան խումբերուն մէջ կարող էին մտնել միմիայն «հրացանի եւ ատրճանակի փոքր ի շատէ վարժ անհատները եւ արձակողները»:

Դումանի ընտրած ֆետայիները նախընտրաբար պէտք է ըլլային «լուրջ, պողպատէ կազմուածքով, փորձառու հասակաւորներ եւ գաղտնապահ անձեր»:

Նիկոլ Դուման միշտ ալ կը գերադասէր «որակը՝ քանակէն», եւ խորհուրդ կու տար «կազմակերպել փոքր սակաւաթիւ կորիզ անհատներէ եւ գիտակից յեղափոխական տարրերէ կազմուած խումբեր...»:

Նմանօրինակ տարրերով կազմուած խումբեր ու կորիզ պա-

տերազմիկներ կարող կ'ըլլային արագ ու վճռական հարուածներ տալ հակառակորդ թշնամիին:

Չուգահեռաբար, նման տարրերու եւ պատերազմելու ատակ նուիրեալ եւ անձնագոհ ընկերներու փաղանգ մը յառաջացաւ Նիկոլ Դուման կոմիտեութեան եւ Լիբանանի այլ շրջաններուն մէջ:

Նիկոլ Դումանի ներդրումը անուրանալի է Դաշնակցութիւնը յատկանշող երկաթեայ կում կարգապահութեան եւ դաշնակցական տիպարի կերտումին եւ արմատաւորման մէջ:

Լիբանանի Նիկոլ Դուման կոմիտեութեան գոյառումն ու գոյատեւումը՝ կռուանն ու պատուանդանն է յանձնառու դաշնակցական սերունդ պատրաստելու «Լիբանանի Կարս 2 Յնոց»-ին մէջ, վառ պահելով անմեռ յիշատակը փաղանգ կազմած նահատակ հերոսներուն, եւ Զրիստափորեան, Ռոստոմեան եւ Չաւարեանական ոգիի գոյատեւման, եւ Արամերու, Ռուբէններու, Արղութեաններու, Անդրանիկներու, Գարեգին Տօղեհներու, Նիկոլ Դումաններու, Գեորգ Չաուշներու, Աղբիւր Սերոբներու, Թեղիբեաններու, Շիրակեաններու, Աղբալեաններու, Վրացեաններու, Դրօներու, Սասունիներու օրինակելի եւ դաշնակցականավայել ընթացքին հետեւելու նախաձեռնութեամբ եւ յանձնառութեամբ՝ «Կարսի 2-րդ Յնոց» Լիբանանի ՀՅԴ Նիկոլ Դուման կոմիտեութենէն եւ յեղափոխական գործի այլ կերպներէ, յանձնառու Մահապարտ հերոսներ ծնան ու գործեցին վարակիչ յեղափոխական կենսափորձովը՝ Աշճեան Արոյի, Պերպերեան Լեւոնի, Չէյթլեան Սարգիսի, Մարուխեան Հրայրի, Փափագեան Բարգէնի եւ Արապեան Խաչիկի:

Ի նմանութիւն խանասորեան արշաւանքին մտայղացող ռազմագետ հսկային, Լիբանանի ՀՅԴ Նիկոլ Դուման կոմիտեութենէն՝ նահատակութեան փառապսակին արժանացան ընկերներ՝ Սարգիս Ազնաւորեանը, Փաշա մականուանեալ՝ Յակոբ Մարտուպեանը, Կայծակ Փայլունին, Cow Boy Անդրանիկը, անհանդարտ մահապարտ՝ Սիմոն Մարտուպեանը, Աղէկ Մկրտիչեանը, հերթապահներ՝ Տրդատը, Եազըճեան Միսաքը, «Չամպըրլէյն» Պոտիկեան Միսաքը, եւ այլ բազմաթիւ խոնարհ, ծառայասեր, յանձնառու, ընկերասեր, անձնամոռաց ու վրէժառու ընկերներ եւ մահապարտ նահատակներու ինքնամատոյց հերոսներ:

Յատկանշական է օտար թղթակից Դ. Սալոմոն կրօնաւորին

հաստատումը լսել՝ 1897 թ. «Դրօշակ»-ի էջերէն, թէ՛ «Սալմաստի մէջ քիւրտեր ապահով թող զգան, որովհետեւ հոն չմնացին հայ մահապարտ հայրենասէրներ, այլ բազմահարիւր թուրքեր ու քիւրտեր, որոնք սոսկալի վախ ու սարսափ ունեին վրէժխընդիր հայ ֆետայիներու արագ ու վճռական հարուածներէն (car ils ont peur bleue de ces Diables d'Arméniens).

Վերոնշեալ հաստատումին աղբիւրն ու ոգին՝ Նիկոլ Դուման խորհրդաւոր, պատկառազոյ, լռակեաց ու գաղտնապահ անձն էր... որուն առասպելային գործին գաղտնիքը կը գտնուէր... իր ճակտին Աստուծոյ Մատին հպումին մէջ:

«Իրականութեան մէջ հնարաւոր չէ Դաշնակցական ռազմագետ Նիկոլ Դումանը համեմատել մեր հերոսացած ու նահատակուած միւս ֆետայիներուն հետ՝ որովհետեւ Նիկոլ Դումանը իրապէս ՄԵԾՈՒԹԻՒՆ էր»:

Նիկոլ Դուման առասպելական հերոսին մեծութիւնը յատկանշող հետեւեալ ցայտուն գիծերը իրեն յատուկ են եւ դժուար թէ՛ մէկ անձի մէջ մէկտեղուին. արդարեւ, Նիկոլ Դումանը վեհանձն էր, համեստութեան մարմնացում, անկեղծ, անանձնական, ընկերասեր, ծառայասեր, խիստ գաղտնապահ, լռակեաց, պատկառազոյ եւ խորհրդաւոր ռազմագետ ղեկավար, թշնամիին հանդէպ խստաբարոյ, խոժոռ յեղափոխական, անխնայ վրիժառու, արդարամիտ, բարոյական վեհ իտեալներու սպասարկու, յեղափոխական հասարակական գործիչ, ռազմագետ մտաւորական, հոգեբան հայդուկապետ, ռազմական ծրագիրներու սպառիչ մտայղացող, զինուորական անհամեմատելի ղեկավար, ճկուն ու հնարամիտ քաղաքագետ, անհընար ու անյուսալի կացութիւններու յանդուզն փրկիչ:

Այս մասին, տեղին ու դիպուկ է Անդրանիկի անկեղծ վկայութիւնը Նիկոլ Դումանի մասին.-

«Ափսոս, Դուման կենդանի չմնաց, որ մեզ ղեկավարէր Կամաւորական շարժումների ընթացքին»:

Հօր ազգ մը ունենալու համար, անհրաժեշտօրէն հարկ է օրինակ վերցնել Նիկոլ Դումանի առաքելատիպ հերոսին... մեծութիւնը հաստատող վերելք նշուած գործիչի եւ ղեկավարի կերպարները: Այդպիսի ազգային ծառայասեր ու անանձնական դէմքերն են, որոնք երկիր կրնան ղեկավարել եւ ապահով եւ հօր հայրենիքներ կրնան ամրագրել:

Նիկոլ Դումանի պատգամի համազօր մտքերը, տեղին արժեւորելու համար հայ ազգի ա՛յս մեծութիւնը կը մէջբերեմ.-

1) «Թշնամուն թէ բարեկամին յարգանք ու պատկառանք ներշնչողը դժբախտաբար դեռ եւս կոպիտ ուժն է: Հայը եթէ ուզում է յարգուած մնալ, պետք է գէնքի ընդունակ լինի, մի՛շտ ինքնապաշտպանութեան դիրքերում, մանաւանդ քաղաքական ցնցումների պահերին»:

Թուրքերու եւ հայոց կենաց-մահու անհաւասար այլ դժնդակ գուպարին ու դարատեւ պայքարին մասին:

2) «Երկու ժողովուրդներ, որոնք հակադրուած են իրենց արեամբ, անցեալով, կրօնով, մշակոյթով, քաղաքակրթութեամբ եւ պատմական ճակատագրով, արիւնահեղ գօտեմարտի բռնուեցան հայոց բարձրաբերձ լեռներու վրայ, որովհետեւ երկու ժողովուրդի համար տեղ չկայ Հայաստան լեռնաշխարհին մէջ: Նոյն հողը չէր կրնար ըստ ամենայնի երկու իրարու հակադրուած ժողովուրդներու հայրենիքը դառնալ»:

3) Նիկոլ Դուման, քիւրտերու եւ թուրքերու սանձարձակութիւններուն վերջ տալու դիտաւորութեամբ՝ «Հայ հրամանատարներից խստօրէն պահանջում եմ իւրաքանչիւր սպանուած հայի փոխարէն՝ սպաննել հինգ թուրք»:

Նիկոլ Դումանի ինքնապաշտպանութեան եւ հակայարձակումի մասին:

4) «Ով որ կարծում է թէ հայութիւնը կատարելապէս ապահով է, եւ իրան մազին դիպչող չի լինի. բայց պետք չէ եզրակացնել որ մենք շարունակ պետք է որոնենք թշնամու թոյլ կէտերը, եւ յանուն ինքնապաշտպանութեան կոտորենք անպաշտպաններին:

«Նպատակայարմար պիտի լինի եթէ պատիժի եւ պատասխանատուութեան ենթարկենք միմիայն յանցաւոր շրջանը»:

«Ժողովրդական եւ ինքնապաշտպանութեան նախագիծ»-ի հրատարակման նպատակին մասին Նիկոլ Դուման կը հաստատէ.-

5) «Անձնապէս ինձ կը զգայի հոգեպէս մխիթարուած եւ բարոյապէս վարձատրուած, եթէ մարտական այդ պատրաստութիւնները, իրերի բախտաւոր բերմամբ, մի տենչալի օր գարկըւէին հրէշային ճակտին բոլոր այն նենգաւոր կառավարութիւններին եւ արտօնեալ մակաբոյժների, որոնք ազգեր թունաւորե-

լով՝ մեզ դրել են եղբայրասպան դասեր շարադրելու տխուր անհրաժեշտութեան առաջ»:

Ազատասեր Արցախի սեզ գաւակ՝ Նիկոլ Դումանը միշտ գործեց ՀՅԴ նուիրական ծոցին մէջ ու միշտ բարձր պահեց Դաշնակցութեան մարտական դրօշը, որուն շուրջ կը հաւաքուէին՝ վտանգի թէ կռիւի ժամանակ, մեր ցեղի ամենաընտիր եւ խիզախ հոգիները...:

Ամենայն տեղ, Դումանը գործօն ղեկավար էր, ընտիր մարտիկ, փայլուն մտաւորական, իմաստուն մարդ, զգաստ ու հեռատես, միաժամանակ՝ համեստ ու անաչառ, շիտակ եւ ուղղամիտ իսկական հերոս, զուրկ արտաքին փայլէ, հեղինակաւոր եւ պողպատեայ կամքի տեր, գրաւիչ, հմայող, կարող ու կորովի:

6) «Խանասորէն մինչեւ Սարդարապատ փռուած Հայաստանի լեռնաշխարհը՝ լոկ աշխարհագրական տարածք չէ...

Ոգին ծաւալ չունի, այլ ազգային ոգեկան խտացած իրականութիւն է, եւ ահա թէ ինչո՛ւ Խանասորի մէջ արձակուած գնդակը՝ Սարդարապատի մէջ հասաւ իր նշանակետին»:

Ահա այսպիսի պայծառ ու դիպուկ մտքեր արձանագրած է՝ տաղանդաւոր հրապարակախօս ու լրագրող՝ ընկեր Նազարեթ Պերպերեանը՝ Խանասորի հայրուկապետը բնութագրած յօդուածի մը մէջ:

Ու կը շարունակէ «Խանասորի ճակատագրական ու ժայռանիստ պատուանդանը դարձաւ Հայ Ոգիի վերագարթման եւ անկիւնադարձ սխրանք՝ Հայ Յեղափոխութեան յաղթութեան, եւ հայոց նորագոյն դիւցազնապետին վախճանական Սարդարապատեան դրուագը, դարեր տեւող թրքական եւ օսմանեան ստրկացման եւ ոչնչացման ծրագիրներէն ետք»:

Նիկոլ Դումանի նախախնամական ներդրումը հսկայական է եւ անուրանալի՝ Դաշնակցութիւնը յատկանշող երկաթեայ կուռ կարգապահութեան եւ Դաշնակցական կերպարի արմատաւորման ու դաշնակցականացման գործընթացին իրականացման ճամբուն:

Դաշնակցութեան բոլոր ակումբները, եւ սակայն, մասնաւոր յիշատակութեան արժանի է Լիբանանի Նիկոլ Դուման կոմիտեութեան նստավայր ակումբը՝ հայեցի ու գաղափարական դաստիարակութեան լուսատու կեդրոններ են, ուր երիտասար-

դուրժան եւ պատանիներու հոգին ու միտքը կ'ազնուանան՝ հայրենասիրութեան եւ վստմացող գաղափարներու հնոցին մէջ:

ՀՅԴ-ի ժողովրդային Տուները ոգեղինացած «Հոգեւոր Հայրենիք»-ի մասնիկներ են Սփիւռքեան համայնակույ մթնոլորտին մէջ:

Մանրանկար այս հայաստաններուն մէջ՝ նորահաս սերունդները կը հաղորդուին հայոց անցեալ փառքին եւ հաստատաքայլ կը դիմեն դէպի Հայոց Պայծառ Ապագան:

Եւ արդէն Պուրճ Համուտի մեր ակումբները եղան որբ ու մանկութիւն չունեցող սերունդներուն վերապրումի փրկարար լաստերը:

Այդ հայրենահանուած հրաշքով ապրող որբերը, մեր ակումբներուն մէջ տոգորուեցան հայրենասիրութեամբ, ու դարձան գիտակից ու յանձնառու շարքայիկներ:

Եւ իրաւամբ, Լիբանանի, Թրատ թաղի 2-րդ Կարսի հնոցին մէջ, տասնամեակներ շարունակ նորանոր Անձնագոհ Մահապարտներ աճեցան ու նահատակութեան փառապսակին արժանացան:

Թրատի մեր կեդրոնը դարձաւ «Կարսի 2-րդ հնոց», հոգեւոր Հայաստանի փոքր տարածք,

Հաւատքի բերդ «Լիբանանի Թրատ թաղի Դաշնակցութեան մեր ակումբը եղաւ նաեւ անմար բազին նահատակ մեր հերոսներուն հոգիներուն եւ ճառագայթող կառոյցը կրկնօրինակւած՝ Անկախ Արցախի Նիկոլ Դուման Տուն-թանգարանին, նստավայր կեդրոնը՝ Ռազմագետ Դուման հերոսին մարգարեաշունչ պատգամներուն:

Պէյրուօ
24 Ապրիլ 2016

ՀՐԱՉ ՓԱՓԱՋԵԱՆ ՆԵՄԵՍԻՍԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Թուականը՝ 5 Հոկտեմբեր 1950, Պէյրուօ: Հօրս հետ եկած ենք Դամասկոսն եւ արձանագրութեան համար կը սպասենք՝ Հայ Ճեմարանի Գ. դասարանի ուսանող արձանագրուելու համար:

25 Յունիս 1950 թուականին աւարտած եմ՝ Դամասկոսի Միացեալ Վարժարանի ընթացքը, որուն տնօրէն, Կիլիկիոյ շրջանի մեր կազմակերպութեան ներհուն մտաւորական դեկավարներէն՝ Տիգրան Գալըպճեանին յատուկ յանձնարարութեամբ, կը յուսայիսք, Հայ Ճեմարանի բախտաւոր աշակերտներէն մէկը դառնալ:

Ամիսներ առաջ, հայրս արդէն որոշած էր զիս անպայման Ճեմարանական մկրտել, բախտաւոր օր մըն ալ՝ յանձնառու հայը դիմաւորելու ակնկալութեամբ:

Միշտ ալ, Դամասկոսէն՝ Հայ Ճեմարան ընդունուած ուսանողները՝ մատի վրայ կը հաշուըւէին:

Միացեալի աւարտականները ընդհանրապէս իրենց ուսումը կը շարունակէին՝ Դամասկոսի պետական կամ օտար վարժարաններուն մէջ:

Ճեմարանական կոչումին արժանացած եւ ընթացաւարտ դարձած են հետեւեալ Դամասկոսահայ ուսանողները:

Հիներէն կը յիշեմ Մ. Իշխանի եւ Գառնիկ Բանեանի դասընկեր դարձած՝ Յովհաննէս Երէցեանը (հետագային քահանայ ձեռնադրուած), Խաթունիկ Բագրատունի, ծնեալ Սրապեան (Լոս Անճելըս, Միացեալ Նահանգներ), Արաքսի Շահինեան, ծնեալ Սրապեան (Պէյրուօ), Վարուժան Գալընճեան (այժմ՝ Ֆրեզսօ, Միացեալ Նահանգներ):

Եւ ահա, այսօր՝ իմ հերթս է, անձկութեամբ սպասելու՝ Ճեմարանի քովընտի սպասման սրահը՝ տեղեկանալու արձանագրութեան ընթացքի մասին:

Առաջին ու գլխաւոր խոչընդոտը կը յայտնուի շուտով. Լեւոն Շանթ, մանկավարժական մտահոգութիւններով, դասաւանդման անելի լաւ արդիւնքի մը հասնելու համար, արդէն որոշած էր Գ. դասարանին մաս կազմելիք աշակերտներուն թուաքանակը՝ 20 աշակերտ:

Ուրեմն՝ անելորդ տեղ ու գրասեղան մը տեղադրելու հնարաւորութիւն չկար Գ. դասարանէն ներս՝ ինծի յատկացուելու համար: 21-րդ աշակերտ անձս՝ դատապարտուած էր մերժուելու՝ Ճեմարանական դառնալու բախտաւորութենէն:

Անճրկած էր մեծ ակնկալութիւններով Ճեմարան դիմող՝ ազնուական ու հայու հարուստ ոգիով հայրս:

Բարեբախտաբար, ճակատագրական գուգադիպութեամբ, այդ օրերուն՝ Յալէպէն Ազգային գործերով Պէյրութ կը գտնուէին երկու պատուական հայորդիներ: Մէկը՝ Բերիոյ Թեմի Յայոց Առաջնորդ՝ Չարեհ Սրբազան Փայասլեանը (հետագային՝ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), իսկ միւսը՝ Յայ Նեմեսիսներէն՝ Յրաչ Փափագեանը (Յալէպէն):

Չարեհ Սրբազանին հետ՝ հայրենակցական լաւագոյն մտերմիկ կապեր կը պահեր հայրս՝ երկար տարիներ է վեր:

Յայրս անվարան կը դիմէ Չարեհ Սրբազանին՝ Լեւոն Շանթին մօտ դրական միջամտութիւն մը կատարելու ակնկալութեամբ:

Սրբազանը սակայն, կը նախընտրէ, որ Յրաչ Փափագեանը կատարէ խնդրուած միջնորդական առաքելութիւնը, զարգացընելով այն գաղափարը, թէ դամասկահայութիւնը մեծ ակնկալութիւններ կապած է ապագայի հաշուով՝ իմ անձիս բերելիք նպաստին դամասկահայ համեմատաբար փոքրաթիւ գաղութէն ներս:

Ակնկալուածին պէս, Յայ Նեմեսիս Յրաչ Փափագեանը կ'ընդունի կատարելու առաջարկուած իր առաքելութիւնը՝ խիստ ու իր մանկավարժական սկզբունքները անշեղօրէն գործադրող Լեւոն Շանթին մօտ:

Արդարեւ, Յրաչ Փափագեանը, իր պատկառազօր ինքնավրտահութեամբ, ուղղակի կը դիմէ Ճեմարանի տնօրէն Լեւոն Շանթին, շեշտելով անհրաժեշտութիւնը՝ անձս բացառիկ կար-

գադրութեամբ մը ընդունելու Յայ Ճեմարանի աշակերտ:

Յայ Նեմեսիս Յրաչ Փափագեանի ճակատագրական ազդու միջամտութեամբ՝ Լեւոն Շանթ տեղի տուաւ, մանկավարժական իր անշեղ սկզբունքներէն մէկուն գործադրումէն՝ այդպիսով զիս արժանացնելով՝ Յայ Ճեմարանի ուսանող նկատուելու հպարտառիթ որոշումին:

10 Յոկտեմբեր 1950 թուականին, մեծ եռուզեռով սկսան Ճեմարանի նոր Տարեշրջանի դասաւանդութիւնները:

Սակայն՝ ես դպրոցական ընթացիկ տեսքով գրասեղան իսկ չունէի, 20 աշակերտէ բաղկացած Գ. դասարանին մէջ:

Կարգադրուեցաւ, որ 21-րդ աշակերտիս դասարանային աշխատանքներուն համար, հապճեպ կերպով ինծի յատկացուի... պարզ սեղան մը եւ աթոռակ մը... Եւ այս ընթացքը շարունակուեցաւ մինչեւ Բ. կիսամեայի սկիզբը, երբ՝ ես ալ ունեցայ իմ գրասեղանս:

Այդ թուականէն սկսեալ, մինչեւ Յունիս 1956 թ., երկրորդական լրիւ ուսումնառութեանս աւարտը՝ մաս կազմեցի Յայ Ճեմարանին բացառիկ ու անփոխարինելի մեծ ընտանիքին:

Այդ բախտաբեր որոշումին արդիւնքով, դարձայ յանձնառու հպարտ հայը, որ ես եմ այսօր:

Թող լոյս իջնէ հոգիներուն՝ Չարեհ Ա. Վեհափառին եւ Յայ Նեմեսիս Յրաչ Փափագեանին, որոնց բարի կամեցողութեամբ եւ հեղինակաւոր միջամտութեամբ, ես դարձայ ամբողջական բախտաւոր Ճեմարանականը:

Կարօ Սասունի, գրականութեան սիրելի ուսուցիչիս հետեւեալ դիպուկ հաստատումով՝ կը վերջացնեմ ներկայ հակիրճ յօդուածս:

«Յայ սփիւռքի տարածքին՝ մշակութային ու ազգային բազմաթիւ Յայ կրթական հաստատութիւններ կը գործեն եւ սակայն՝ Յայ Ճեմարանին վերապահուած է, Յայ Ոգին դարբնելու, եւ Ազգային Յանձնառութեամբ՝ ապագայ սերունդներ պատրաստելու նախախնամական առաքելութիւնը, Սփիւռքի համայնակուլ տարածքին, ատենին անոր անողնահար եւ պահպանողական, անկազմակերպ գոյութեան ընթացքին «Չըլլայ որ անգործ լճանանք Յայ Կեանքի Տոմարի լուսանցքին»:

Պէյրութ
08/05/2016

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑ ՊՈՂՈՏԱՅԻՆ ՎՐԱՅ՝ (ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԸ ՅԻՇԵՑՆՈՂ) «ՍՈՒԼԹԱՆ ԽՈՐՈՎԱԾ» ԲԵՍՏՈՐԱՆ

Յամի Տեառն՝ 2005 թուականին, Արտասահմանի գա-
նազան երկիրներէ՝ Յայրենիք ժամանած գբօսաշըր-
չիկներու խումբիս ապրած ուրախ եւ յիշատակելի
պահերու կողքին, Երեւանի Մաշտոց պողոտային վրայ զգա-
ցած անօրինակ ցասումը՝ «Սուլթան Խորոված» մատուցող
օտարոտի անունով «Րեստորան»-ին առջեւ:

Արդարեւ խումբս, Մաշտոց պողոտային երկայնքին՝ լուսա-
զարդուած հարուստ ցուցափեղկերը դիտելով՝ զարմացումով
կանգ առաւ, յիշեալ «Սուլթան Խորոված» եւ «Արեւելեան Շա-
ուրմա» սպասարկող ճաշարանի մուտքին:

Ի դէպ, նոյն օրերուն, Մաշտոց պողոտայէն հազարաւոր
յանձնառու հայորդիներ եւ «Աղբալեան Ուսանողական Միու-
թեան» կուռ շարքերով ջահակիրները՝ Ջահերթ կազմած,
խրոխտ քայլերով Ծիծեռկանաբերդ կ'ուղղուէին... «Սուլթան
Խորոված» ըստորանին մէջ «բիզնես» ծաւալող, հայածին սե-
փականատիրոջ անտարբեր աչքերուն առջեւ:

Համարձակեցանք դիմել իրեն եւ խմբովին անհաւատալի
իրողութեան մը տխուր վկաները դարձանք. քաղաքավար
ոճով, խումբիս տազնապալի ցասումը արտայայտեցինք՝ նե-
րողութիւն նմանութեան համար՝ «Սուլթան (Համիտ) Խորովա-
ծի ըստորանին» օտարոտի եւ անյարմար անուանումին հա-
մար եւ ճաշարանի տիրոջ հարց տուինք այդ մասին, մանա-
ւանդ որ կը գտնուէինք Մաշտոցի անուան պողոտային վրայ:

«Րեստորան»-ի հայածին սեփականատերը ի՞ր կարգին, մեր
խո՛ր զարմացումին ի տես շատ բնական զարմացումով մը
պատասխանեց.-



«Աղբեր ճան, սա բիզնես ա, ու վերջ»:

Ուրեմն՝ քանի որ Երեւանի սրտին, Մաշտոցի անուան պողո-
տային շուրջ բոլորը՝ հայրենի մեր եղբայրները այսպէ՛ս կը
հասկնան հայրենասիրութիւնը, եւ այսքա՛ն բարձր է հայրենի
անմեռ Ոգին, կարելի է որ՝ Մեսրոպ Մաշտոցը, Համիտ Սուլթա-
նը յիշեցնող Խորովածի ըստորանը, «Արեւելեան Շաուրմա»-ով
Հարուն էլ-Րաշիտ խալիֆան եւ «Ճեզվէ» սրճարանի՝ լեղի
սուրճ մատրուակող տերը կամ տերերը, համատեղ գոյատեւեն,
եւ այսպէ՛ս կը ծաղկի հայածին թուրքերու բիզնեսը՝ հեռուէն
խոժոռացած Արարատը ակամայից Մեծ վկան կը դառնայ՝ այս
«աւլը-վերիշին»...

Ըսէ՛ք, բարի մարդիկ աշխարհի, դուք յանձնառու հայորդի-
ներ հայրենի, Հայաստանի Երկրորդ Հանրապետութեան վե-
րանկախացումէն 25 տարիներ ետք, արդէն չափահասութեան
տարիքին հասած ու անցած՝ Հայաստանի Արի մարդոց իշխող
դասը եւ «Հպա՛րտ Հայաստան»-ի ղեկավարութիւնը՝ ակնկալե-
լի էր, որ շատոնց շրջանցած ըլլային խորհրդային բռնապե-
տութեան թափթփուքներէն ժառանգ մնացած ու տակաւ
քաշկռտուող ապագային յոռի բարքերը, հարկ է, որ ծրագ-
րէին՝ արժանապատիւ կեանքի տուեալները, ապահովէին՝ աղ-
քատութեան եզրին դեգերող՝ հայրենի ազգաբնակչութեան
տանելի ապագան, մշակէին՝ շուկայական թեքումով եւ անտա-
ռի օրէնքներով զարգացող տնտեսական եւ առեւտրական գոր-
ծառնութիւնը հակակշռելու գործընթացը, զարկ տային՝ քաղա-
քացիական եւ ընկերային հասունութեան մշակոյթի ծաղկման,
որդեգրէին՝ Հայ Ոգիի պահպանման, ազգային բարոյական
հասկացողութեանց եւ աւանդութիւններու տեւականացման
մարտահրաւերները, հսկէին՝ Հայոց լեզուի անաղարտ պահ-

պանման եւ պատշաճ գործածութեան, ջնջելն՝ օտարամուտ, վայրագ եւ ապագային երեւոյթներու դրսեւորումը, չափ ու սահման դնելն... սուսկի պէս բուսնող օտար լեզուով գովագողներու զարգացման, սահմանափակելն՝ վաճառատուներուն անճոռնի ու խայտառակ անուանումները... որոնք ի դէպ, ամենայն անպատասխանատուութեամբ կը զարդարեն «բիզնես» ծաւալող հաստատութիւններու ճակատը, վաճառատուներ, որոնք խոհանոցային ուտեստեղէններ կը մատուցէին՝ չնաշխարհիկ բնութագրումով... «Սուլթան Յորոված», Յարուն էլ Րաշիտ խալիֆայի քիմքին վայել՝ «Արեւելեան Շաւուրմա» եւ «Երջանիկ Եմեն»-էն ներածուած եւ «Ճեզվէ» սրճարանին մէջ սպասարկուող լեղի սուրճ:

Որեւէ գիտակից ու հայրենասէր հայորդի, Յայաստանի ազգաբնակիչ թէ Սփիւռքացեալ գաղթականի զաւակ, հարկադրաբար պետք է խորթ կերպով ընկալէ՝ մեր Ազգային Ամմեռ Ոգին վիրաւորող, ու հայերէն լեզուի մաքրութիւնը աղճատող անուանումները:

Մեզի նախորդող սերունդները, աւելի քան դար մը առաջ, լեզուական ու մշակութային սքանչելի յեղափոխութիւն մը իրականացուցին, Աշխարհաբարը մաքրագտեցին, մեր լեզամտածողութիւնը հայացուցին եւ այս՝ որպէսզի մենք կարողանանք հպարտօրէն «Ոսկեղնիկ» հայերէնով հաղորդուիլ «Չքանն Յանճարոյ»-ի իմաստութեանց մթնոլորտին եւ ո՛չ թէ մեր որկորը կշտացնէինք եւ ստամոքսային խիթերը հանդարտեցնէինք՝ «Սուլթան Յորոված»-ով, «Արեւելեան Շաւուրմա»-ով եւ հաճոյանայինք «Ճեզվէ» սրճարանի լեղի սուրճով:

Կը հաւատանք, որ Մաշտոցի Ամմեռ Ոգին, Մատենադարանի իր դարաւոր հանգիստէն պիտի վերարթնար ու նման Զրիստոսի, խարազան ի ձեռին, դուրս պիտի շարտեր... բոլո՛ր, բոլո՛ր «Սուլթան Յորոված»-ներու, «Արեւելեան Շաւուրմա»-ի տեսակաւոր սպասարկողները, եւ «Ճեզվէ»-ով լեղի սուրճ մատրուակող եւ այսօրինակ «Բիզնես»-ներ ծաւալող բոլո՛ր մութ հերոսները:

Պէյրութ
20/03/2016

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՈՐՈ՞Ւ ՊԵՏՔ Է ԱՊԱԻՆԻՒՒ ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԻՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՆԵՐԿԱՅ ՓՈՒԼԻ ՎՏԱՆԳՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Իրենց արդար իրատւոյններու շեղքերման համար պայքարող ժողովուրդներու գաւակները ճնշումի դիմաց րեղի շեն փռած երբեք»:

Հ. ՄԱՐՈՒԽԵԱՆ

Այս օրերուն, հայ ժողովուրդը, իր հաւասարագոր եւ լրացուցիչ եռեակ ճակատներով, կը դիմագրաւէ հայոց պատմութեան ամենէն բախտորոշ եւ աննախատեսելի հետեւանքներով յղի շրջանը:

Ազգային միասնականութեան անյետաձգելի եւ հրամայական անհրաժեշտութիւնը կը զգացուի ամեն մակարդակի վրայ:

Յայրենաբնակ հայութեան անկախութիւն կերտած սերունդները իրենց յաւերժութեան փառապսակը ստացան Սարդարապատի ճշմարտութեան պատին դիմաց:

Արցախ՝ պահանջատիրութեան եւ ինքնորոշման դրօշ բարձրացուց, **հողահաւաքի եւ հայահաւաքի անմեռ տեսլականներով** եւ պատմակերտ յաղթանակներ պարգեւեց հայութեան:

Սփիւռքը այսօ՛ր, իր բազմաշերտ ու ներգոր կարողականութիւններով ամբողջական զօրակոչի ենթարկուելու եւ տակաւ հզօրացող անկախ Յայաստանի յաւերժագրման գործընթացին իր անսակարկ նպաստը բերելու հրամայականին դիմաց կանգնած է:

Հայութեան ներուժը՝ պետական տակաւ կայացող վարչա-մեքենան, հայրենի պետական այրերը, ազգային բանակը, հայոց եկեղեցին, գիտական ուժը եւ ռազմական ստեղծագործ հանճարը, կուսակցութիւնները, միութիւնները եւ կազմակերպական այլազան կառոյցները պէ՛տք է միասնական ոգիով եւ նպատակասլաց թափով աշխատին՝ ամբօրէն պահպանելու հայութեան ինքնիշխան գոյութեան ձեռքբերումները:

Հայ ժողովուրդին տարած ու տանելիք բոլոր յաղթանակները սոսկական ղեկավարներու եւ անձերու քմահաճոյքին յագուրդ տալու անհեռատես փորձութեան պէտք չէ ենթարկուին:

Ազգն ու հայրենիքը վեր կը մնան իշխանութեան բոլոր այրերէն, նախագահի անձէն, կուսակցութեանց շահերէն եւ անհատներու փառասիրութիւններէն:

Թէեւ անհատ հերոսներու ներդրումը միշտ ալ կարելորդ է, եւ սակայն յաւերժական Հայաստանի տեսլականին իրականացումը եւ բնական ապահով սահմաններով անկախ Հայաստանի գոյառումը միայն անձերու ֆուլթայլային դիւսազիտութեան եւ բանգիտութեան հետ կապել՝ ազգովին մեզ փակուղի տանող գործընթաց է:

Որեւէ քաղաքական գործիչ երկու չափ եւ երկու կշիռի ոճով պէտք չէ պառակտումի տանի եւ որում ցանէ Հայաստանի եւ Իրաւատեր Սփիւռքին միջեւ:

Այդ ոճը՝ Գորշ գայլերու իշխող դասին յարատեւ երազն երէկ, եւ այսօր մեզի պարտադրուելիք պայմանաւոր սահմանային համաձայնագիրները անպայման տեղի պիտի տան հայութեան միասնական կեցուածքին դիմաց:

Դիպուկ վերլիշում մը՝ Նիքոլա Մաքիավելլիէն տեղին է եւ ուսանելի. «Գայլերու աշխարհին մէջ աղուէս պէտք է ըլլայ...»:

Հեռահայեաց եւ հայուն տակաւ պակսող մարտունակ ոգիին պէտք ունինք,

Յարատեւ պայքարի, գաղափարական յանձնառու եւ անսահանջ պահակներով պէտք ունինք,

Մեր նորագոյն պատմութեան, գերագոյն անձնագոհութեամբ փառապսակուած հերոսներուն ներշնչող օրինակին պէտք ունինք:

Յուսալքուած ու կոտորակուած ազգի բեկորներէն՝ գերագոյն նահատակութիւնը նուաճած սերունդին եւ զանոնք ան-

պարտելի բանակի վերածող ընտրեալ մենատեր Արամներու տաղանդին պէտք ունինք:

Իբրեւ արծիւ սաւառնող եւ գորշ գայլերուն լարած «խաղաղասիրական» եւ «քաղաքակիրթ» բազում թակարդները կանխատեսող եւ ամբարտաւան թշնամին պատուհասող Անդրանիկներու վրիժառու բազուկին պէտք ունինք:

Հայ ազգի ցեղային ասպետական ոգիի մաքրագտման, հայութեան յաւերժացման, ապահով սահմաններով Հայաստանի մը գոյառման հաւատացող եւ իրականացնող Տեղակոսն Գարեգին Նժդեհներու նման հերոսներուն պէ՛տք ունինք:

Հայկական բռնագրաւեալ տարածքները հողահաւաքով ազատագրող եւ հայրենի պատմական անսակարկելի իրաւունքները վերականգնող՝ Ռուբէն «Փաշաներուն» անմեռ տեսլականին պէ՛տք ունինք:

Հայը դարերու ընթացքին իր բազկի ուժը եւ քաջութիւնը վատնեց օտար բանակներուն ծառայութեան մէջ եւ ամրացուց անոնց տատանող գահերը՝

– Իբրեւ Սասանեան բանակներու յառաջընթաց զօրամաս՝ Զուշանաց աշխարհը խաղաղեցնելու առաքելութեամբ:

– Բիւզանդիոսի բանակներուն մէջ Դանուբի ափերուն՝ Վանտալ հոներն ու գոթերը զսպելով եւ անոնց Իտալիա ներխուժումը կասեցնելով:

– Հայրենական մեծ պատերազմի աւարտին ռուս բանակը յաղթականօրէն եւ առաջիններէն Պերլին առաջնորդող մարաշախտ Բագրամեաններ եւ Սարաֆեաններ ընծայաբերելով:

Հակառակ դարե՛ր տուող այս ծով զոհողութեանց՝ հայը մնաց աշխարհի ամենէն աւելի անարդարութեանց զոհ ազգը:

Եւ ի՛նչ ողբերգական կատակերգութիւն, ցեղասպանուած ազգերուն առաջիններէն մէկը ըլլալու ո՛չ նախանձելի դիրքը գրաւելու մղեց մեզ մեր դարաւոր թշնամին:

Տեղասպանութեան դատապարտումը չէ կատարուած տակաւին՝ ցեղասպան ու ոճրածին ազգին կողմէ:

Այսօր հրամցուածը մեզի, ցեղասպանութեան անսակարկելի ճշմարտութիւնը նենգափոխելով ուսումնասիրելու եւ ակադեմական խառն ենթայանձնախումբերու սեղանին շուրջ անվերջ քաշկռտելու եւ հարցական դարձնելու հաւանականութիւնը, երկրորդ աններելի ցեղասպանութեան մը եւ մեր միլիո-

Նաւոր նահատակ հայրերուն եւ մայրերուն յիշատակը անգամ մը եւս թաղելու համազօր է...:

Սահմանային Կարսի դրան կամ այլ աշխարհագրական կէտի մը պայմանաւոր բացումը՝ Կարսի անվաւեր դաշնագրի նուիրագործումն է, այս անգամ՝ հայրենի իշխանութեանց սահմակեցնող մասնակցութեամբ:

Գոնէ, 13 Յոկտեմբեր 1921 թուականին, տխրահռչակ այդ դաշնագրին ստորագրումը կատարուեցաւ քեմալական Ազգային ժողովի ներկայացուցիչներուն եւ տակաւին անհաստատ պոլշեիկ վարչակարգի թուրքի «Եօլտաշ» եւ «քոզմովոլիթ» աղանդաւորներուն միջեւ, երբ նոյն այդ օրերուն Խորհրդային Յայաստանի միջազգային որբէւ ինքնութիւն չունեցող «Արտգործ» անզօր նախարարը Սուղանի տափաստաններուն մէջ՝ վայրի խոզերու որսորդութեամբ զբաղած էր:

Թուրք եւ հայ ժողովուրդները, աշխարհագրականօրէն ճակատագրուած են՝ այսուհետեւ ալ իբրեւ դրացի ազգեր գոյատեւելու:

Սակայն մոլեռանդ, աղանդաւոր եւ ամբարտաւան թուրք դեկավարները չեն, որ երկու ժողովուրդներուն համար բաղձալի խաղաղութիւնը պիտի բերեն շրջանին:

Բիրտ ուժով օրէնք եւ սահմանային անձեռնմխելիութիւն պարտադրելու գործընթացը թուրք եւ հայ ժողովուրդներուն լինելութիւնը չի կրնար կերտել ամենեւին:

Օրէնքները գործադրելի ուժի վերածելու համար կազմակերպ ու արդարադատ մարմիններու պէտք ունինք:

Յայութիւնը ազգերու ընտանիքին մէջ իր քաղաքակրթական եւ մշակութային դրական ներդրումը իրագործելու համար ապահով սահմաններով Սելրեան Յայաստանի գոյառման պէտք է միասնական ներուժով ձգտի եւ ո՛չ թէ սահմանային կէտի մը անշահ բացումով, կամ ֆուլթալային անհեռատես քաղաքականութեան մը մարզանքներով զբաղի:

Յո՞ երթաս, անկախ եւ հպարտ Յայաստան:

Չգաստանա՛լ է պէտք՝ «Օլիկարխ» վերնախաւ հայրենի:

Եւ դո՛ւն, ցեղասպանութեան զոհ, Պահանջատեր Սփիւռք, զօրակոչէ քու անսպառ եւ ներուժ գիտական եւ մարդկային կարողականութիւններդ, ամբողջական հայրենիքի գոյառման եւ հզօրացման համար՝ վիժեցնելով հայ եւ թուրք յարաբերու-

թեանց նորագոյն թակարդուած դրսեւորումները:

Չի՛ Արարատը խոժոռադէմ կը դիտէ մեզ բոլորս:

Եւ դարերէն եկող եւ դարերուն գացող պատմութիւնը հայոց՝ հաշիւ պիտի պահանջէ ապագային եւ սայթաքեցնող գործելաճի բոլոր հերոսներէն:

Պէլրութ
21/09/2009

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԿԻՆ ՓՈԽԱՆՑՈՒԱԾ ՊԱՏԳԱՄ ՄԱՅԻՍ 28-Ի 85-ԱՄԵԱԿԻ ՈԳԻՈՎ ՅԱՆՉՆԱՌՈՒԹԵԱՄԲ ԶՕՐԱԿՈՉՈՒԵԼՈՒ

85-րդ տարեդարձն է այսօր, հայոց նորագոյն պատմութեան ամենէն հերոսական սխրանքներէն՝ պատմակերտ թուական դարձած եւ Մայիս 28-ով խորհրդանշուող շերտսամարտին:

1915 թուականին, թուրք ռազմամուլ եւ արիւնարբու Գորշ Գայլերու վոհմակը եւ Իթթիհատի ոճրագործները՝ հայութեան հետքը աշխարհի երեսէն ջնջելու եւ պատմութեան էջերէն ալ նենգափոխուած տուեալներով ներկայացնելու ոճրային որոշումը տուին:

Հայկական Յեղասպանութիւնը յղացող ոճրածին ուղեղներէն՝ Թալէաթ, 1915 թ., թուրքի ամբարտաւանութեամբ եւ մութ բանդագուշանքով «կ'աւետեր Աշխարհին»

- Յաւետ կորուստը՝ հազարամեակներու հայոց հայրենիքի հողին եւ հայատարածքներու աննախադէպ հայաթափումը,

- Հայ ազգի արմատական ոչնչացումը,

- Եւ տակաւին, ան երդումով կը խոստանար՝ մորթուած վերջին հայու գանկը՝ թանգարանային իր իբր ցուցադրել...

Մեծ եղեռնէն կարճ ժամանակ մ'առաջ, թուրք բանաստեղծ Չիա Կեօք Ալի իր կարգին, ոճրածին եւ արնածարաւ իր ցեղին ձայնին ունկնդիր՝ մոլեգնօրէն կը գոչեր.-

«Արդարութիւնը պիտի կախեմ եաթաղանիս ծայրը,

Քաղաքակրթութիւնը՝ ձիւս պայտերուն,

Եւ պիտի կործանեմ ամեն բան...»

Կը թուեր թէ՛ Հայն ու Հայաստանը պատմութեան էջերուն անցան առ յաւետ:

Արդարեւ, 1375 թուականին, Կիլիկեան ուրոյն պետականութեան կորուստէն դարեր անց, 1915 թուականին՝ հայութիւնը կը դիմագրաւեր իր գոյութեան ամենաճակատագրական աղետը:

Հայասպան եղեռնէն 3 տարիներ անց, 1918 թուականին, վերապրող ճղակտոր հայութեան կեանքը անձեւ քառս էր, ապագան անստոյգ, հայաշխարհը հայաթափ, հարիւր հազարաւոր թշուառ որբեր, թափառական, անօթի եւ մահուան սեմին, հաւաքուած ու լեցուցած էին Արարատեան դաշտի մէկ պատառիկը մահաստան դարձած Էջմիածնի մօտակայ շրջանները եւ ստոյգ մահուան անդունդի եզրին՝

Մահու եւ կենաց պատմութեան անկարելի քննութիւն մը անցընելու պարտադրուած էր՝ կոտորակուած եւ ջարդերէն մազապուրծ փրկուած բոլոր մը հայութիւնը:

Եւ սակայն, հրաշքի նման, տասնորդուած հայրենակորոյս հայութիւնը, անգամ մը եւս, առասպելական ուժ գտաւ իր մէջ, կրկին ոտքի կանգնելու, մահէն կեանք յաղթական երթով, փրկութեան հասնելու անզսպելի վճռակամութեամբ, ազգովին ընդառաջեց՝ Ազգընտիր Մենատըր՝ Արամ Մանուկեանի վճռորոշ կոչին, թէ՛ «Մենք երեւանը որեւէ գնով չենք դատարկի...»:

Արդարեւ, 28 Մայիս 1918 թուականի արշալոյսին, արդէն քանի մը օրերէ ի վեր՝ Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի մէջ, լինել-չլինելու հերոսական ճակատամարտերը մղող հայութիւնը, Սասունցի Դաւիթներու առասպելական խոյանքներով, կերտեց հայոց պատմութեան ամենավճռորոշ յաղթական հերոսամարտը:

Աշխարհի պատմութեան մէջ, հերոսամարտերը միշտ չէ, որ յաղթական աւարտի կը հասնին:

Եւ սակայն, Մայիս 28-ով խորհրդանշուող Սարդարապատի հերոսամարտը հասաւ իր յաղթական աւարտին, ամրագրելով հայութեան Յաւերժական երթը եւ անկախ գոյութիւնը ազգերու ընտանիքին մէջ, վեց դարերու գերութեան խաւար շրջանէ մը ետք:

Մեզ նախորդող սերունդները, մեր գոյութեան ամրակուր ազգային սահմանագծումը կատարեցին, թեկուզ պատմական Հայաստանի մէկ բեկորին՝ Արեւելեան Հայաստանի, Արարատեան դաշտին մէջ կերտեցին Առաջին Հանրապետութիւնը՝ կո-

րիզը, ապագային անպայման ընդարձակուելիք Միացեալ Հայաստանին:

Ու թանգարանային նմուշի համար ցուցադրելի վերջին հայու գանկը, դարձաւ խորհրդանիշը՝ հայ ազգի հրաշալի Յարութեան, դարձաւ Դրօշի տեր ազգ, բանաստեղծին բառերով անտելով աշխարհին՝

**«Արիւնից ծորած երիզ մի կարմիր,
Երկնքից պոկուած կտոր մի կապոյտ,
Հասուն հասկերի շող նարնջագոյն,
Եւ վեց դարերի խաւարի վրայ՝
Դրօշ եռագոյն»**

Սարդարապատի հերոսամարտի անմեռ ոգին, հակառակ անկախ պետականութեան կարճատեւ շրջանին՝ 1918-էն մինչեւ 1920 եւ համայնավար ապագգային ամբողջատիրական կարգերու 70 տարիներ տեւող սարսափներուն եւ հալածանքներուն՝ 1920-էն մինչեւ 1990,

Այսօր, անելի քան տասնամեակէ մ'ի վեր, վերանկախացած Հայաստանի գոյառումն է,

Արցախեան հայատարածքներ ազատագրող երկրորդ հերոսամարտէն, հայաշէն Շուշիի ազատագրումն էտք,

Ազգակերտումի յաղթական երթը կը շարունակուի, հակառակ Ազատութեան բազինին վառ պահպանման համար պահանջուող ազգային հաւաքական ծանրածանր զոհաբերող նահատակութեանց,

Ու անդարձօրէն, Յաղթական երթով՝ կը շարունակուի Սարդարապատեան ժողովրդային հերոսամարտի անմեռ ոգին:

Սարդարապատի մէջ տարուած տարրերային յաղթանակը, մեր գոյութեան եւ տակաւին մեր լինելութեան կառչած մնալու՝ մեր յանձնառու հաւատարմութիւնն է:

Սարդարապատը տակաւին՝

Մայիսեան իր հրաշալի խորհուրդով, հայութեան միասնութիւնը, հայու ազատասեր Ոգին, Մտքի հզօրութիւնը եւ բազուկի յաղթանակը կը խորհրդանշէ:

Հայու ազատատենչ անմեռ Ոգին, որ դարերու խորքէն, կու գայ մեզի մեր նախնիքներէն, իր հզօրութիւնը փաստած է աշխարհին, քանի մը պատմակերտ հերոսամարտերով՝ Աւարայրէն սկիզբ առած, Մայիսեան Սարդարապատի խոյանքով, եւ

Արցախի հողատարածքներու եւ Շուշիի անկարելի «թուացող» ազատագրումով,

Հայոց ռազմական ուժին յաղթական երթի կարմիր թելն է, եւ հայ ներկայ ու գալիք սերունդները՝ կոչուած են անսակարկ ունկնդրելու հայոց պատմութեան ազատութեան խոյանքէն գոյառնող անլռելի կանչին եւ կատարելու հայու ինքնութեան եւ ազնուականութեան պահպանման իրենց յանձնառութիւնը:

Մայիս 28-ով խորհրդանշուող եւ հայութեան անկախ պետականութեան կերտումի այս 85-րդ տարեդարձին, հայրենի հողին թէ հայ սփիւռքի տարածքին ապրող հայութեան մէջ պիտի պահեն խանդն ու թռիչքը, հայութեան Ազատատենչ Ոգին, Անսակարկ անձնագոհութիւնը, նահատակութեան կամաւոր պատրաստակամութիւնը եւ սքանչելի կարգապահութիւնը, այս բոլորը ի սպաս դնելու հայութեան կայացած պետականութեան հզօրացման:

Յանձնառու իւրաքանչիւր հայորդի, հարկ է, որ աչքի լոյսի պէս պահէ՝ Պատմութեան ակունքներէն ժառանգուած Ազատատենչութեան Ոգին եւ հայութիւնը յատկանշող անկողները:

Մայիսեան խորհուրդէն իր էութեան մէջ պիտի պահէ՝

Հիւլէ մը Զրիստափորի պատգամած «Յարատեւ կռիւն»,

Սուլթաններուն մահ սահմանող աննկուն կամքէն,

Պողպատեայ ջիղ մը՝ Արամի վճռակամութենէն,

Նշխար մը՝ Սարդացեալ Յիսուս՝ Չաւարեանի բարոյական մաքրութենէն, Առասպելական քաջութիւն՝ Սարերու անպարտելի հերոս՝ Գեորգ Չաւուշէն,

Հողատարածքներ հայակցող վճռակամութիւն՝

Ռուբէն փաշայի ռազմագետ հանճարէն,

«Դէպի Երկիր» հրաւեր անտող՝ մարգարեաշունչ Ակնունիէն,

Մայիս 28-ի խորհուրդով հարստացած, մեր հայրենաբաղձ աչքերը պէտք է վերստին ուղղենք՝ Արարատին, վերանկախացած Հայաստանին, հայադրոշմ Արցախին եւ ազատագրուած Շուշի ամրոցին,

Որպէսզի բոլորս պատրաստ ըլլանք «Դէպի Երկիր» վերադարձին, մեր բոլոր կարողականութիւնները ի սպաս դնելու՝ կայացած Հայաստանի հզօրացման:

Պէյրուբ
Հոկտ. 2003

ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՆԴԱՐՉ ՕՐԵՐԷՆ ՅԱՄԵՑՈՂ ՔԱՂՅՐ ՅՈՒՇԵՐ

Յայ ճեմարանի մեծ ընտանիքի յարկին տակ բոլորած եմ՝ դպրոցական կեանքիս քաղցրագույն վեց տարիները:

Բախտաւոր սերնդակիցներս եւ ես, մօտէն եւ ամէնօրեայ շփումներով վայելած ենք անկրկնելի դեմքերու՝ Լեւոն Շանթի, Կարօ Սասունիի, Գառնիկ Գիւզելեանի, Տիկին Գոհարի, Տիկին Եղանտի, Պր. Սուրեն Շանթի, Սիմոն Վրացեանի, Սըր Զեհեանի, Մուշեղ Իշխանի եւ Գառնիկ Բանեանի մտերմութիւնը, ու երբեմն ալ՝ կրած անոնց «կծու» այլ տեղին նշմարներու «խայթոց»-ները:

Այսօր, ճեմարանի հիմնադրութեան 75-ամեակին առիթով, կը փափաքիմ վկայել հոս, այդ օրերէն մնացած՝ փունջ մը յամեցող քաղցր ու գուարճալի յուշերու մասին:

1) Տիկին Եղանտ Աճեմեանի նշմարներէն.-

1952 թուական, Մայիս ամսուն, ֆրանսերէն լեզուի եւ գրականութեան ընթացիկ դասապահը կը սկսի:

Ներս կը մտնէ արագ քայլերով ներկայանալի կոկիկ ու ճաշակաւոր հագուածքով, միշտ երիտասարդ՝ Տիկ. Եղանտը:

Ան՝ որքան բծախնդիր ֆրանսերէն լեզուի ուսուցման եւ մաքուր գործածութեան, միաժամանակ կը հետաքրքրուէր նաեւ աշակերտներուս նիստ ու կացով, հանդերձանքի ընտրութեամբ, դեմքի եւ մազերու յարդարանքներով,

Ա՛յդ օրը, ան արագ զննողական ակնարկով կը մաղէ մեզ ու յանկարծ քմծիծաղով մը կը գոչէ, հայեացքը ուղղութեամբս սեւեռելով. «Ի՞նչ կը տեսնեմ, հոն հեռուն. սեւութիւն մը կ'ուրազծուի դեմքիդ հորիզոնին վրայ», որ թարգմանի՝ ֆրանսերէ-

նով... «Qu'est que je vois, là-bas au fond?, «Une noirceur s'estompe a l'horizon de votre visage».

Այդ օրերուն, որպէս դեմքի նորոյթի յարդարանք, պէիս եւ այծեմօրուք մը սկսեր էի աճեցնել՝ միամիտ սևափառութեամբ:

Ու դասարանին աղջիկ-տղայ բոլոր ընկերներս՝ կուշտ ու կուռ կը խնդան, ի լուր Տիկ. Եղանտի հաճելի նշմարին:

Կ'որոշեմ առաջին առիթով իսկ, ածիլել եւ անհետացնել դեմքիս ստուերացող պէիս ու մօրուքը, նմանօրինակ նշմարներու եւ հետագայ քաշքշուքներու զոհը չդառնալու անմեղ մտահոգութեամբ:

2) ճեմարանի առաւօտեան դասապահերը աղօթքով սկսելու անկիւնադարձային որոշումը.-

Ճեմարանի հիմնադիր Տնօրէն Լեւոն Շանթի մահէն ետք՝ 1950 թուականէն սկսեալ, Նոր տնօրէնը՝ Սիմոն Վրացեան, (1951-52 տարեշրջան), կ'որոշէ դպրոցական աշխատանքները՝ առաջին դասապահէն առաջ աղօթքով սկսիլ:

«Դպիրի» դերով աշակերտի մը փնտռտուքը եւ ձայնաւոր դպիր անձին նշանակումը՝ կը յանգի Գառնիկ Գիւզելեանի կողմէ տիտղոսուած՝ «Դամասկոսի Թեմին Առաջնորդ» անձիս գիտին:

Այնուհետեւ, ես պիտի ըլլայի ճեմարանի առաւօտեան դասապահերը ծաղկեցնող «տիրացուն»:

Սկիզբները՝ տատամսումով ու երկչոտ վարանումով, «Յայր Մեր»-ին կամ «Առաւօտ Լուսոյ»-ին ինծի ձայնակցելու սկսան՝ Նոր Սիսի «Աքսոր Գասարճեան» վարժարանէն, կամ՝ Նոր Մարաշի «Զառասնից Մանկանց»-էն, կամ «քաղաքի» Սուրբ Նշանէն ճեմարան յաճախող խայտաբղետ «դպիրները», որոնք կրօնական անհաւանականներու փորձ ունեցող ազգային հաստատութիւններէ ճեմարան կու գային:

Ճեմարանի աննման հսկիչ՝ Տիկ. Գոհարին, տուած զանգին ազդանշանով եւ սրահին կատարեալ լռութիւն պարտադրելէ ետք, ես բարձրաձայն կը սկսեի «Յայր Մեր» կամ «Առաւօտ լուսոյ» շարականները երգել՝ ըստ մուսաներուս օրուան ներշնչումին: Ապա, ինծի կը հետեւէին՝ Նահիրէն կամ Պուրճ Յամուտէն վկայեալ դպրաց դասի անդամները:

Ճեմարանէն ներս, 1951 թուականէն սկսեալ, պատանիի

հպարտութեամբ, կրօնաբոյր մթնոլորտի տարածման առաջին տիրացուն դարձայ՝ Լեւոն Շանթի կրօնական երաշտի ձիգ տարիներէն ետք...:

3) Հայ Ճեմարանի մշտարթուն եւ անկրկնելի հսկիչը՝ Տիկին Գոհար Յովհաննեսեանը.-

Երկա՛ր տարիներ, ամբողջական սուփրումով, եւ խստապահանջ հետեւողութեամբ՝ մնաց Ճեմարանի մշտարթուն ու ամենահաս ներկայութիւն հաստատող հսկիչը՝ հինցած, ծուռ կոթով զանգակը մի՛շտ աջ ձեռքին եւ հնամաշ կաշիէ պայուսակն ալ ձախ թելին:

1951 թուականին, առաւօտ մը, ժամը՝ 8:05-ին,

Աշակերտները արդէն մտած են իրենց դասարանները: Գ. դասարանի Արաբերէն լեզուի պահն է: Անթուան Պուսթանի հայասեր ուսուցիչը ներկայութիւն կը ստուգէ:

Հինգ վայրկեանի ուշացումով, հեւալով կը մագլցիմ Ճեմարան: Պուրճ Համուտէն ամէն օր՝ հանրակառքով կը հասնիմ Սուրբ Նշանի վերելքը՝ ու գրեթէ վազելով՝ կը մտնեմ դասարան: Մուտքին անակնկալօրէն՝ Տիկին Գոհարը արդէն դիմացս է եւ կ'ըսէ.

- «Այ տղայ, ուշացել ես, շո՛ւտ մտիր դասարան». ու ես հապճեպով, առաջ անցայ, ուշացումիս պատճառը՝ «մոլտալով...»

«Տիկին, հանրակառքին անիւը պայթեցաւ անակնկալօրէն»:

Ու կը մտնեմ դասարան, կարծելով, որ հարցը փակուած է ընդմիշտ...:

Հագիւ հինգ վայրկեան ետք, Տիկ. Գոհարը դուռը կը բանայ, ու բարկաճայթ... զիս դուրս «կը հրաւիրէ» եւ յանդիմանական շեշտով կ'ըսէ.-

«Այ տղայ, չե՛ս ամաչում, ի՞նչպէս թէ հանրակառքի անիւը պայթել է: Չկրկնուի. տէ հիմա մտիր դասարան».

Մինչեւ օրս, զոջումի խորունկ զգացում մը կը պատէ հոգիս, ամէն անգամ միջադէպը վերյիշելուս:

Խորապէս կը ցաւիմ Արշակ Յովհաննեսեան հանրային եւ կուսակցական գործիչին՝ սքանչելի կեանքի ընկերոջ՝ Տիկին Գոհարին, հանդէպ պատանիի անպատասխանատուութեամբ, անյարգալից վերաբերմունքիս համար: Վստահ, որ իր բարի հոգին՝ երկինքներէն անպայման ներած է մանկամիտ կատակը: Թող իր յիշատակը վառ մնայ մեր հոգիներուն մէջ:

4) Կարօ Սասունիի գրականութեան դասապահէն առաջ.-

1954 թուականին, Ապրիլեան օր մը: Բ. լսարան:

Կը սպասենք, որ գրականութեան մեր ուսուցիչը՝ Կարօ Սասունին, դասարան հասնի ծանրաքայլ:

Տակաւին չենք տեղաւորուած մեր գրասեղաններուն առջեւ, եւ սովորական իրարանցում մը կը յամենայ տակաւին:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի A.U.B.-ի Folk Dance Festival-ին մասնակցելիք Ճեմարանի պարի խումբին՝ պարակից ընկերուիս է՝ կլորիկ, ճերմակ դեմքով, կարմիր այտերով, միշտ ներողամիտ բարի ժպիտով Մարօ Գալէնտերեանը, (ամուսնացած, այժմ բնակութիւն հաստատած է Միացեալ Նահանգներ, Նիւ Ճըրզիի շրջան):

Մեր դասարանի մուտքի դռնէն սկսեալ, մէջքէն գրկած եմ Մարօն, եւ կ'ուղղուինք դէպի իր գրասեղանը:

Յանկարծ, դասարանի դրան մօտ կը յայտնուի «ամենայն տեղ միշտ ներկայ» Տիկին Գոհարը: Եկած է կարգի հրաւիրելու անկարգ տղաքը:

Չիս, Մարոյին գրկած վիճակի մէջ տեսնելով, խոժոռադեմ կը գոչէ.-

«Այ տղայ, չե՛ս ամաչում, ի՞նչ ես անում...»:

Ես, առանց երկար-բարակ մտածելու, կը պատասխանեմ.

«Տիկին, Մարոյին ոտքը կը ցաւի, այդ պատճառով զինք գրկած իր տեղը կը հասցնեմ:»

Անշուշտ գոհ չմնաց պատասխանես. մատը թափ տալով հեռացաւ դասարանէն, Կարօ Սասունի ուսուցիչին ժամանումին սպասելու խիստ հրահանգով:

5) Լեւոնիկ Շանթ կը կարդայ ընդհանուր պատմութեան գրքէն կատարած շրջանի մը ամփոփումը.-

1953 թուական: Գառնիկ Գիւզելեանի պատմութեան դասապահն է:

Պր. Գիւզելեանը՝ Պատմութեան հմուտ մասնագետ, Փրակայի համալսարանէն ընթացաւարտ:

Պատմաբան մեր ուսուցիչը Ապարանցի է ծագումով եւ «հիւմըրով» լեցուն անձնաւորութիւն՝ Պատմութեան չոր ու ցամաք նիւթի կողքին: Ան իր նուրբ խայթոցներով, շատ յաճախ պատմութեան դասանիւթին աշակերտները կը քաշքշէր եւ իր գոհերը կը դարձներ:

Ան պատկերաւոր հարուստ որակումներ «շնորհած» է իր «զոհ» աշակերտներուն եւ ըստ իր հայեցողութեան կը գործածէ դասապահերուն:

Օրինակներ՝ իր «շնորհած որակումներէն» - «Տիար Եպիսկոպոս», «Աբեղայ», «Դերասանուհի Օրիորդ», «Օրդ. Ծնծադիկ», «Ոսկեբերան» («Լռակեաց», բայց սովորող աշակերտին), «Յիմարների Իշխան», «Կռփամարտիկ», «Դերձակ պարոն», անարժան նկատուած ճեմարականին կը կոչէր՝ «Ապշարան»-ի թեկնածու, «Ապարանի Գոմէշ», «Օրդ. Զրիզանթէմ», «Սեդա» (Հին Աստուածներու հերոսուհի), «Դամասկոսի Թեմի Առաջնորդ» (անձիս տիտղոսը)՝ «Դամասկածին» ըլլալու հիմունքով:

Նոյն 1953 թ.ին օր մը: Միջնադարի Պատմութեան դասապահն է, օրուան զոհը՝ Լեւոնիկ Շանթ, ճեմարանի հիմնադիր՝ Լեւոն Շանթի թոռնիկը. պիտի ներկայացնէ ամփոփումը յանձնարարուած պարտականութեան մը՝ «Միջնադարի Աւատապետական Միստմը»:

Լեւոնիկը կը սկսի կարդալ՝ իր գրածը կարծես հապճեպով կատարուած թարգմանութիւնն է, ֆրանսերէն լեզուով հրատարակուած դասագրքէն. այս գիրքը յանձնարարուած էր Պարոն Գիւզելեանին կողմէ: Անմիջապէս աւելցնեմ, որ նոյնօրինակ գիրք մը հայերէնով հրապարակուած չէր տակաւին, եւ վերեւի յիշուած Միջնադարի Պատմութիւնը ֆրանսերէնով՝ թեւադրուած էր նոյն ինքն՝ Պարոն Գիւզելեանի կողմէ:

Գիւզելեանը՝ երբեմն-երբեմն քաջալերական թոնով կ'ըսէր շոյուած Լեւոնիկին. «Շարունակիր նոյն ոգով». Լեւոնիկը կը շարունակէ կարդալ ու կ'աւարտէ վերջապէս տկար հայերէն թարգմանութեամբ ներկայացուցած Միջնադարեան ամփոփագիրը:

Գիւզելեան, ակնարկելով կարդացուած գրութեան, սրամտօրէն կ'եզրակացնէ՝

«Ձեր հայերէնի ուսուցիչը մի ոտքով է կաղում, իսկ ես հայերէնը երկու ոտով...» ակնարկելով՝ Կ. Սասունիին, որուն անձին հանդէպ, մեզի անծանօթ պատճառներով հակառակութիւններ կը դրսեւորուէին երբեմն:

6) Յակոբ Կիրիսեանի նշանաւոր «Doutez պապա՛ doutez...»-ն

1953 Հայ Ճեմարանէն ներս, Գ. լսարանի ուսանող Յակոբ Կիրիսեանն է՝ Տիկ. Եղիանոսի արդարամտօրէն «գնահատուած» օրուան հերոսը: Այս մանրանկար դէպքը՝ բարձրագոյն դասարանի մէջ պատահած է, եւ սակայն կայծակի արագութեամբ շրջան ըրաւ Հայ Ճեմարանէն ներս:

Նիւթը՝ մաքուր ֆրանսերէնով Յակոբ Կիրիսեան ուսանողին ներկայացուցած ընթացիկ շարադրութիւնն է (Dissertation), եւ Տիկին Եղիանոսը տեղին կը կասկածի, որ յիշեալ շարադրութիւնը Կիրիսեանի կողմէ շարադրուած է, նկատի ունենալով՝ Յակոբին ֆրանսերէն լեզուին տկար ուսանող մը ըլլալուն փաստը:

Ուրեմն, Տիկին Եղիանոսը կը դժկամի իր նշանակած գնահատական նիշը փոխելու, եւ Կիրիսեանի ակնկալութիւնը՝ բարձր գնահատանիշ «շնորհելու» պահանջքը, բառացի կերպով իր կասկածանքը ձեւակերպելու ֆրանսերէնով հետեւեալ բառերով.

«Je doute que cette dissertation est le fruit de ton honnête travail...»

Տիկին Եղիանոսի կասկածները կրնային հիմնաւորուած ըլլալ, որովհետեւ մենք յաճախ կ'օգտագործէինք «Dissertation» քիչէ պատճեններու ֆրանսերէն հնատիպ գրքեր, զորս՝ ճարպիկ եւ հնարամիտ «գիտուն ուսանողներս» աժան գիներով կը գնէինք Պէյրութի «Կրան Թեաթր» սինեմայի շարքին կայք հաստատած հին սպառած գիրքեր վաճառող պատահական գրատուններէն:

Այնքան խօսքի եւ քաջքշուքի նիւթ կը դառնայ այս փոխասացութիւնը, ստիպելով՝ Յակոբ Կիրիսեանին ճարահատ բացականչելու...

- «Doutez պապա՛ doutez...»

1952 տարեշրջանին, ճեմարանի գրեթէ բոլոր դասարաններէն ներս՝ Տիկին Եղիանոսի այս դիպուկ նշմարը՝ շրջան կ'ընէր եւ ժպիտ կ'առթէր:

Տեղին է հոս յիշատակել Յակոբ Կիրիսեանի դասընկերներէն՝ Սարգիս Չէյթեանը (հասարակական ներհուն գործիչ եւ հայագետ), Գրիգոր Նգրուրեանը (տնօրէն, ուսուցիչ եւ գործիչ),

Գարմեն Պուտաքեան-Տեր Կարապետեանը (սուիդեալ մանկա-վարժ), Ֆիմի Աղասարգիսեանը, Նազելի Մալխասեանը, Յակոբ Արթինեանը (Վալանսի փոխ քաղաքապետ), Վարդիվառ Չոքաքլեանը, Մելինե Զիլինկիրեանը եւ ապագայի յարգուած սրտաբան բժիշկ Չաքար Մկրեանը, (որ դարձաւ նաեւ Պուրճ Զամուտի քաղաքապետ):

Վերոյիշեալ դասարանի ընթացաւարտները, եւ թէ անոնցմէ շատերուն վերապահուեցաւ դառնալու՝ ազգային-կուսակցական գործունեութիւն ծաւալող անձնաւորութիւններ, պատիւ բերելով զիրենք դաստիարակող անկրկնելի 75-ամեայ Զայ Ճեմարանին:

Պէյրուք
Յունիս 2005

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ. ՄԱՍ

- ՄՏԵՐԻՄ ԱՊՐՈՒՄՆԵՐ
- ԱՆՎԵՐՋԱԿԷՏ ՍԻՐՈՅ ԿԱՆՉ
- ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ
- ՉՄՐԱՆ ԲԱՅՈՒԱԾ՝ ՅԱԲԵՐԺԱՀՈՍ ՍԻՐՈՅ ԳԱՐՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բ. ՄԱՍԻ

Բանաստեղծություններուն վերնագիրները	Էջ
Նայուածքներու խորհուրդը	197
Իդձ առ Աստուած	199
Յաւերժահոս աղբիւրին մօտ	201
Առաջին հանդիպում	202
Երագային աղջկան գիւտը	203
Սպասում	205
Սեր անպարագիծ	207
Մայրամուտային երջանկութիւն	208
Ինչո՞ւ	210
Չեմ հաւատար	212
Ե՞րբ սորվեցար	213
Մշտարմատ ներկայութիւն	215
Հաշուեփակ	216
Գորով անբացատրելի	217
Անանձնական սիրոյ փնտռտուր	218

ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Նայուածքներ կան խոնա՛րի, խոհո՛ւն,
Ծով սրտերու երազ անհո՛ւն.
Նայուածքներ ալ հուր ու խայթող՝
Արհամարհանք միայն բաշխող:

Նայուածքներ կան զուարթ, ժպտուն,
Կեանք պարզեւող, դալար գարուն.
Նայուածքներ ալ վեհ ու վսե՛մ,
Կեանքի ձամբուղ՝ հաւատքի վէ՛մ:

Նայուածքներ կան արծուի ձախրանք,
Կապո՛յտ երազ, համակ գգուանք.
Նայուածքներ ալ շանթահա՛րող,
Նեւտի սլացք, չարն զգեւոնո՛ղ:

Նայուածքներ կան լա՛յն խաղա՛ղ ծով,
Կրնաս նաեւ դուն ապահով.
Նայուածքներ ալ խոր ու մթի՛ն,
Վարդ ժպիտներ հոն կը սպառին:

Նայուածքներ կան գթոտ, բա՛րի,
Ոսկի կամար ծիածանի.
Նայուածքներ ալ՝ յար ոստոստուն՝
Հեք կու տան մի՛շտ, մտքեր թաքուն:

Նայուածքներ կան խո՛ր ներշնչում,
Բախտի ուղին, սէ՛ր, նուիրո՛ւմ.
Նայուածքներ ալ հրապուրո՞ղ,
Ակնթարթով՝ բերդ գրաւող:

Նայուածքներ կան խորհրդատր,
Միրոյ խորան հաւատատր.
Նայուածքներ ալ անտակ անդունդ՝
Տեսքին որոնց՝ սիրտ կ'ելլէ թունդ:

Նայուածքներ կան գերդ հայելի,
Հայելով իսկ՝ մարդ կը զմայլի.
Նայուածքով մ'ալ անհո՛ւն անցաւ՝
Սիրտս դողով՝ գերի դարձաւ:

Պէլրուք
21/05/1955

ԻՂՉ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Կը բաղձայի որ Իտէալ Սէրը՝
Աղբիւր դառնար մշտահոս,
ու վարարէր անդադար,
Հասնէր՝ պապակ շրթներու,
Դպչէր՝ մոլոր սրտերու,
Անօթեան մարդերու.
Ըլլար՝ գետ մը մեղրածոր,
Ըլլար՝ Արփի կենսաւէտ,
Անպարագիծ Լոյսի ծով,
Լուսաշաւիղ առաւօտ,
Միտոնաբոյր ձանապարհ,
Երթ՝ երջանիկ գալիքի,
Կապոյտ երա՛գ եթերի,
Անմեղ խաղեր մանկական,
Մայրական գիրկ եղեմի.
Սէր անվհատ,
Զար ուժի դէմ լա՛յն վահան,
Ըլլար գօտի յաղթութեան,
Երգ՝ անխարդախ դաշինքի,
Ու ծիածան՝ հաշտութեան,
Սաղմոսագիրք՝ աղօթքի,
Անձառելի խորհուրդ Պատարագի,
Սրբագործող բալասան,
Անհատնո՛ւմ Սէր,
Անանձնական նուիրում,
Նախապայման՝
Մարդ էակի լինելութեան:

Պէլրուք
Յուլիս 2008

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սիլվայիս

Դեռ մինչեւ երէկ,
 Ներաշխարհով հակոտնեայ՝
 Մենք օտարներ անծանօթ.
 Դեռ մինչեւ երէկ՝
 Իրաքանչիւրը մենէ,
 Միսի տենդէն անտեղեակ,
 Սեւ ու ձերմակ ներկայէն՝
 Դէպի գալիքը ձգուող.
 Մայրուղիին վրայ լա՛յն՝
 Կարօտակէզ մատներով
 Ոսկի սափոր մը գրկած՝
 Յոյսի ու Լոյսի ծարաւով անհո՛ւն,
 Իրարու մօտ քայլ պահող՝
 Այլ իրարմէ աննշմար,
 Ուղեւորներ անտարբեր.
 Մենք ժամադիր տեսլահար՝
 Մեծ Սիրոյ մը անանուն...

* * *

Կը յիշե՞ս դո՛ւն իմ աղուո՛ր,
 Կիրակին այդ խնդութեան,
 Անջատուելով միւսներէն՝
 Դարձաւ խորան տօնական,
 Սիրոյ կապոյտ ծով,
 Ուր նաւեցին հեշտանքով՝
 Հոգիները մեր տենդահար:
 Կը վկայէ խենթ հոգիս,
 Թէ օտարներն երէկի,
 Եսակեդրո՛ն, անտարբեր,
 Նստած ահա իրար մօտ,
 Կարծես հինէն մտերիմ,
 Ու սրտակից ծանօթներ,
 Պիտի կերտեն ամէն օր՝
 Իրենց Սիրոյ բերդը նոր...:

Պէլրուօ՝ Կիրակի
19/05/1968

ԵՐԱՋԱՅԻՆ ԱՂՋԿԱՆ ԳԻՒՏԸ

Սիլվայիս

Կը բաղձայի հանդիպիլ,
 Դեղձան երկար մազերով երազային աղջկան,
 Որուն մատղաշ հոգին դեռ՝
 Կրած չըլլար ո՛չ մէկ վիշտ,
 Ու աչքերուն մէջ բարի,
 Սուգուած չըլլար չար նայուածք,
 Ոչ ալ միտքը յիշեր պարզ
 Նոյնիսկ պահ մը թախիծի.

Հանդիպէի ես անոր,
 Որուն հոգին ըլլար ծո՛վ,
 Թող յանձնէի ես անոր՝
 Իմ հոգիս ալ սիրավառ,
 Ու նաւէի ընդերկա՛ր արիւնքներէն մեղմօրօր,
 Մինչեւ հորիզոններն անանուն,
 Մինչեւ երազս կապոյտ,
 Ու հասնէի ապահով ծիածանէ խորանով
 Արշալուստող աշխարհիդ՝
 Գիտն ընելուս մանուկի պէս երջանիկ:

Կը բաղձայի հանդիպիլ՝
 Անթիծ սիրովն իր հարուստ
 Զինասպիտակ աղջկան,
 Որուն թող որ խնայուէր
 Սիրոյ թախիծ ու պատրանք,
 Երջանկութեան տառապանք:

Հանդիպէի ես անոր,
Որուն Սէրը՝
Որպէս նշխար ու գինի՝
Պատարագուէր ու ցօղուէր շիթ առ շիթ՝
Էութեանս մէջ արբշիռ...

Կը հաւատամ ես հիմա,
Որ դուն դարձար երջանկութիւնս անբաւ,
Կեանքիս իրա՛ւ հրաշքը.
Ու դուն պիտի տակաւին
Յոյսի նշոյլով՝ Սէրս գրաւես,
Մոայլ օրերուս թախիծը մեղմես,
Անբիծ Սիրովդ՝ հաւատքս կանգնես,
Ալեկոծ հոգոյս՝ Ծիածան կապես,
Ու անդեկ նաւս՝
Տուն առաջնորդես:

Պէյրութ
04/08/1968

ՄՊԱՍՈՒՄ

Մ-իճ

Խոռվայոյզ ովկէանն ինչպէս,
Ալիքներով փրփրադէզ.
Կը տատանէ նաւ մը հիմքէն,
Ընկղմելու զայն համօրէն,
Խորը մթին անդունդներուն՝
Իմ հոգիս ալ այն իրիկուն,
Կը ղայ սուգուիլ խորն աչքերուդ,
Աղամանդեայ վառ երազիս գիտն ընելու:

* * *

Գուցէ հարց տաս դուն հիմա,
Երբէ՞ն ի վեր, սա տղան,
Քու «խենթ» տղան,
Յանգեր իրար կը կապէ,
Ու իր սէրը յար կ'երգէ.
Որո՞ն արդեօք կը ցանկայ,
Որո՞ն արդեօք կ'ակնարկէ.
Ու կը տեսնեն ես ահա,
Կիտունը զոյգ յօնքերուդ,
Հարցականն այդ հիասքանչ,
Իմ զարմացած հրեշտակ.
Ինչո՞ւ նման արեւուն,
Այսքան մօտ ես, բայց հեռո՞ւն
Զէ՞ որ էիր բացուած վարդ,
Շունչիս տակ բոյրով զուարթ:
Տես, կը սպասեն ես տակաւին,
Խոցուած սրտով,
Բայց հաւատքով աներեր,
Անմար յոյսով գալիքին,

Բազուկներս լայն բացած՝
Քեզ գրկելու կարօտով.
Կը սպասեմ դեռ, իմ անգին:

* * *

Ձե՛ն ուզեք, որ ինձ համար,
Դառնաս անցորդ անտարբեր,
Ըլլաս՝ անշահ բարեկամ,
Եւ կամ անսիրտ մտերիմ,
Անկարեկից քոյր մ'օտար:

* * *

Կը սպասեմ, որ մնաս դո՛ւն,
Հուր աչքերով գեղուհիս,
Դառնամ շուքդ անբաժան,
Ու հետեւիմ քայլերուդ,
Ձգտիմ քեզի զերդ թիթեռ.
Ամէն դէմքի մէջ օտար՝
Տեսնեմ դէմքդ լուսավառ,
Ծաղիկներուն մէջ խոնարհ,
Մնաս նարկիզ անթառամ,
Կազմես կամար՝ ծիրանի,
Արփատրես՝ կենսուղիս,
Դառնա՛ս բախտս առյաւէտ:

Պէլրուֆ
Մայիս 1955

ՄԷՐ ԱՆՊԱՐԱԳԻԾ

Ի՞նչպէս լուծեմ գաղտնիքդ խո՛ր,
Վտիտ մարմնիդ մէջ արմատակալ,
Անչափելի, աննիւթական, բարի հոգիդ.
Խորհուրդ անսպառ՝ մոլորեալ մտքի,
Սրտակից ընկեր՝ ուղեկորոյս ձամբորդի.
Ի՞նչպէս ըմպեմ անյագօրէն՝

 Լոյս ակունքէդ գեղաչուի,
Ու տիրանամ՝ ծով հոգիիդ:
Մէ՛ր առաջին,
Մէ՛ր անսահման ու մշտավառ,
Պիտո՛ գովերգեմ քեզ անդադար.
Մինչեւ օրերս վերջին...
Կը փնտռեմ քեզ, երբ ներկայ չես,
Կը ձառագայթեմ՝ երբ յայտնուիս,
Տխուր եմ միշտ՝ երբ հեռու ես.
Կը կեղծեմ, որ տխուր եմ
Երբ ապահով շնչիս մօտն ես.
Անսանձ կրքով կը զայրանամ՝
Երբ անձիդ շուրջ պտոյտ կու տան:
Այս ի՞նչ խորհուրդ անմեկնելի,
Այս ի՞նչ գաղտնիք անլուծելի:
Հոգույս խորը «խենթ պարմանի»՝
Անձդ միայն դեռ տեղ ունի...:

Պէլրուֆ

ՄԱՅՐԱՄՈՒՏԱՅԻՆ ԵՐՉԱՆԿՈՒԹԻՒՆ

Ա-ԻԳ

Սարալանջի գիւղէն վար,
Պուրակներէն ալ անդին, ոսկեփոշի շափղէն,
Նոճիները ձեղքելով
Դէպի երկինք կ'աշտանակուին՝
Խուրձ մը ժայռեր մեկուսի...

Այնտեղ կու գան կը հանգչին,
Ջոյգ մը տատրակ սիրավառ.
Ու սեպածու բարձունքէն,
Մեկուսացած աշխարհէն,
Կարծես կ'իշխեն լա՛յն հովտին,
Արծաթերիզ գետակին:

Հոն՝ զեփիտը մեղմանուշ,
Եթերային շղարշով՝
Կը համբուրէ ջերմագին,
Ճակատն անոնց քրտնաթոր:

Մայրամուտի շողերով արբշիռ,
Յափշտակեալ զոյգն այդ խենթ,
Վերացումով կը դիտեն,
Հորիզոնի բոցավառուող գոյներուն՝
Շողարձակուած հրաշքը:
Ու ծիրանավառ բնութեան անձեռակերտ խորանին դէմ,
Ջոյգն այդ պարմանի՝
Կուխտեն սէր անանձնական:

Այդպէս, երկա՛ր կը մնան,
Երազ աղջիկն ու տղան,
Ու մանկունակ վերացումով՝
Երջանկութեամբ կ'արբենան:

Յանկարծ թիթեռ մը նաշխուն,
Երազ գոյն-գոյն թերթերով,
Կեանքէն արբշիռ ու գինով՝
Անոնց շուրջը կը պարէ,
Եթերին մէջ կը լողայ,
Նեկտար ու լոյս կը ցողէ,
Ու կը դառնայ շարունակ:

Թիթեռն աղուոր ու պզտիկ,
Գոյն-գոյն թերթերով նաշխուն,
Կեանքէն յոգնած, պարտասուն,
Մայրամուտի շողերով՝
Կ'իջնէ թեթեւ ու յուշիկ,
Ու կը հանգչի անոնց քով:

- Թիթեռն ի՞նչ է հարց կու տաս,
Ու երազուն հայեացքով՝
Աչքերուս մէջ կը լողաս...

Երա՛զ աղջիկ,
Թիթեռն այդ խաբուսիկ,
Նաշխուն գոյն-գոյն թերթերով,
Մեր հոգին է տեսլահար
Պատրանքներու սիրահար,
Երջանկութեան կարօտով...

Մեր կեանքն ալ աւա՛ղ,
Շատ է նման թիթեռնիկին անիրական,
Որ անհունի թոհչքին
Դեռ չլարուած լիովին՝
Կը վատի իր մեծ Սէրէն՝
Բորբ արեւի հպումէն...:
Ծանր բեռան տակ կեանքին,
Չեմ ընկճուած տակաւին...
Թիթեռ մեղիք, ի՛մ անգին,
Տե՛ս, կը սպասես, անձկագին...

Սուր Էլ-Ղարպ, Շուֆ,
10/08/1967

ԻՆՉՈՒ

Տխոր էի այդ գիշեր,
Մենութեանը հետ հոգոյս.
Զրուցեցի մտերիմ
Մօտն ամրափակ դարպասին արտիդ.
Հարց կու տայի ինքզինքիս,
Թէ ի՞նչն էր, որ կը ստիպէր՝
Փնտռել քեզ խօլաբար՝
Փնտռել քեզ մոլեգի՛ն,
Առանց երբեք ըղձալու՝
Ենթարկելու քեզ քմայքներու յորձանքին:

Ինչո՞ւ կը զգամ որ մօտս ես,
Երբ մարմնովին բացակայ ես,
Ինչո՞ւ բարի աչքերով՝
լուս կը դիտես զիս երկա՛ր,
Ինչո՞ւ փայլքն այդ չարութեան՝
մերկացնել կ'աշխատի
խելար հոգիս իմ յոգնած...
Ինչո՞ւ յաճախ կարօտն ունիմ
քաղցր բոյրիդ հեշտագին,

Ինչո՞ւ բարկութիւն կեղծել,
Ցաւցնելու խենթ փափաք:
Մանուկներն այս խելար՝
Իրարու մօտ հեզ կ'ըլլան,
Կանմեղանան,
կը վերանա՛ն...
Երէկ օտար իրարու,
Այսօր սակայն՝
Հարազատի պէս կը զգան.
Զիրար «կ'ատեն»,
Բայց իրարու հետ հաշտ կ'ըլլան.
Իրարու նկար չեն ձօնած՝

Բայց զիրար գոց աչքերով կը տեսնեն:
Աչքերուն մէջ իրենց ծով,
Դրոշմած են առյաւէտ՝
Զուարթ մանկութիւնն իրենց անդարձ,
Պահ մ'հեշտանքի՝ ներկայէն:

* * *

Կոտրած սրտով կը փարին իրարու.
Զայնի երանգներով
զիրար կը կանչեն,
Երբ իրարու պատմելիք իսկ չունենան:

Գալիքի կորսուած օրերուն ահէն՝
Տարի-խօսքերով կը յագեցան:
Առանց խոստումի՝ հաւատարիմ իրարու,
Առանց երդումի՝ զօրակցած են,
Առանց վկայի՝ վստահած են իրարու,
Առանց «նիւթի հրաշքին»՝
Շահած են Ապագան.

Որովհետեւ՝
Կը հաւատան,
Ու խո՛ր կը զգան,
Թէ անհունին մէջ ժամանակին,
Ժամեր, օրեր, տարիներ, կ'անհետանան,
Կը կորսուին, տեղ չունին.
Ու նայուածք մը յուսալի,
Կարեկցանքի խօսք մը նոր,
Ու ժպիտ մը արփաւէտ,
Բաւարար են առյաւէտ,
Ակօսելու ամէն օր,
Անհունին մէջ ուղի մը նո՛ր.
Թող նաւարկեն հոն անդադար՝
Սա «մեծ տղան» մանկացած,
Ու հոգին այդ պարմանի:

Պէլյուք
25/9/1982

ՉԵՄ ՀԱՒԱՏԱՐ

Քոյր հոգիս,
Զեմ հաւատար մնաք բարովիդ.
Գիտեմ, պիտի գայ օր մը սակայն,
Պիտ հանդիպինք մենք կրկին,
Աշխարհին մէջ այս ովկէան,
Քաղաքի մը անծանօթ՝
 թաց մայթերու երկայնքին,
Պատահական օտարուհիի մը դէմքին
Մշտաժպիտ զոյգ աչքերդ փայեցան...
Ու նայուածքդ հրալի՝ լուսաւորեց հոգւոյս
 խաւարը մթին:
Հանդիպեցանք մենք կրկին... ու՝ անխօս,
 առանց նախաբանի,
Հին անմեռ մեր սիրովը գեղուն՝ զուարթուններն երէկի,
Լուռ փարեցանք իրարու:
Թաց մայթերու երկայնքին,
Երէկի անփոյթ ու անմեղ մանուկները՝
Յառաջացան յամբաբայլ:

Անկրկնելի այդ պահի յաճախանքով՝
Մինակ է հոգիս պեկոծ.
Եւ սակայն՝ կը խայտայ ուրախութենէն.
Դո՛ւն, քոյր հոգի,
Դո՛ւն փարոս լուսատու,
Բախտի ժպիտ,
Բանալի փակ դռներու,
Հաւատարիմ ու բարի՝
Զեմ հաւատար մնաք բարովիդ,
Գիտեմ, որ ետ պիտի գաս...
Ջի, չեմ ուզեր տակաւին,
Զմեռ տեսնել՝ օրերուս մէջ գարունի,
Զեմ ուզեր, որ մնաս դո՛ւն
Անհաս երազ աչքերուս:
Աշխարհը ես կ'ընկալեմ՝
Թաց աչքերուդ ծիածանին ընդմէջէն:

Ատոր համար է ո՛վ քոյր,
Զեմ հաւատար մնաք բարովիդ:

Պէլյուրթ
Հոկտ. 1984

Ե՞ՐԲ ՍՈՐՎԵՑԱՐ

Ե՞րբ սորվեցար սիրելիս,
Սիրել այրելով.
Ռ՛վ սորվեցուց արուեստն այդ՝ կեղծ,
 սպաննիչ,

Սիրել՝ խոցելով.
Ինչո՞ւ ժպիտով լաց տալ կը սիրես.
Մեղք է ըսիր սա տղուն,
Մանուկ մէ՛ դեռ, անմեղ, անմխիթար,
Արեւի պէս կը սպառի:

Թէ՛ որ օր մը զիս փնտռես վերստին,
Սրտիդ հարցուր, թէ՛ ո՞ր եմ ես.
Պիտի գտնես զիս անվարան՝
Աչքերուն մէջ անցորդներուն անծանօթ.
Պիտ պատկերես դէմքս տխուր,
Երբ պարտասած քունը իջնէ աչքերուդ,
Պիտի լսես ձայնս հեշտալուր՝
Դէմքդ շոյող զերդ զեփիւռ:
Պիտի լսես ձայնս հզօր՝
Կայծակներու որոտումին ընդմէջէն,
Պիտի տեսնես զիս՝
Փոքրիկ մարմնիդ քովն ի վեր,
Շուքիդ հետ նոյնացած,
Քայլերուդ հետքերով:

Թէ՛ որ օր մը զիս փնտռես վերստին,
Սրտիդ հարցուր, թէ՛ ո՞ր եմ ես.
Խոցուած սիրտս ասիերուս սեղմած՝
Ցախս դարման կը փնտռեմ,
Աշխարհն ամբողջ ինձ նեղ կու գայ,
Կուրծքդ ինձի լա՛յն բաց ո՛վ քոյր.
Թէ՛ որ օր մը սիրել ուզես,
Սրտիդ հարցուր թէ՛ սէրն ի՞նչ է.

Ու մի մոռնար՝ անանձնական,
Աննիթական Սիրոյ մասին.
Սրտիդ հարցուր սիրոյս մասին,
Ու իմացիր իմ անգին.-
Սիրող հոգին՝ անմեղ յոյս է,
Ե՛ս չ՛ունենար, կը համբերէ,
Կը տառապի, ներել գիտէ,
Սիրող հոգին՝ անեզր ծով է,
Լոյսի սիւն է,
Կեանքի նոր ուղի է:

Սիրող հոգին կը համբուրեն,
Աչքի լոյսի պէս կը փայփայեն,
Հոգիի խորը՝ կը պահպանեն,
Սիրոյ բերդին մէջ կը բանտարկեն:

Պէլրուք
1987

ՄՇՏԱՐՄԱՏ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Ս-ի 6

Դեռ երէկ էր.
Կը յիշե՛ս դուն,
Մշտաժպիտ իմ գարուն,
Անօթխած՝ այլ ինքնաբեր
Սեւ աչքերով վառվռուն,
Կեանքի ցաւին անտեղեակ,
Խոցեալ սրտի բալասան,
Մաքուր հոգիդ բերին հոս.
Բերողներէն եւ ո՛չ ոք,
Պարզ ու մեկին չգիտցաւ,
Թէ գանձ մը արդէն կը յանձնէր,
Գանձ մ'անգին՝
Փոքր մարմնին մէջ ձկուն,
Աշխարհ մ'ամբողջ պարփակող.

Փոքր մարմնին այդ մշտաբթուն՝
Ծիլ արձակեց, ուրձացաւ,
Լոյսը ընպէց անյագուրդ,
Մտքով պեղեց՝ հանքեր նոր.
Աշխարհ մ'արժող այդ հոգին՝
Անօրինակ կը սիրէ,
Զինք սիրողին միայն յատուկ՝
Խորան կը կանգնէ...
Ու ամրակուտ իր հոգին՝
Անոր համար միշտ բաց է...
Երկու հոգի մանկունակ,
Սիրտէ սիրտ կը նաւեն,
Գտնելու հոն նուիրում,
Անանձնական անկեղծ Մէր,
Ու բանալին Յաղթութեան:
Դեռ երէկ էր...
Կը յիշե՛ս մշտաժպիտ վառ գարուն:

Պէլրուք
13/11/1981

ՀԱՇՈՒԵՓԱԿ

Հաշուեփակի ժամն է՝ բաժանումի տազնապով:
- Յտեսութիւն.
Յուսամ հաւաքած ես բոլոր իրերդ,
 ու բան չես մոռցած.
- Շատ լաւ, գնա ուրեմն՝ ինձմէ հեռու,
Այ իրարու բան չունինք յուշելու.
- Կրնաս մեկնիլ:
Եւ սակայն, սպասէ խենթ հոգիս.
Կանձրեւէ դուրսը,
Սպասէ, որ դադրի երկնքի յորդ արցունքը:
Կոճկէ վերարկուդ, որ չմսիս,
Յուրտ է դուրսը,
Ու ձմեռն արդէն իջաւ հոգիիս...
Գնա՛, ոչ մէկ յուշ քեզմէ չմնայ մօտս...
Հաւաքեցի՛ր նկարներուդ ալպոմը.
Մի մոռնար նամակներուդ տրցակները:
Այ ի՞նչ մնաց ինձի քեզմէ, ըսէ քոյր.
Անմխիթար ու խոցուած սիրտս լոկ,
Որ կը ցաւի հեռացող քայլերուդ կշռոյթով.
Եւ սակայն զգոյշ.
Պէտք չէ արտասուեմք,
Խենթ բան մը պիտի ըլլար այդ:
Հապա ի՞նչպէս պիտի յաղթէինք
 բաժանումի ոտխիւն,
Ի՞նչպէս պիտի պահէինք
Մեր անխառն բարեկամութեան
 անձեռակերտ խորանը.
Ձէ՞ որ ժամանակի մաշումին դիմաց՝
Անոխակալ ոգիով յաղթանակ պիտի գոչերգէինք:
Գնա՛ քոյր, գնա՛ հոգիս,
Ես մեկնումիդ չեմ հաւատար...

Պէյրութ
Հոկտ. 1985

ԳՈՐՈՎ ԱՆԲԱՅԱՏՐԵԼԻ

Անանձնական սիրով մը խո՛ր
Կը փնտռենք մենք զիրար,
Ու կը ցաւինք միասին.
Սակայն խորքին մէջ՝
Քիչ կը նմանինք իրարու.
Բաւ է վէճ մը անշահ,
Խօսք մը դատարկ, աննշան,
Ու ահա խոր վիհեր՝
Կը գոյանան մեր միջեւ:
Այդ այն պահն է,
Երբ մենք յուսահատ՝
Կորսուած կը զգանք մենք զմեզ:
Անհաս երջանկութեան
Առթած ցաւն է այդ,
Երբ թաւշային շոյանքն է բացակայ՝
Օտարներ ենք արդէն իրարու:
Շուտով սակայն՝ որպէս բարի հոգիներ,
Կը մոռնանք հնչած ցաւառիթ խօսքերը սին,
Ու ժպիտով մանկական՝
Կը խոստանանք իրարու՝
Հազարերորդ կրկնումով արդէն շահուած՝
Անանձնական մեր խոր հոգեկցութիւնը:

1983

ԱՆԱՆՉՆԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՓՆՏՈՏՈՒՔ

Տարիներու խօլ թաւալքը կեցնող,
Արեւներուն վարագոյր քաշող,
Կեանքս ու հոգիս լեցնող՝
Անհուն սէր մը կ'ուզեմ ես:

Իմ սիրոյս չափ հզօր,
Սիրոյս չափ վսեմ,
Ինձի պէս սիրող,
Ու կեանք մը տետող՝
Սիրող հոգի մը կը փնտռեմ...
Աչքերով խօսող սէր,
Արցունքներ սրբող ձեռ,
Ցաւերու դարման,
Հոգիներու՝ բալասան,
Թաքուն մտքեր մեկնող,
Ուրախութիւն սերմանող
Սիրող հոգի մը կ'ուզեմ ես,
Որ իմ կեանքիս նոր հուն տայ,
Նոր իմաստ, ու նոր յոյս,
Ապագայի անմար լոյս...

Բարի հոգիս, պարզ ու հեզ՝
Դժուար է ապրիլ առանց քեզ:
Դուն էիր, ու կը մնաս՝
Երազս անդարձ, իմ ուրախ ներկաս,
Պայծառ ապագաս:

Յոյսի կամար,
Հաւատքի սիւն,
Լոյսի խորան,
Գարնան ծաղիկ բարունակ,
Բացուիր դալար իմ կրծքին:

29/06/1984

Գրաշարութիւն՝
ՄԻՍՄ ԱՒԱԳԵԱՆ-ԳԱՐԱՕՂԼԱՆԵԱՆ

Էջադրում՝
ԱՆԻ ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ-ՍԱՐԳԻՍԵԱՆ

Վերստուգող սրբագրիչներ՝
**ՆԱԶԵԼԻ ԱՒԱԳԵԱՆ
ՍԻՐՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ-ՀԱՃԷԹԵԱՆ**

Կողքի ձեւաւորում՝
ՍԱԳՕ ԳԱՍԱՊԵԱՆ

